Ջաննի Ռոդարի

Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում

Հեքիաթ-վիպակ

Ռուսերենից թարգմանեց՝ Սաղաթել Հարությունյանը

Նկարիչ՝ Խորեն Հակոբյան

Բովանդակություն

Գլուխ առաջին 3
Գլուխ երկրորդ 6
Գլուխ երրորդ 8
Գլուխ չորրորդ 13
Գլուխ հինգերորդ 16
Գլուխ վեցերորդ 20
Գլուխ յոթերորդ 23
Գլուխ ութերորդ 28
Գլուխ իններորդ 30
Գլուխ տասներորդ 34
Գլուխ տասնմեկերորդ 38
Գլուխ տասներկուերորդ 43
Գլուխ տասներեքերորդ 46
Գլուխ տասնչորսերորդ 50
Գլուխ տասնհինգերորդ 57
Գլուխ տասնվեցերորդ 60
Գլուխ տասնյոթերորդ 64
Գլուխ տասնութերորդ 68
Գլուխ տասնիններորդ 72
Գլուխ քսաներորդ 76
Գլուխ քսանմեկերորդ 80

Գլուխ առաջին

Բավական է Ջելսոմինոն բերանը բացի,
գնդակը իսկույն դարպասով կանցնի:

Այս պատմությունն ինձ արել է ինքը՝ Ջելսոմինոն: Ճիշտ է, ես ականջներս կես կիլո բամբակ էի խցկել, բայց քիչ մնաց խլանայի: Բանն այն է, որ Ջելսոմինոն շատ բարձր ձայն ունի և նույնիսկ երբ կիսաձայն է խոսում, նրան լսում են ռեակտիվ ինքնաթիռների ուղևորները: Իսկ հայտնի է, որ ռեակտիվ ինքնաթիռները ծովի մակերևույթից ու Ջելսոմինոյի գլխից տասը հազար մետր բարձր են թռչում:

Հիմա Ջելսոմինոն հռչակավոր տենոր է: Նա հայտնի է ամեն տեղ, սկսած հյուսիսային բևեռից մինչև հարավայինը: Դերասան դառնալով, նա իր համար ընտրեց ավելի հնչեղ ու թերևս փոքր-ինչ պերճաշուք անուն, որը ես ձեզ չեմ ասի, քանի որ մի քանի հարյուր անգամ կարդացած կլինեք թերթերում:

Երեխա ժամանակ նրան Ջելսոմինո էին ասում, այսինքն՝ Հասմիկ, և այդ անունով էլ նա կմնա մեր պատմության մեջ:

Այսպես, ուրեմն, կար-չկար մի սովորական տղա կար: Թերևս նրա հասակը մյուս տղաներից կարճ լիներ, բայց ձայնը զարմանալի ուժեղ էր: Այդ բանը երևաց, երբ նա առաջին անգամ բերանը բացեց:

Երբ Ջելսոմինոն ծնվեց, իսկ այդ տեղի ունեցավ կեսգիշերին, բոլոր համագյուղացիները տեղերից վեր թռան, կարծելով թե գործարանի շչակի ձայն են լսում: Բայց դա բոլորովին էլ շչակ չէր, այլ Ջելսոմինոն էր լալիս: Նա, ինչպես անում են բոլոր նոր ծնված երեխաները, ուղղակի իր ձայնն էր փորձում: Բարեբախտաբար, շուտով սովորեց իրիկվանից մինչև առավոտ քնել, ինչպես անում են բոլոր կարգին մարդիկ, բացի ժուռնալիստներից ու գիշերային պահակներից: Հետո նա իր լացն սկսում էր ուղիղ առավոտյան ժամը 7-ին, հենց այն ժամանակ, երբ մարդկանց պետք էր լինում աշխատանքի գնալու համար արթնանալ: Գործարանային շչակներն այլևս պետք չէին և շուտով անգործությունից ժանգոտվեցին:

Երբ լրացավ Ջելսոմինոյի վեց տարին, նա գնաց դպրոց: Ներկա-բացակայի ժամանակ ուսուցիչը հասավ «Ջ» տառին և կարդաց նրա անունը.

- Ջելսոմինո:

- Ներկա, - ուրախ պատասխանեց նոր աշակերտը:

Եվ հանկարծ մի դղրդյուն լսվեց: Գրատախտակը ջարդ ու փշուր եղավ ու թափվեց ցած:

- Ո՞վ քարով խփեց գրատախտակին, - ձեռքը քանոնին պարզելով՝ խստորեն ասաց ուսուցիչը:

Բոլորը լուռ էին:

- Լավ, սկսենք ցուցակով, - ասաց ուսուցիչը: - Այդ դո՞ւ քար գցեցիր, - հերթով հարցնում էր նա ամեն մի աշակերտի:

- Ես չէի, ես չէի, - պատասխանում էին վախեցած տղաները:

Երբ հերթը հասավ Ջելսոմինոյին, նա ևս վեր կացավ և պատասխանեց.

- Այդ ես չէի, պարոն ու... - բայց նա չհասցրեց արտասանել «ուսուցիչ» բառը, պատուհանի ապակիները ուժեղ զնգոցով թափվեցին հատակին:

Այս անգամ ուսուցիչն ուշադիր հետևում էր դասարանին և տեսավ, որ իր քառասուն աշակերտներից և ոչ մեկը պարսատիկով քար չի գցում: «Երևի պատուհանը ջարդեցին փողոցից, - մտածեց ուսուցիչը, - երևի դա մեկնումեկն է այն տղաներից, որոնք դպրոց գնալու փոխարեն թռչունների բներ են քանդում: Սպասիր, կբռնեմ դրան և ականջից քարշ կտամ ոստիկանատուն»:

Այդ առավոտ ամեն ինչ այսքանով էլ ավարտվեց: Հաջորդ օրը ուսուցիչը նորից սկսեց ներկաբացական և նորից հասավ Ջելսոմինոյի անվանը:
- Այստեղ եմ, - պատասխանեց մեր հերոսը՝ հպարտ, որ դպրոցական է դարձել:
«Շրը՛խկ-շը՛խկ-շը՛խկ», - անմիջապես արձագանքեց պատուհանը: Ընդամենը կես ժամ առաջ դրված ապակիները թափվեցին փողոց:
- Տարօրինակ բան է, - ասաց ուսուցիչը, - դժբախտությունը պատահում է այն ժամանակ, երբ հասնում եմ քո անվանը: Հա՛... ամեն ինչ հասկանալի է. տղաս, դու չափազանց բարձր ձայն ունես: Քո ձայնից օդը տատանվում է, ինչպես պտտահողմի ժամանակ: Այսօրվանից դու միայն կիսաձայն կխոսես, թե չէ դպրոցն ու մեր ամբողջ գյուղը ավերակ կդառնա քո պատճառով: Ուրեմն՝ այսպես պայմանավորվեցի՞նք:
Ամոթից ու հուզմունքից կարմրելով, Ջելսոմինոն փորձեց առարկել:
- Սինյոր ուսուցիչ, ախր ես չէի...
- Շրը՛խկ, շը՛խկ, շը՛խկ... - պատասխանեց նրան նոր գրատախտակը, որ քիչ առաջ դպրոցի պահակն էր խանութից բերել:
- Ահա և քեզ ապացույց, - ասաց ուսուցիչը:
Սակայն նկատելով, որ Ջելսոմինոյի աչքերից արցունք է հոսում, ելավ տեղից, մոտեցավ տղային, քնքշորեն շոյեց նրա գլուխը:
- Ուշադիր լսիր ինձ, տղաս, քո ձայնը կարող է քեզ կամ շատ դժբախտություն բերել, կամ մեծ փառք: Իսկ հիմա լավ կլինի, որ դու հնարավորին չափ քիչ օգտվես նրանից: Բացի այդ, բոլորին հայտնի է, որ խոսքն արծաթ է, իսկ լռությունը՝ ոսկի:
Այդ օրվանից Ջելսոմինոյի համար դժոխային տանջանքներ սկսվեցին: Որպեսզի նոր դժբախտությունների առիթ չտա, նա դպրոցում բերանը պինդ փակում էր թաշկինակով: Չնայած դրան, նրա ձայնն այնքան բարձր էր հնչում, որ ընկերներն ստիպված մատներով ծածկում էին ականջները: Ուսուցիչն աշխատում էր որքան կարելի է քիչ դաս հարցնել նրան: Ճիշտ է, պիտի ասել, Ջելսոմինոն օրինակելի աշակերտ էր համարվում, և ուսուցիչը վստահ էր, որ նա միշտ էլ կարող է ճիշտ պատասխան տալ:
Տանը առաջին դեպքից հետո (նա սեղանի մոտ սկսեց պատմել դպրոցում պատահածի մասին, և տասներկու բաժակներն էլ փշուր-փշուր եղան) նրան խստիվ արգելել էին բերանը բաց անել:
Սիրտը հանգստացնելու համար նա ստիպված հեռանում էր գյուղից, գնում էր անտառ, լճի ափը կամ դաշտ: Երբ համոզվում էր, որ մենակ է և բավական հեռու իր համագյուղացիների պատուհաններից, պառկում էր հողին ու սկսում երգել: Մի քանի րոպե հետո հողն սկսում էր եփ գալ. խլուրդները, թրթուրները, մրջյուններն ու մյուս գետնաբնակները դուրս էին գալիս հողի տակից և կիլոմետրերով հեռու փախչում, կարծելով, թե երկրաշարժ է սկսվում:
Միայն մի անգամ Ջելսոմինոն մոռացավ իր սովորական զգուշությունը: Դա տեղի ունեցավ կիրակի օրը, ստադիոնում, ֆուտբոլի վճռական հանդիպման ժամանակ:
Ջելսոմինոն մոլի ֆուտբոլասեր չէր, բայց կամաց-կամաց խաղը գրավեց նրան: Եվ ահա ֆուտբոլասերների խրախուսական բացականչություններից ոգևորված, նրանց գյուղի թիմն անցավ հարձակման: (Ես չգիտեմ, թե ինչ է նշանակում «անցավ հարձակման», քանի որ ֆուտբոլից ոչինչ չեմ հասկանում, բայց այս արտահայտությունն իր պատմության մեջ օգտագործեց Ջելսոմինոն, և ես համոզված եմ, որ դուք կհասկանաք. Չէ՞ որ սպորտային թերթեր կարդում եք):
- Տվե՛ք, տվե՛ք, - գոռում էին ֆուտբոլասերները:
- Տվե՛ք, - ամբողջ ձայնով գոռաց Ջելսոմինոն:
Հենց այդ ժամանակ աջ հարձակվողը փոխանցում Էր կատարում դեպի կենտրոնական հարձակվողը, բայց գնդակը կես ճանապարհից ուղղությունը փոխեց և, ինչ-որ անհայտ ուժից թափ առնելով, դարպասապահի ոտքերի արանքով մտավ հակառակորդի դարպասը:
- Գո՛լ:

- Այ սա հարված էր, - լսվեց մեկի ձայնը, - տեսաք, թե ինչպես գնդակը կտրեց, և ինչքան դիպուկ էր, ամեն ինչ միլիմետրի ճշտությամբ հաշված: Ուղղակի ոսկի ոտքեր ունի:
Բայց Ջելսոմինոն ուշքի գալով իսկույն ամեն ինչ հասկացավ:
«Կասկած չկա, - մտածեց նա, - այդ գոլը ես իմ ձայնով խփեցի: Ստիպված պիտի լռեմ, թե չէ էլ ի՞նչ սպորտ: Որպեսզի հաշիվը հավասարեցնեմ, ինչ արած, ստիպված պիտի մի գոլ էլ մերոնց խփեմ»:
Երկրորդ խաղակեսին հարմար առիթ եղավ: Հակառակորդի թիմը նետվեց հարձակման:
Ջելսոմինոն ճչաց, և գնդակը մտավ նրա համագյուղացիների դարպասը: Պարզ է, որ այդ պահին նրա սրտից արյուն էր կաթում: Նույնիսկ շատ տարիներ հետո, երբ ինձ այդ մասին պատմում էր, Ջելսոմինոն ասաց.
- Ես ավելի շուտ մատս կտրել կտայի, քան կխփեի այդ գոլը, բայց ինչ կարող ես անել, ուզեի-չուզեի պետք է խփեի:
Այո, նրա փոխարեն մեկ ուրիշը իր սիրելի թիմի օգտին կխաղար, բայց Ջելսոմինոն ազնիվ էր, անկեղծ, աղբյուրի պարզ ջրի նման մաքուր և նման բան չէր անի: Այսպես էլ նա մեծացավ, դարձավ պատանի: Ճիշտն ասած, նա այնքան էլ բարձրահասակ չէր, ավելի շուտ կարճահասակ էր և ավելի շուտ նիհար էր, քան չաղ, մի խոսքով, բավական հարմար մարդ էր հասմիկ կոչվելու համար: Մի քիչ որ ծանրաքաշ լիներ, կարող էր հանկարծ ծանրությունից կուզիկ դառնալ:
Ջելսոմինոն վաղուց արդեն դպրոցը թողել էր և գյուղական աշխատանք էր կատարում: Այդպես էլ նա կապրեր ամբողջ կյանքը, և ձեզ չէի պատմի նրա մասին, եթե նրա հետ մի շատ տհաճ բան չպատահեր, որի մասին դուք շուտով կիմանաք:

Գլուխ երկրորդ

Ջելսոմինոյի բախտը չբանեց:
Ողջ գյուղը մեկից նա իր դեմ հանեց:

Մի անգամ առավոտյան Ջելսոմինոն գնաց իրենց պարտեզն ու տեսավ՝ բոլոր տանձերը հասել են: Տանձերն, ախր, միշտ այդպես են. ոչ ոքի ոչինչ չեն ասում, բայց իրենց համար հասնում են ու հասնում, և մի գեղեցիկ օր էլ տեսնում եք արդեն հասել են, ու եկել է քաղելու ժամանակը:
«Ափսոս, որ սանդուղք չեմ վերցրել հետս, - մտածեց Ջելսոմինոն: - Արի գնամ տանից սանդուղք բերեմ ու. մի հատ էլ երկար ձող վերևի ճյուղերից տանձը թափ տալու համար»:
Բայց այդ պահին նրա գլխում մի ուրիշ միտք ծագեց, ավելի ճիշտ, մի փոքրիկ քմահաճույք. «Իսկ եթե օգտվեմ իմ ձայնի՞ց»:
Եվ, այսպես որոշելով, նա կանգնեց ծառի տակ ու ոչ կատակ ոչ լուրջ ճչաց.
- Է՛յ, տանձեր, հապա մի ցած թափվեք:
«Թը՛փ-թը՛փ-թրը՛մփ», - պատասխանեցին տանձերը անձրևի նման ցած թափվելով:
Ջելսոմինոն մոտեցավ մյուս ծառին և նույն բանը կրկնեց: Ամեն անգամ, երբ նա գոռում էր՝ «թափվեք», տանձերը ճյուղերից այնպես էին պոկվում, կարծես հենց դրան էին սպասում:
Ջելսոմինոն շատ ուրախ էր դրա համար:
«Այսպես ես ահագին ուժ կխնայեմ, - խորհում էր նա, - ափսոս, որ առաջ չէի մտածել այս մասին»:
Մինչ Ջելսոմինոն շրջում էր իր պարտեզում ու այդ ձևով հավաքում տանձերը, հարևան արտում քաղհան անող մի գյուղացի տեսավ նրան: Նա տրորեց աչքերը, քիթը կսմթեց և, երբ համոզվեց, որ տեսածը երազ չէ, վազեց կնոջ մոտ.
- Գնա մի տես ինչ է կատարվում, - դողալով ասաց նա կնոջը, - ես համոզված եմ, որ Ջելսոմինոն չար վհուկ է:
Կինը նայեց թե չէ, ճչալով ծունկի իջավ.
- Ի՞նչ ես ասում. նա բարի, սուրբ ոգի է:
- Իսկ ես ասում եմ վհուկ է:
- Իսկ ես ասում եմ սուրբ ոգի է:
Մինչ այդ, ամուսինները բավական խաղաղ էին ապրում, բայց այստեղ նրանք կպան իրար: Ամուսինը վերցրել էր թագուշակը, կինը՝ բահը, և ամեն մեկն ուզում էր իր կարծիքը զենքով պաշտպանել, երբ ամուսնու գլխում մի միտք ծագեց.
- Արի հարևաններին կանչենք: Թողն էլ նայեն Ջելսոմինոյին, տեսնենք ի՞նչ կասեն:
Հարևաններին կանչելու միտքը դուր եկավ կնոջը: Նա դեմ չէր մի ավելորդ անգամ շաղակրատելու հնարավորություն ստանալուն, դրա համար էլ մի ակնթարթում անհետացավ:
Դեռ արևը մայր չէր մտել, երբ ամբողջ շրջակայքն իմացավ պատահածի մասին: Բնակիչները բաժանվել էին երկու մասի: Մի մասը պնդում էր, թե Ջելսոմինոն բարի ոգի է, իսկ մյուսներն ապացուցում էին, թե նա չար կախարդ է: Վեճը քանի գնում բորբոքվում էր, քանի գնում մեծանում էր, ինչպես ուժեղ քամու ժամանակ ուռչում-մեծանում են ծովի ալիքները: Մի խոսքով, իսկական վեճ բռնկվեց և նույնիսկ տուժողներ եղան: Բարեբախտաբար՝ թեթև: Օրինակ, մի գյուղացի ծխամորճով բերանը վառեց, քանի որ, վեճով տարված լինելով, նա ծխամորճը բերանը խոթեց հակառակ ծայրից:

Ոստիկանները բոլորովին իրենց կորցրին և չգիտեին, ինչ անեն: Նրանք մի խմբից մյուսն էին անցնում և հանգստության կոչ անում:
Ամենամոլեգին վիճաբանողները գնացին դեպի Ջելսոմինոյի պարտեզը: Մի մասն ուզում էր բարի ոգի Ջելսոմինոյի պարտեզից որևէ հիշատակ վերցնել, իսկ մյուսներն ուզում էին չար կախարդի պարտեզը ոչնչացնել:
Բազմությանը տեսնելով, Ջելսոմինոն կարծեց, թե հրդեհ է ընկել: Նա արագ վերցրեց դույլը և այն է՝ ուզում էր օգնության հասնել, երբ տեսավ, որ ամբոխը կանգ է առնում իր դռների մոտ: Եվ նա այսպիսի խոսակցություն լսեց.
- Ահա նա, ահա նա, բարի ոգին, - գոռում էին մի քանիսը:
- Նա ի՞նչ սուրբ է որ: Նա իսկական չար կախարդ է: Նայեք, նրա ձեռքին դույլ կա: Երևի կախարդված դույլ է:
- Աստված սիրեք, հեռու փախչենք, թե չէ որ նա դույլի միջի եղածը մեզ վրա է շփել, կորած ենք:
- Էդ ի՞նչ է որ...
- Ինչ է, կո՞ւյր եք: Դույլի միջինը դժոխային ձյութ է: Եթե դրանից ընկնի մարդու վրա, այնպես կվառի, որ ոչ մի բժիշկ այլևս բուժել չի կարող:
- Նա սո՛ւրբ է, սո՛ւրբ...
- Մենք տեսանք, Ջելսոմինո, թե դու ինչպես էիր տանձերին հրամայում հասնել, և նրանք հասնում էին, թե ինչպես էիր հրամայում ցած թափվել, և նրանք թափվում էին:
- Խելքներդ թռցրե՞լ եք, ինչ է, - հարցրեց նա, - այդ ամենի պատճառն իմ ձայնն է: Ուղղակի իմ ձայնից օդն սկսում է ուժեղ տատանվել, ինչպես փոթորկի ժամանակ:
- Հա՛, հա՛, մենք գիտենք, - բղավեց մի կին, - դու հրաշքներ գործում ես քո ձայնով:
- Ի՞նչ հրաշքներ: Դա կախարդանք է, - գոռում էին մյուսները:
Զայրացած Ջելսոմինոն դույլը ցած գցեց, գնաց տուն ու դուռը ներսից փակեց:
«Իմ հանգիստ կյանքը վերջացավ, - մտածեց նա: - Հիմա արդեն ոչ մի քայլ չեմ կարող կատարել առանց այդ հետաքրքրասերների: Երեկոները, քնելուց առաջ, ամեն տեղ պիտի իմ մասին խոսեն: Ես պիտի փոքրիկ երեխաների համար չար կախարդ դառնամ: Ավելի լավ կլինի փասափուսաս հավաքեմ այստեղից ու կորչեմ: Եվ ի՞նչ ունեմ այստեղ անելու: Ծնողներս մեռել են, ամենալավ ընկերներս զոհվել են պատերազմում: Ավելի լավ է գնամ աշխարհ ման գամ և բախտս փորձեմ իմ ձայնով: Գուցեև երջանկություն ձեռք բերեմ: Չէ՞ որ կան մարդիկ, որոնք երգելու համար փող են ստանում: Գուցե ինձ էլ հաջողվի երգիչ դառնալ»:
Երբ մտքում այս բանը որոշեց, ունեցած-չունեցածը լցրեց մախաղն ու դուրս եկավ փողոց:
Նրան սպասող մարդիկ քչփչալով դռներից հեռացան: Ոչ ոքի չնայելով, Ջելսոմինոն ճանապարհ ընկավ: Բավական հեռացել էր, երբ շուռ եկավ, որպեսզի մի վերջին անգամ էլ նայի իր տանը:
Ամբոխը դեռ կանգնած էր իր տեղում, և մարդիկ մատով ցույց էին տալիս տղային, կարծես նա ուրվական լիներ:
«Դրանց գլխին մի այնպիսի խաղ չխաղա՞մ, ինչի որ արժանի են», - մտածեց Ջելսոմինոն և, ամբողջ կրծքով մեկ օդը ներս քաշելով, գոռաց.
- Ցտեսությո՛ւն...
Հրաժեշտի արդյունքն անմիջապես երևաց: Տղամարդիկ զգացին, թե ինչպես քամու անսպասելի հոսանքը գլխարկները թռցրեց: Մի քանի պառավ տիկնայք, որոնց գլուխները հանկարծ մերկացան այնպես, կարծես բոլորովին մազ չէին ունեցել, նետվեցին իրենց կեղծամների հետևից:
- Մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ, - կրկնում էր Ջելսոմինոն, ամբողջ հոգով ծիծաղելով կյանքում առաջին անգամ կատարած իր չարության վրա:
Գլխարկներն ու կեղծամները, Ջելսոմինոյի արտառոց ձայնից, չվող թռչունների երամի նման սավառնեցին դեպի ամպերը և աչքից կորան: Շուտով հայտնի դարձավ, որ նրանք մի քանի կիլոմետր հեռու էին ընկել, իսկ դրանցից մի քանիսն էլ սահմանն անցել էին:
Մի քանի օր հետո Ջելսոմինոն էլ սահմանն անցավ և ընկավ մի շատ արտասովոր երկիր:

Գլուխ երրորդ

Պատահական կերպով Ջելսոմինոն մի օր ծանոթացավ մի կատվի հետ արտասովոր:

Առաջին բանը, որ այդ անծանոթ երկրում Ջելսոմինոն տեսավ, մի արծաթե դրամ էր, որն ընկած էր մայթի վրա ու շողշողում էր բոլորի աչքի առաջ: «Զարմանալի է, որ մինչև հիմա այս դրամը ոչ ոք չի վերցրել, - մտածեց նա: - Ինչ վերաբերում է ինձ, ապա ես չեմ թողնի, որ սա մնա այստեղ ընկած: Այսօր դեռ բերանս բան չեմ դրել, իսկ ունեցածս փողերն էլ երեկ երեկոյան վերջացան: Բայց նախ իմանամ հո անցորդներից մեկն ու մեկը չի կորցրել դրամը»:
Նա մոտեցավ մի խումբ մարդկանց, որոնք ինչ-որ բան էին փսփսում ու նայում Ջելսոմինոյին:
- Սինյորներ, ձեզանից ով է այս դրամը կորցրել, - հարցրեց նա շշուկով, որպեսզի իր ձայնով չվախեցնի անծանոթներին:
- Կորիր այստեղից, - պատասխանեցին նրան, - և ինչքան կարող ես քիչ ցույց տուր այդ փողը, քանի դեռ փորձանքի մեջ չես ընկել:
- Ներեցեք ինձ, խնդրում եմ, - շփոթված շշնջաց Ջելսոմինոն և գնաց դեպի դիմացի խանութը, որի դռան վրա կախված էր «Պարենային և այլ ապրանքներ» գայթակղիչ ցուցանակը:
Ցուցափեղկում խոզապուխտի և երշիկի փոխարեն դրված էին տետրակի կիտուկներ, ներկերի տուփեր և թանաքի շշեր:
- Այլ ապրանքները հենց սրանք են, որ կան, երևի, - ասաց Ջելսոմինոն և վստահ մտավ խանութ:
Բարի երեկո, - սիրալիր ողջունեց նրան խանութի տերը:
«Ճշմարիտն ասած, ես դեռ կեսօրվա զանգի ձայնը չեմ լսել, - մտածեց Ջելսոմինոն: - Ասենք, չարժե դրա վրա ուշադրություն դարձնել»: Եվ, ինչպես միշտ, շշունջով, որը նորմալ ականջի համար այնուամենայնիվ բարձր էր հնչում, նա հարցրեց.
- Կարելի՞ է մի քիչ հաց գնել, սինյոր:
- Խնդրեմ, թանկագին սինյոր, ինչքա՞ն կուզենայիք: Մի սրվակ, թե երկու կարմիր, թե սև:
- Միայն թե սև չլինի: Իսկ, ինչ է, դուք իրո՞ք հացը սրվակներով եք վաճառում:
Խանութի տերը բարձր ծիծաղեց.
- Իսկ ինչպե՞ս եք ուզում, որ վաճառենք: Մի՞թե ձեր երկրում հացը կտոր-կտոր են անում: Տեսեք, տեսեք, թե ինչքան լավն է մեր հացը: - Այս ասելով նա ցույց տվեց թարեքները, որոնց վրա տարբեր գույնի թանաքի զանազան սրվակներ էին շարված, այնպես, կարծես շարք կանգնած զինվորներ լինեին:
Ի միջի այլոց, ամբողջ խանութում ուտելիքի հետք անգամ չկար: Նույնիսկ պանրի փշուր ու խնձորի կեղև չկար:
«Խելքը թռցրել է, երևի, - մտածեց Ջելսոմինոն, - ավելի լավ է սրան չհակաճառել»:
- Իրոք որ հացը հրաշալի է, - համաձայնեց Ջելսոմինոն՝ ցույց տալով կարմիր թանաքի սրվակը: Նա ուզում էր իմանալ, թե ինչ կպատասխանի խանութպանը:
- Ի՜նչ եք ասում, - գովասանքից ամբողջովին շառագունեց վերջինս: - Այո, մինչև հիմա վաճառքի համար հանած հացերից սա ամենալավ կանաչ հացն է:
- Կանա՞չ:
- Դե, իհարկե: Ներեցեք, դուք, երևի, վատ եք տեսնում:

Ջելսոմինոն համոզված էր, որ իր առջև կարմիր թանաքի սրվակ է, դրա համար էլ առիթ էր փնտրում, որպեսզի թողնի գնա և մի ավելի խելամիտ խանութպան գտնի: Եվ ճիշտ ժամանակին նրա գլխում մի միտք ծագեց:
- Լսեցեք, - ասաց Ջելսոմինոն, - ավելի լավ է ես հետո գամ հացի, իսկ այժմ ցույց տվեք մի խանութ, որտեղ բարձր որակի թանաք են ծախում:
- Դե, իհարկե, - պատասխանեց խանութպանը միշտ սիրալիր ժպիտը դեմքին: - Նայեցեք, ճիշտ դիմացը գտնվում է գրասենյակային պիտույքների քաղաքի ամենահայտնի խանութը:
Դիմացի խանութի ցուցափեղկերում դարսված էին հացի զանազան տեսակներ, տորթեր և անուշահացեր, բարձրանում էին մակարոնի և պանրի բլուրներ, երշիկի և նրբերշիկի շարաններ էին կախված:
«Ես այդպես էլ կարծում էի, - որոշեց Ջելսոմինոն, - խանութպանը խելքը թռցրել է, դրա համար էլ թանաքին հաց է ասում, հացին՝ թանաք: Այն խանութում երևի ամեն ինչ կարգին լինի»:
Նա մտավ դիմացի խանութը և կես կիլո հաց խնդրեց:
- Հա՞ց, - ծառայակամորեն հարցրեց վաճառողը: - Գիտե՞ք ինչ, դուք սխալվել եք: Հացը վաճառում են դիմացի խանութում: Մենք միայն գրասենյակային պիտույքներ ենք վաճառում, - և նա հպարտորեն ցույց տվեց իր համեղ ապրանքները:
«Հիմա ես ամեն ինչ հասկանում եմ, - որոշեց Ջելսոմինոն, - այս երկրում թարսուշիտակ պիտի խոսել: Եթե դու հացին հաց ասես, քեզ չեն հասկանա»:
- Կես կիլո թանաք տվեք ինձ, - ասաց նա վաճառողին:
Սա կես կիլո հաց կշռեց և, ինչպես հարկն է փաթաթելով թղթի մեջ, մեկնեց Ջելսոմինոյին:
- Ես մի քիչ էլ, այ, սրանից եմ ուզում, - ավելացրեց Ջելսոմինոն, մատով ցույց տալով պանիրը և չհամարձակվելով անունը տալ:
- Մի քիչ էլ ռետի՞ն, - հարցրեց վաճառողը, - այս րոպեին, սինյոր: - Նա մի կտոր պանիր կտրեց և, կշռելով, փաթաթեց թղթի մեջ:
Ջելսոմինոն թեթևացած շունչ քաշեց և վաճառասեղանին գցեց քիչ առաջ գտած իր արծաթե դրամը: Վաճառողը կռացավ, մի քանի րոպե դիտեց փողը, մեկ-երկու անգամ գցեց վաճառասեղանին, որպեսզի լսի, թե ինչպես է հնչում ձայնը, իսկ հետո սկսեց դրամին նայել խոշորացնող ապակիով և նույնիսկ ատամով փորձեց: Վերջապես դժգոհությամբ փողը վերադարձրեց Ջելսոմինոյին և սառը ասաց.
- Երիտասարդ, դժբախտաբար ձեր դրամն իսկական է:
- Ավելի լավ, - դյուրավստահ ժպտաց Ջելսոմինոն:
- Այդ էր պակաս: Կրկնում եմ, որ այս դրամն իսկական է, և ես վերցնել չեմ կարող: Գնացեք ձեր բանին: Եվ ընդհանրապես, գոհ եղեք, երիտասարդ, որ հիմա փողոց դուրս գալու և ոստիկան կանչելու ցանկություն չունեմ: Մի՞թե չգիտեք, թե ինչ է սպասվում այն մարդուն, որն իսկական փող է ասպարեզ բերում: Բա՜նտ:
- Բայց ես...
- Ավելի լավ է ձայն չբարձրացնեք, ես խուլ չեմ: Գնացեք այստեղից և ապրանքն ստանալու համար եկեք միայն կեղծ դրամով: Տեսեք, ես նույնիսկ փաթեթները չեմ բացում: Թողնում եմ այսպես, մինչև ձեր գալը: Բարի գիշեր:
Ջելսոմինոն բռունցքը մտցրեց բերանը, որպեսզի չգոռա: Եվ մինչ նա վաճառասեղանից կհասներ դռանը, նրա և իր ձայնի միջև այսպիսի խոսակցություն տեղի ունեցավ:
ՁԱՅՆ – Ուզո՞ւմ ես այնպես գոռամ, որ նրա ցուցափեղկերը հօդս ցնդեն:
ՋԵԼԱՈՄԻՆՈ - Խնդրում եմ այդպիսի բան չանես: Չէ՞ որ ես նոր եմ ընկել այս երկիրը և առանց այն էլ իմ գործերն այստեղ թարս են գնում:
ՁԱՅՆ - Բայց ինձ պետք է լույս աշխարհ դուրս գալ, թե չէ կորած եմ: Դու ես իմ տերը, մտածիր, թե ինչպես ավելի լավ կլինի:

ՁԵԼԱՈՄԻՆՈ - Համբերիր, շուտով դուրս կգանք այս խելագարի խանութից: Ես չեմ ուզում նրան սնանկացնել: Այս երկրում ամեն բան տարօրինակ է:
ՁԱՅՆ - Այդ դեպքում՝ շուտ արա. ես այլևս լռել չեմ կարող: Շտապի՛ր: Մի փոքր էլ որ մնա, ամեն բան կփչացնեմ:
Ձելսոմինոն վազելով դուրս եկավ խանութից, թեքվեց դեպի կողքի փողոցը, որը նրբանցքից մի քիչ էր լայն, և նայեց շուրջը: Ոչ ոք չէր երևում, դրա համար էլ նա բռունցքը բերանից հանեց և հոգում կուտակված զայրույթից ազատվելու համար բղավեց. «Ա՜ա, ա»: Լսվեց փողոցի ջարդված լապտերի զնգոցը, իսկ մի պատուհանի գոգից ծաղկամանն ընկավ ցած ու կտոր-կտոր եղավ:
Ձելսոմինոն ազատ շունչ քաշեց.
- Երբ ես փող ունենամ, կոտրված լապտերի արժեքը փոստով կուղարկեմ քաղաքային վարչությանը, իսկ պատշգամբում նոր ծաղկաման կդնեմ: Կարծես թե ուրիշ բան չի կոտրվել, հը՞...
- Չէ, չի կոտրվել, - լսվեց մի բարակ ձայն, և ինչ-որ մեկը երկու անգամ հազաց:
Ձելսոմինոն փնտրեց այդ ձայնի տիրոջը և մի կատու միայն տեսավ, ավելի ճիշտ մի էակ, որին կարելի էր կատվի տեղ ընդունել: Նախ և առաջ այդ կատուն կարմիր գույն ուներ: Ինչ-որ առանձնահատուկ մուգ կարմիր գույն էր դա: Կատուն ընդամենը երեք ոտք ուներ և ամենազարմանալին այն է, որ նկարված կատու էր, այն կենդանիների նման, որ սովորաբար երեխաները նկարում են պատերին:
- Այդ ի՞նչ է, դու խոսո՞ղ կատու ես:
- Այո, խոստովանում եմ, որ ես մի փոքր անսովոր կատու եմ: Ես, օրինակ, կարողանում եմ կարդալ ու գրել: Բացի այդ ես դպրոցական կավճի աղջիկն եմ:
- Ո՞ւմ աղջիկն ես...
Ինձ մի աղջիկ դպրոցից թռցրած գունավոր կավիճով նկարել է այս պատին: Եվ քանի որ նկարելիս մոտեցավ ոստիկանը, նա փախավ և այդպես էլ չհասցրեց չորրորդ ոտքս նկարել: Այ, դրա համար էլ ես կաղ դուրս եկա և որոշեցի անունս Կաղլիկ-կատու դնել: Բացի այդ ես մի քիչ հազում եմ: Չէ որ ձմռան ամենացուրտ ամիսներն անց եմ կացրել բավական խոնավ պատի վրա:
Ձելսոմինոն նայեց պատին, որի վրա մնացել էր Կաղլիկ-կատվի դրոշմը: Կարծես նկարը պոկել էին ծեփից:
- Բայց ինչպե՞ս պոկվեցիր պատից, - հարցրեց Ձելսոմինոն:
- Դրա համար ես պետք է շնորհակալ լինեմ քո ձայնին, - պատասխանեց Կաղլիկ-կատուն: - Եթե դու մի քիչ էլ ուժեղ գոռայիր, ըստ երևույթին պատը կծակեիր և տհաճ բան կստացվեր: Իսկ հիմա պարզապես իմ բախտը բերեց: Ինչ հիանալի բան է գետնի վրա քայլելը: Ի միջի այլոց, դու ընդամենը երկու ոտք ունես և քեզ հերիք է անում, այնպես չէ՞...
- Դե, իհարկե, - համաձայնեց Ձելսոմինոն, - ինձ համար սա նույնիսկ շատ է: Եթե ես միայն մի ոտք ունենայի, տանից չէի հեռանա:
- Տեսնում եմ, որ դու այնքան էլ ուրախ չես, - նկատեց Կաղլիկ-կատուն: - Ի՞նչ է պատահել:
Ձելսոմինոն արդեն ուզում էր պատմել իր չարաբաստիկ արկածների մասին, երբ փողոցում հայտնվեց մի իսկական չորսոտանի կատու: Բայց նա, ըստ երևույթին, խորասուզված էր իր մտքերի մեջ և նույնիսկ գլուխը շուռ չտվեց, որ նայի մեր բարեկամներին:
- Մյաո՜ւ, - ձայն տվեց Կաղլիկ-կատուն:
Կատվային լեզվով «մյաու» նշանակում է «ողջույն»: Կատուն կանգ առավ: Թվում էր, թե նա զարմացած է կամ ավելի շուտ վիրավորված:
- Իմ անունը Կաղլիկ-կատու է, իսկ քո՞նը, - հետաքրքրվեց մեր կատուն:
Իսկական կատուն մի պահ տատանվում էր՝ պատասխանի, թե՝ ոչ: Հետո մի փոքր մտածելով, տհաճությամբ ասաց.
- Իմ անունը Բարբոս է:
- Այդ ի՞նչ է ասում, - հարցրեց Ձելսոմինոն, որն իրոք ոչինչ չէր հասկանում նրանց խոսակցությունից:
- Ասում է, թե իր անունը Բարբոս է:
- Բայց չէ՞ որ դա շան անուն է:



- Իհա՛րկե:
- Բան չեմ հասկանում, - ասաց Ջելսոմինոն, - այնտեղ խանութպանն էր ինձ հացի փոխարեն թանաք տալիս: Հիմա էլ՝ այս շան անունով կատուն:

- Թանկագինս, - բացատրեց Կաղլիկ-կատուն, - այս կատուն կարծում է, թե ինքը շուն է: Ուզո՞ւմ ես լսել - և, շուռ գալով դեպի կատուն՝ սրտանց ողջունեց նրան - Մյաու...
- Հա՛ֆ, հա՛ֆ, - կատաղած պատասխանեց կատուն: - Ամաչիր, կատու ես, բայց «մյաու» ես անում:
- Այո, ես կատու եմ, - պատասխանեց Կաղլիկ-կատուն, - չնայած ընդամենը երեք ոտք ունեմ, այն էլ՝ կարմիր կավիճով նկարված:
- Դու մեր ցեղը կխայտառակես: Դու խաբեբա ես, կորիր այստեղից: Ես այլևս չեմ ուզում ոչ մի րոպե կորցնել՝ քեզ հետ խոսելով: Ասենք, շուտով անձրև է գալու: Գնամ տուն, հովանոցս վերցնեմ: - Եվ նա գնաց մերթընդմերթ ետ դառնալով ու հաչելով:
- Ի՞նչ ասաց, - հարցրեց Ջելսոմինոն:
- Ասաց, որ անձրև է գալու:
Ջելսոմինոն նայեց երկնքին: Երկնքում արեգակը փայլում էր այնպես, ինչպես երբեք: Նույնիսկ ծովային հեռադիտակով հնարավոր չէր ամպի կտոր տեսնել:
- Հուսանք, որ այս երկրում բոլոր ամպամած օրերը նման կլինեն այսօրվան: Ինձ թվում է, թե ես ընկել եմ մի այնպիսի աշխարհ, ուր ամեն ինչ թարս է:
- Թանկագին Ջելսոմինո, դու ուղղակի ընկել ես Խաբեբաների աշխարհը: Այստեղ բոլորը օրենքով պարտավոր են ստել: Եվ վայ նրան, ով ճշմարտություն կասի: Այդպիսիներին այնպես են տուգանում, որ կաշին քերթում են պոչի հետ:
Եվ ահա Կաղլիկ-կատուն, որը պատի վրա իր դիտակետից նայելով շուրջը հասցրել էր շատ բան իմանալ, Ջելսոմինոյին մանրամասն նկարագրեց խաբեբաների աշխարհը:

Գլուխ չորրորդ

Այստեղ կպատմենք կատվի խոսքերով
Ճշմարիտ մի հեքիաթ լիքը ստերով:

- Թող հայտնի լինի քեզ...- այսպես սկսեց իր պատմությունը Կաղլիկ-կատուն: Բայց ես կկրճատեմ նրա պատմածը, թե չէ ստիպված կլինեք շատ ժամանակ կորցնել:
Եվ այսպես, Ջելսոմինոյի գալուց շատ առաջ այդ աշխարհում հայտնվել էր Ջակոմոն անունով մի խորամանկ ու դաժան ծովահեն: Դա բավական բարձրահասակ և հաստամարմին, տարիքն առած մի մարդ էր և որոշել էր ծերության օրերին մի ավելի հանգիստ գործով զբաղվել:
- Ջահելությունս անցավ, - ասում էր նա: - Ինձ ձանձրացրել է ծովեր չափչփելը: Լավ չի՞ լինի մի որևէ կղզի գրավել և թողնել հին արհեստը: Անշուշտ, ես իմ ծովահեններին չեմ մոռանա: Ես նրանց ծառաներ, սպասավորներ, ավագ սպասավորներ, ձիապաններ ու սուրհանդակներ կդարձնեմ, և նրանք իրենց ատամանից չեն նեղանա:
Այսպես մտածելով, նա սկսեց մի հարմար կղզյակ որոնել: Բայց բոլոր կղզյակները շատ փոքր էին և նրա պահանջները չէին բավարարում: Եթե դուր էին գալիս իրեն, ապա չէին բավարարում նրա ծովահեններին: Մեկն անպայման գետ էր ուզում, որպեսզի կարմրախայտ որսա, բայց գետ չէր լինում, երկրորդը կինոթատրոն էր ուզում, երրորդը բանկ, որպեսզի այնտեղ պահեր իր թալանածը:
- Իսկ ինչո՞ւ մի ավելի լավ բան չենք կարող գրավել, քան կղզյակն է, - ամեն անգամ ասում էր որևէ մեկը:
Մի խոսքով գործը վերջացավ նրանով, որ գրավեցին մի ամբողջ երկիր, ուր բանկերով ու թատրոններով լի մեծ քաղաք կար, և կային շատ գետեր, ուր կարելի էր կարմրախայտ որսալ, իսկ կիրակի օրերը նավակով զբոսնել: Եվ այստեղ ոչ մի զարմանալի բան չկա: Շատ հաճախ է պատահում, երբ ավազակախմբերն աշխարհի այս կամ այն մասում իրենց ձեռքն են վերցնում այս կամ այն երկրի ղեկավարությունը: Երկիրը գրավելով, Ջակոմոնն իրեն թագավոր հռչակեց և իրեն կոչեց Ջակոմոն Առաջին, իսկ իր մարդկանց նա ծովակալների, սենեկապետերի, պալատականների ու հրշեջ խմբի պետերի կոչումներ շնորհեց:
Հասկանալի է, որ Ջակոմոնը հրատարակեց մի օրենք, որը բոլորի լեզուն կտրելու սպառնալիքով պարտադրում էր իրեն «ձերդ մեծություն» անվանել: Բայց որպեսզի լիովին վստահ լիներ, որ երբեք ոչ ոքի մտքով չի անցնի իր մասին ճշմարտությունն ասելու, նա հրամայեց իր մինիստրներին, որ բառարանի ռեֆորմ անցկացնեն:
- Հարկավոր է բոլոր բառերը փոխել, - բացատրեց նա: - Օրինակ, «ծովահեն» բառը պիտի նշանակի կարգին մարդ: Այսպիսով, եթե մարդիկ ասեն, որ ես ծովահեն եմ, դա նոր լեզվով կնշանակի, որ ես կարգին մարդ եմ:
- Երդվում ենք այն բոլոր կետ ձկներով, որոնց տեսել ենք աբորդաժի գնալիս, դա հիանալի միտք է, - գոչեցին հիացած մինիստրները: - Արժե այդ խոսքերը գրել ոսկե տառերով:
- Պա՞րզ է բոլորին, - շարունակեց Ջակոմոնը: - Իսկ հիմա անցեք գործի: Բոլոր իրերի, մարդկանց ու կենդանիների անունները փոխել: Սկսենք նրանից, որ այսուհետև բարի լույսի փոխարեն պետք է ասել բարի գիշեր: Այսպես, իմ հպատակները օրը կսկսեն ստով: Ինչ խոսք, երբ գա քնելու ժամանակը, պիտի «բարի լույս» ասեն:
- Հոյակա՛պ է, - բացականչեց մինիստրներից մեկը: - Եթե որևէ մեկին պետք լինի ասել «Ի՛նչ հիանալի տեսք ունեք», պիտի ասի. «Ձեր սֆաթը դմբուզի է կարոտ»:

Բառարանի ռեֆորմից հետո օրենք հրատարակվեց, որի համաձայն կեղծիքը դառնում էր պարտադիր: Եվ այստեղ էլ սկսվեց մի կատարյալ խառնաշփոթություն:
Սկզբում մարդիկ հեշտությամբ շփոթվում էին: Օրինակ, հաց առնելու համար գնում էին հացի խանութ, մոռանալով, որ այնտեղ հիմա մատիտ ու տետր են վաճառում, և հացը պետք է գնել գրասենյակային պիտույքների խանութում: Կամ գնում էին քաղաքային այգի, նայում էին ծաղիկներին ու հառաչում:
- Ի՜նչ հիանալի վարդեր են:
Անմիջապես թփուտներից դուրս էր գալիս Ջակոմոն թագավորի պահակը շղթան ձեռքին պահած.
- Ա՛յ ապրեք, ապրեք: Հայտնի՞ է ձեզ, որ դուք օրենքը խախտեցիք: Այդ ինչպե՞ս ձեր մտքով անցավ գազարը վարդ անվանել:
- Ներողություն եմ խնդրում, - փնթփնթում էր հանցավորը և շտապ սկսում գովել զբոսայգու մյուս ծաղիկները: - Ի՜նչ հիանալի եղինջ է, - ասում էր նա ցույց տալով անյուտայի աչիկներ ծաղիկը:
- Չէ՛, չէ՛, ոչինչ դուրս չի գա: Դուք արդեն հանցանքը գործել եք: Մի քիչ բանտ կնստեք և այնտեղ սուտ ասելու վարժություններ կանեք:
Բայց այն, ինչ տեղի ունեցավ դպրոցներում, ուղղակի դժվար է նկարագրել: Ջակոմոնը սկսեց փոխել բազմապատկման աղյուսակի բոլոր թվերը: Գումարում կատարելու փոխարեն հարկավոր էր հանել, իսկ բաժանման ժամանակ պետք էր բազմապատկել: Իրենք՝ ուսուցիչներն այլևս չէին կարողանում խնդիրներն ուղղել:
Ծույլերի համար դա մի իսկական ազատություն էր ինչքան շատ սխալներ էին անում, այնքան հավատացած էին, որ գերազանց գնահատական կստանան:
Իսկ շարադրությունները...
Պատկերացրեք, թե ինչպիսի շարադրություն կստացվեր, երբ ամեն ինչ թարսուշիտակ էր գրվում: Ահա, օրինակի համար, մի շարադրություն, որը կոչվում է «Գեղեցիկ օր», որի համար մի դպրոցական արժանացել է կեղծ ոսկե մեդալի:
«Երեկ անձրև էր գալիս: Ա՜խ, ինչ հաճելի է հորդ անձրևի տակ զբոսնելը: Վերջապես մարդիկ կարողացան տանը թողնել անձրևանոցներն ու թիկնոցները և առանց բաճկոնի, միայն մի վերնաշապիկով դուրս գալ փողոց: Ես չեմ սիրում, երբ արև է լինում: Ստիպված նստում ես տանը, որպեսզի չթրջվես և ամբողջ գիշեր նայում ես, թե ինչպես են արևի ճառագայթները սահում դռների կղմինդրների վրայով»:
Որպեսզի կարողանաք ինչպես հարկն է գնահատել այս շարադրությունը, պետք է իմանաք, որ «դռների կղմինդրներ» ասելով հասկանում էին «պատուհանի ապակիներ»:
Այսքանը կարծես թե բավական է: Հիմա արդեն գիտեք, թե ինչն ինչոց է: Խաբեբաների աշխարհում նույնիսկ կենդանիները ստիպված էին սուտ ասել: Շները մլավում էին, կատուները՝ հաչում, ձիերը բառաչում էին, իսկ առյուծները, կենդանաբանական այգում իրենց վանդակներում նստած, ստիպված էին ծվծվալ, որովհետև մռնչալու իրավունքը մկներին էր տրված միայն: Միայն ձկները ջրում և թռչունները օդում կարող էին թքել Ջակոմոն արքայի օրենքների վրա: Չէ՞ որ ձկները միշտ լուռ են և դրա համար էլ ոչ ոք նրանց չի կարող ստիպել, որ ստեն: Ինչ վերաբերում է թռչուններին, ապա թագավորական պահակները երբեք չէին կարողանա նրանց բանտարկել: Թռչուններն առաջվա նման շարունակում էին ամեն մեկն իր ձևով երգել: Մարդիկ հաճախ էին նրանց նայում նախանձով ու հառաչելով ասում.
- Երջանիկ են թռչունները, ոչ ոք նրանց չի կարող տուգանել:
Կաղլիկ-կատվի պատմությունը լսելով, Ջելսոմինոն ավելի ու ավելի էր տխրում:
«Ես ինչպե՞ս պիտի ապրեմ այս երկրում, - մտածում էր նա: - Եթե իմ այս բարձր ձայնով ճշմարտությունն ասեմ, ապա ինձ կլսեն Ջակոմոն թագավորի բոլոր ոստիկանները: Ձայնս էլ այնքան անհնազանդ է, որ սատանան գիտի, թե ինչպես կարելի է զսպել»:
- Դու հիմա ամեն բան գիտես, - իր պատմությունն ավարտեց Կաղլիկ-կատուն: - Եվ գիտե՞ս ինչ կասեմ քեզ, - ավելացրեց նա, - ախր ես կարգին սոված եմ:

- Ես էլ եմ քաղցած, բայց համարյա մոռացել էի:
- Քաղցը միակ բանն է, որ չի կարելի մոռանալ: Դրա համար ժամանակը նշանակություն չունի: Ընդհակառակը, որքան շատ է ժամանակ անցնում, այնքան ավելի ուժեղ ես քաղց զգում: Ա՛յ, կտեսնես, մենք մի բան կգտնենք: Բայց նախ և առաջ կուզենայի այս պատի վրա ինձանից մի հիշատակ թողնել, չէ՞ որ ես երկար ժամանակ գերի էի դրա վրա:
Եվ կարմիր կավիճով նկարած թաթով պատի այն մասում, որտեղ առաջ ինքն էր, ճանկռտեց.
Մյա՛ու... Կեցցե՛ ազատությունը...
Ուտելու բան գտնելն այնքան էլ հեշտ չէր: Երբ նրանք թափառում էին քաղաքում, Ջելսոմինոն աչք չէր կտրում գետնից, այն հույսով, թե որևէ կեղծ դրամ կգտնի: Իսկ Կաղլիկ-կատուն անընդհատ շուրջն էր նայում, կարծես թե ինչ-որ ծանոթ էր փնտրում ամբոխի մեջ:
- Ահա նա, - վերջապես ասաց կատուն և ցույց տվեց մի պառավ սինյորայի, որը փաթեթը ձեռքին շտապ անցնում էր մայթով:
- Ո՞վ է դա:
- Մորաքույր Եգիպտացորենը՝ բոլոր կատուների հովանավորը: Ամեն երեկո նա թափառաշրջիկ կատուների համար ուտելիքի մնացորդներ է բերում, որ հավաքում է Ջակոմոն թագավորի պալատի մոտերքից:
Մորաքույր Եգիպտացորենը ձեռնափայտի նման ուղիղ, չոր ու խիստ տեսքով մի պառավ էր, որի հասակը մոտ երկու մետր կլիներ: Նրան նայելով կարելի էր կարծել, թե այն պառավներից է, որոնք ցախավելը ձեռքներին հետապնդում են կատուներին: Բայց Կաղլիկ-կատվի ասելով՝ Մորաքույր Եգիպտացորենը բոլորովին այլ բնավորություն ուներ:
Նրան հետևելով Ջելսոմինոն և իր նոր բարեկամը դուրս եկան մի փոքրիկ հրապարակ, որի խորքում բարձրանում էր զբոսայգու ատամնավոր պատը: Պատի վրա ջարդված շշերի սուր-սուր կտորներ էին ցցված: Այնտեղ Մորաքույր Եգիպտացորենին շան հաչոցով դիմավորեցին մոտ մեկ տասնյակ կատուներ:
- Դմբոնե՛ր, - ասաց Կաղլիկ-կատուն: - Հիմա տես, թե ես դրանց հախից ոնց կգամ:
Եվ այն պահին, երբ Մորաքույր Եգիպտացորենը փաթեթը բաց արեց ու պարունակությունը դատարկեց մայթին, Կաղլիկ-կատուն նետվեց առաջ և ականջ ծակող ձայնով մլավեց՝ «Մյաուու՛ւ...» Կատու, որը ոչ թե հաչում, այլ «մյաու» էր ասում, այս կողմերում այնքան հազվադեպ էր, որ տեղական կատուները խիստ զարմացան, բերանները բաց՝ մնացին սառած, կարծես արձան լինեին: Կաղլիկ-կատուն, օգտվելով դրանից, բրածկան երկու գլուխ և տափակածկան մի ողնաշար ատամների մեջ առնելով թռավ թագավորական զբոսայգու պատի վրա և այնտեղից նետվեց թփերի մեջ:
Ջելսոմինոն շուրջը նայեց: Նա էլ էր ուզում պատի մյուս կողմն անցնել, բայց Մորաքույր Եգիպտացորենը կասկածանքով զննում էր նրան: «Չեմ ուզում, որ նա աղմուկ բարձրացնի», - մտածեց Ջելսոմինոն: Ձևացնելով, թե սովորական անցորդ է, նա թեքվեց ու դուրս եկավ մի ուրիշ փողոց:
Երբ կատուներն ուշքի եկան, հաչելով կպան Մորաքույր Եգիպտացորենի փեշին, բայց ճիշտը որ ասենք, պառավը նրանցից պակաս զարմացած չէր: Վերջապես, հառաչելով, Մորաքույրը ձկան թերմացքը բաժանեց կատուներին և վերջին անգամ նայելով պատին, գնաց տուն:
Իսկ Ջելսոմինոն դեռ նոր էր մտել կողքի փողոցը, երբ վերջապես մի կեղծ դրամ գտավ: Նա իր համար հաց ու պանիր, կամ ինչպես ասում էին այդ երկրում «թանաք ու ռետին» գնեց: Արագ վրա էր հասնում գիշերը, իսկ Ջելսոմինոն շատ էր քաղցած և քունը տանում էր: Մի բաց դուռ տեսնելով՝ մտավ ներս և հայտնվեց մի նկուղում, ուր քնեց ածխի կույտի վրա:

Գլուխ հինգերորդ

Կաղլիկ-կատուն նկատում է պատշգամբից Զակոմոնի հարյուր կեղծամներն անբիծ:

Քանի դեռ Զելսոմինոն քնած է և չի էլ կասկածում, որ հենց երազում ունենալու է մի նոր արկած, որի մասին ես ձեզ կպատմեմ հետո, մենք գնանք Կաղլիկ-կատվի երեք թաթերի հետքերով:

Բրածկան գլուխներն ու տափակածկան ողնաշարն արտակարգ համով թվացին նրան: Կյանքում առաջին անգամ էր նա ուտում: Քանի դեռ պատի վրայի նկար էր, երբեք քաղց չէր զգացել:

Կատուն առաջին անգամ էր գիշերը թագավորական զբոսայգում անցկացնում: Նայելով թագավորի պալատին, նա վերջին հարկում մի քանի լուսավորված պատուհան տեսավ:

- Ափսոս, որ Զելսոմինոն այստեղ չէ, - ասաց նա: - Ով-ով, նա կկարողանար Զակոմոն թագավորի համար սերենադ երգել և ջարդուփշուր անել նրա բոլոր լուսամուտները: Սակայն Զակոմոն թագավորը երևի պատրաստվում է քնել: Ինչպե՞ս կարելի է բաց թողնել այդպիսի մի տեսարան:

Արագ, ինչպես կատուներն են անում, նա սկսեց հարկից հարկ մագլցել և վերևից ներս նայեց: Դա մի հսկայական դահլիճ էր, որը գտնվում էր նորին պայծառափայլության ննջարանի առաջ:

Երկու անվերջանալի շարքով կանգնած էին ծառաները, սպասավորները, պալատականները, սենեկապետերը, ծովակալները, մինիստրները և այլ նշանավոր անձնավորություններ, որոնք խորը գլուխ էին տալիս շարքի միջով անցնող Զակոմոնին: Նա հաղթանդամ էր, հաստամարմին և այնքան սարսափելի, որ կարելի էր վախենալ: Բայց նրա կրակա-նարնջագույն խիտ ու երկար, գանգուր մազերը և թագավորական անունը կրծքի վրա ասեղնագործած մանիշակագույն գիշերանոցը իրենց գեղեցկությամբ ուղղակի շշմեցնում էին:

Երբ նա անցնում էր, բոլորը խորը գլուխ էին տալիս և հարգանքով ասում.

- Բարի լույս, ձերդ մեծություն, բարի օր անցկացնես, տեր թագավոր:

Զակոմոնը երբեմն-երբեմն կանգ էր առնում և քաղցր հորանջում, և անմիջապես պալատականներից մեկնումեկը ձեռքով ծածկում էր նրա բերանը: Այնուհետև Զակոմոնը նորից առաջ էր շարժվում ու մրմնջում.

- Այս առավոտ իմ քունը բոլորովին չի տանում, ես ինձ բողկի պես կայտառ եմ զգում:

Հասկանալի էր, որ այս ամենը միանգամայն հակառակ իմաստ ուներ: Բայց նա այնքան էր ուրիշներին հարկադրել ստել, որ ինքն էլ ուրիշներից պակաս չէր ստում և առաջինն էր հավատում իր ստին:

- Ձերդ մեծության մռութը դմբուզի կարիք է զգում, - խորը գլուխ տալով, նկատեց մինիստրներից մեկը:

Զակոմոնը նրա վրա ցասումնալից հայացք գցեց, բայց ժամանակին իրեն հավաքեց. չէ՞ որ այդ խոսքերը նշանակում էին, թե արքայի դեմքի գույնը հիանալի է: Նա ժպտաց, հորանջեց, շուռ եկավ դեպի պալատականների խումբը և ձեռքի շարժումով հրաժեշտ տվեց նրանց: Այնուհետև, մանիշակագույն գիշերանոցի փեշերը հավաքելով, գնաց իր ննջասենյակը:

Կաղլիկ-կատուն պատուհանը փոխեց, որպեսզի շարունակի դիտել:

Հենց որ նորին մեծություն Ջակոմոնը մնաց մենակ, նետվեց դեպի հայելին և սկսեց ոսկե սանրով եռանդով սանրել իր սքանչելի նարնջագույն գանգուրները:
«Ինչպես է խնամում իր մազերը, - մտածեց Կաղլիկ-կատուն - և իզուր չի անում: Նրա մազերն իսկապես որ գեղեցիկ են: Ինչպե՞ս կարող էր այդպիսի մազեր ունեցող մարդը ծովահեն դառնալ: Նա պետք է կամ նկարիչ լիներ, կամ երաժիշտ:
Իսկ Ջակոմոնն այդ ժամանակ սանրը դրեց տեղը, զգուշորեն բռնեց իր քունքերի մոտի խոպոպներից և... մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... ձեռքերի թեթև շարժում, և նրա գլուխը մնաց առանց որևէ մազի, ոնց որ գլաքար լիներ: Նույնիսկ հնդկացին չէր կարող այդպիսի արագությամբ իր անկոչ հյուրի գանգը մաշկել:
- Կեղծամ, - զարմանքով մրմնջաց Կաղլիկ-կատուն: Այո, պարզվեց, որ նարնջագույն սքանչելի գանգուրները ընդամենը կեղծամ էին: Իսկ նորին մեծության ճաղատ գլուխը տհաճ վարդագույն էր և վրան լիքը ուռուցքներ ու գորտնուկներ կային: Ջակոմոնը տխուր հառաչելով քորեց գլուխը, հետո բաց արեց պահարանը: Կաղլիկ-կատուն բազմագույն կեղծամների մի ամբողջ հավաքածու տեսավ: Զարմանքից նրա աչքերն ավելի լայն բացվեցին: Կային խարտյաշ, կապույտ ու սև մազերով կեղծամներ, որոնք տարբեր ձևերով էին սանրված: Ջակոմոնը հանդես էր գալիս նարնջագույն կեղծամով, բայց քնելուց առաջ, երբ մենակ էր մնում, սիրում էր տարբեր կեղծամներ դնել, որպեսզի գոնե դրա մեջ մխիթարություն գտնի և մոռանա իր ճաղատի մասին: Նա ամաչելու բան չուներ, շատ էլ թե բոլոր մազերը թափվել էին: Գրեթե բոլոր կարգին մարդկանց մազերը, մի որոշակի հասակի հասնելիս, թափվում են: Բայց Ջակոմոնն այդպիսին էր: Նա չէր կարողանում իր գլուխն առանց բուսականության տեսնել:
Կաղլիկ-կատվի աչքի առաջ նորին մեծությունը իրար հետևից տասնյակ կեղծամներ փորձեց: Նա հայելու առաջ հետ ու առաջ էր անում, որպեսզի հիանա իր տեսքով՝ իրեն նայում էր կողքից, դիմացից, փոքրիկ հայելու միջով նայում էր ծոծրակին, ինչպես պարուհիներն են անում բեմ դուրս գալուց առաջ: Վերջապես, նրան թվաց, որ մանիշակագույն կեղծամը լավ կսազի իր գիշերանոցին: Նա այդ կեղծամը ձգեց իր ճաղատի վրա, պառկեց մահճակալին ու լույսը հանգցրեց:
Կաղլիկ-կատուն էլի մի կես ժամ անցկացրեց պատուհանի գոգերին, հետաքրքրությամբ նայելով թագավորական լուսամուտներից ներս: Իհարկե, դաստիարակված մարդկանց զբաղմունք չէ դա: Եթե պատշաճ բան չէ ականջ դնելը, ապա ի՞նչ եք կարծում, պատուհանից ներս նայելը կարելի՞ է քաղաքավարություն համարել: Ասենք, դա ձեզ չի էլ հաջողվի. չէ՞ որ դուք ոչ կատու եք, ոչ էլ լարախաղաց: Կաղլիկին հատկապես դուր եկավ մի սենեկապետ, որը անկողին մտնելուց առաջ հանեց իր շքեղ մունդիրը, ամբողջ սենյակով մեկ շաղ տվեց շքանշանները, զենքը և ժանյակները: Եվ գիտե՞ք ինչ հագավ: Իր հին, ծովահենական հագուստը՝ մինչև ծնկները քշտած վարտիք, վանդակավոր բաճկոն և սև աչքակապ: Այդ հագուստը հագնելով, ծեր ծովահենը ոչ թե անկողին մտավ, այլ բարձրացավ մահճակալի վրա սարքած ամպհովանու կտուրը: Ըստ երևույթին, նա կարոտել էր նավի գրոտկայմի վերին հորիզոնափայտին: Վերջապես նա վառեց իր էժանագին ծխամորճը և ագահորեն ներս քաշեց ծուխը, որից քիչ էր մնում Կաղլիկ-կատվի հազը բռներ:
- Տեսեք, տեսեք, թե ինչ բան է ճշմարտության ուժը, - շշնջաց մեր դիտողը, - նույնիսկ ծեր ծովահենը սիրում է իր իսկական հագուստները:
Կաղլիկ-կատուն որոշեց, որ զբոսայգում գիշերելն այնքան էլ անվտանգ չէ, կարող են պահակները բռնել: Դրա համար էլ նա նորից անցավ պարիսպը և հայտնվեց քաղաքի կենտրոնական հրապարակում, հասկանալի է, այն հրապարակում, որտեղ ժողովուրդը հավաքվում էր, որպեսզի լսի Ջակոմոն արքայի ճառերը: Կաղլիկ-կատուն սկսեց շուրջը նայել, որպեսզի գիշերելու համար որևէ ապաստարան գտնի, երբ հանկարծ աջ թաթը քոր եկավ:
- Տարօրինակ է, - շշնջաց նա, - չլինի՞ նորին մեծության մոտից կամ այն ծեր ծովահենից վրաս լու է քաշվել:
Բայց քորը բոլորովին այլ տեսակ էր: Ուզում եմ ասել, թե նրա թաթը ոչ թե դրսի կողմից էր քոր գալիս, այլ ներսի: Կաղլիկ-կատուն ուշադիր նայեց իր թաթին և ոչ մի լու չգտավ:

- Հիմա հասկանալի է, - որոշեց նա, - երևի ուզում եմ պատի վրա բան գրել: Հիշում եմ, որ երեկ երեկոյան հենց այդպիսի քոր զգացի, երբ, շնորհակալություն Ջելսոմինոյին, ինձ հաջողվեց հայտնվել այս աշխարհում: Արի ես խաբեբաների թագավորին մի ողջույն թողնեմ:

Նա անաղմուկ մոտեցավ թագավորական պալատին, սեփական աչքերով տեսավ, որ պահապաններն իրեն բռնել չեն կարող: Ինչպես որ պետք էր սպասել մի երկրից, ուր ամեն բան շուռ տված է կատարվում, պահապանները խռմփացնելով քնած էին: Երբեմն-երբեմն պահակապետը շրջում էր և ստուգում, թե արդյո՞ք բոլոր պահակները քնած են:

- Ավելի լավ, - ուրախացավ Կաղլիկ-կատուն և իր կարմիր կավիճով նկարված թաթով, ինքնըստինքյան հասկանալի է, որ աջ թաթով, հենց գլխավոր մուտքի մոտի պատին գրեց.

Ջակոմոն արքան կեղծամ է դնում:

- Սա իսկը այսպիսի մակագրության տեղ է, - գրածին նայելով ասաց նա: - Հիմա հարկավոր է մուտքի մյուս կողմում էլ գրել:

Քառորդ ժամում նա հասցրեց մի հարյուր անգամ այդ խոսքերը գրել, մինչև որ հոգնեց այն աշակերտի նման, որին սխալի համար ստիպում են արտագրություն անել:

- Դե, իսկ հիմա ժամանակն է նանիկ անելու:

Հենց հրապարակի կենտրոնում վեր էր խոյանում մի մարմարե սյուն, որի վրա Ջակոմոն թագավորի քաջագործությունները փառաբանող քանդակներ կային: Ինչ խոսք, այդ ամենը փչոց էր: Այստեղ կարելի էր տեսնել, թե ինչպես է Ջակոմոնը իր հարստությունը աղքատներին բաժանում, ինչպես է Ջակոմոնը կոտորում իր թշնամիներին, ինչպես է Ջակոմոնը անձրևանոցի գյուտը անում, որպեսզի իր հպատակներին պաշտպանի անձրևից: Սյան գագաթին բավականաչափ տեղ կար երեքթաթանի մի կատվի համար, որպեսզի նա պառկեր հանգստանալու՝ հեռու ամեն տեսակի վտանգից: Կաղլիկ-կատուն բարձրաքանդակներից բռնելով մագլցեց վեր ու տեղավորվեց ամենավերևում: Որպեսզի վայր չընկնի, նա պոչը փաթաթեց շանթարգելին, աչքերը փակեց և անմիջապես քնեց:

Գլուխ վեցերորդ

Զակոմոնը առավոտ վաղ
լսում է ճիչ, ծաղր ու ծիծաղ:

Լուսաբացին Կաղլիկ-կատուն արթնացավ սարսափելի աղմուկից:
«Գուցե իմ քնած ժամանակ ջրհեղե՞ղ է եղել» - սարսափով մտածեց նա: Ցած նայելով տեսավ, որ հրապարակը լցված է աղմկող ամբոխով: Նրան շատ բան պետք չէր հասկանալու համար, որ այդ բոլորին այստեղ էր բերել արքայական պալատի պատերին թողած իր մակագրությունը. Զակոմոն արքան կեղծամ է դնում: Խաբեբաների աշխարհում ամենափոքրիկ ճշմարտությունն էլ ավելի շատ աղմուկ է հանում, քան ատոմային ռումբի պայթյունը: Բոլոր փողոցներից հրապարակ էին լցվում մարդիկ, որոնց այստեղ էին բերում աղմուկն ու ծիծաղը: Նոր եկողները սկզբում կարծում էին, թե տոն է:
- Ի՞նչ է պատահել: Մենք հաղթանա՞կ ենք տարել որևէ պատերազմում:
- Ո՛չ, ո՛չ, ավելի լավ բան է եղել:
- Նորին մեծությանը ժառա՞նգ է ծնվել:
- Ո՛չ, ավելի լավ:
- Դե որ այդպես է, անկասկած վերացրել են հարկերը:
Վերջապես, Կաղլիկ-կատվի մակագրությունը կարդալով, նոր եկողները նույնպես սկսում էին ծիծաղել: Ճիչերն ու հռհռոցը արթնացրին Զակոմոն արքային, որը մանիշակագույն գիշերանոցը հագին ննջում էր հանգիստ: Պատուհանի մոտ վազելով, արքան հաճույքից ձեռքերը շփեց: - Ի՜նչ հիանալի բան է: Հապա մի տեսեք, թե ինչքան է ինձ սիրում իմ ժողովուրդը: Բոլորը եկել են այստեղ, որպեսզի ինձ բարի գիշեր մաղթեն: Հեյ, պալատականներ, սենեկապետներ, ծովակալներ, այստեղ եկեք, տվեք իմ գայիսոնն ու պատմուճանը: Ես ուզում եմ պատշգամբ դուրս գալ և ճառ ասել:
Բայց, ճիշտն ասած, պալատականները բավական թերահավատ էին:
- Մեկնումեկին չուղարկե՞նք իմանալու, թե ինչ է պատահել:
- Ձերդ մեծություն, իսկ եթե հանկարծ հեղափոխություն է ծագե՞լ:
- Հիմարություն... Մի՞թե չեք տեսնում, թե մարդիկ ինչպես են ուրախանում:
- Հենց բանն էլ այդ է: Իսկ ինչո՞ւ են նրանք այդքան ուրախ:
- Միանգամայն հասկանալի է, թե ինչու: Չէ՞ որ ես հիմա ճառ եմ ասելու: Ո՞ւր է իմ քարտուղարը:
- Ես այստեղ եմ, տեր իմ:
Զակոմոն թագավորի քարտուղարը թևի տակ միշտ մի հաստ թղթապանակ էր կրում, որի մեջ նախօրոք գրված ճառերն էին: Այստեղ ցանկացած թեմայով ճառեր կային՝ ուսուցանող, հուզիչ, զվարճացնող և բոլորն էլ ծայրից ծայր ստով լցված:
Քարտուղարը բաց արեց թղթապանակը, վերցրեց մի գրոտած թուղթ և վերնագիրը կարդաց.
- «Ճառ բրնձով շիլան ջրիկացնելու մասին»:
- Ո՛չ, ոչ, ուտելու մասին ոչինչ պետք չէ, թե չէ մեկնումեկի ախորժակը կգրգռվի և նա ինձ ուշադիր չի լսի:
- «Ճառ այն մասին, թե ինչպես է ճոճք-ձիու գյուտն արվել», - էլի մի վերնագիր կարդաց քարտուղարը:
- Այ դա վատ չէր լինի: Բոլորը գիտեն, որ ճոճք-ձիերը ես եմ հնարել: Քանի դեռ ես թագավոր չէի, ճոճք-ձիեր ամենևին չկային:

- Ձերդ մեծություն, ես մի ճառ էլ ունեմ մազերի գույնի մասին:
- Հիանալի է, ինձ հենց այդ էլ պետք է. - բացականչեց Ջակոմոնը կեղծամը շոյելով: Նա քարտուղարի ձեռքից խլեց ճառի թուղթն ու վազեց պատշգամբ:
Նորին մեծության հայտնվելու հետ մի այնպիսի պոռթկում եղավ, որ կարող էր ընդունվել և՛ որպես բուռն ծափահարություն, և՛ անզուսպ քրքիջ: Շատ թերահավատ պալատականներ դա ծիծաղի տեղ ընդունեցին և սկսեցին ավելի մեծ կասկածանքով շուրջը նայել: Բայց Ջակոմոնն այդ աղմուկը ծափահարության տեղ ընդունեց և, հպատակներին մի հմայիչ ժպիտով շնորհակալություն հայտնելով, սկսեց կարդալ իր ճառը:
Հույս չունենաք, թե այդ ճառը լրիվ կկարդաք այստեղ: Միևնույն է, այդ ճառից ոչինչ չէիք հասկանա. չէ՞ որ այնտեղ ամեն ինչ թարսուշիտակ է ասված: Ես ձեզ միայն համառոտակի կպատմեմ ճառի բովանդակությունը, հույս դնելով Ջելսոմինոյի հիշողության վրա:
Այսպես, ահա թե Ջակոմոն թագավորը մոտավորապես ինչ ասաց.
- Ի՞նչ է գլուխը առանց մազի: Դա մի պարտեզ է, ուր չկան ծաղիկներ:
- Բրա՛վո, - գոռաց ամբոխը: - Ճի՛շտ է, ճի՛շտ է:
Նույնիսկ ավելի պակաս կասկածամիտ պալատականներին «ճիշտ է» խոսքը ստիպեց զգուշանալ:
Բայց Ջակոմոնը հանգիստ շարունակում էր իր ճառը:
- Քանի դեռ ես այս երկրի թագավորը չէի, մարդիկ հուսահատությունից պոկում էին իրենց մազերը: Երկրի բնակիչները մեկը մյուսի ետևից ճաղատանում էին, իսկ վարսավիրները գործազրկության էին մատնվում:
- Բրա՛վո, - գոռաց ամբոխից ինչ-որ մեկը: - Կեցցեն վարսավիրներն ու կեղծամները:
Ջակոմոնը մի պահ շշմեց: Կեղծամի մասին ակնարկը նրա սրտին դիպավ: Բայց կասկածանքը մի կողմ նետելով, շարունակեց:
- Քաղաքացիներ, հիմա ես ձեզ կպատմեմ, թե ինչու են նարնջագույն մազերն ավելի գեղեցիկ, քան կանաչ մազերը:
Այդ պահին պալատականներից մեկը քաշեց Ջակոմոնի թևքից և ականջին շշնջաց.
- Ձերդ մեծություն, սարսափելի բան է պատահել:
- Ի՞նչ է եղել, ասա:
- Նախ խոսք տվեք, որ լեզուս չեք կտրի, եթե ճշմարտությունն ասեմ:
- Խոստանում եմ:
- Ինչ-որ մեկը պատերին գրել է, որ դուք կեղծամ եք դնում, դրա համար էլ մարդիկ ծիծաղում են:
Ջակոմոնը այնպես սառեց իր տեղում, որ ձեռքից բաց թողեց ճառի թերթերը, որոնք ցած թափվեցին ու վերջ ի վերջո ընկան երեխաների ձեռքը: Եթե թագավորին ասեին, թե նրա պալատը հրդեհ է ընկել, նա երևի ավելի քիչ կատաղեր: Նա հրամայեց ժանդարմներին, որ հրապարակը մարդկանցից ազատեն: Հետո ստիպեց պոկել այն պալատականի լեզուն, որն իջել էր ցած, իմացել, թե ինչ է պատահել և տհաճ լուրը հասցրել արքային: Խեղճը շփոթված լինելով, խնդրեց, որ լեզուն չպոկեն: Նա բոլորովին մոռացել էր, որ պետք է խնդրի ոչ թե լեզուն, այլ քիթը չպոկեն: Այն ժամանակ գոնե կկտրեին քիթը, իսկ լեզուն կմնար տեղում:
Բայց Ջակոմոնը դրանով չհանգստացավ: Հրաման ուղարկեց թագավորության բոլոր ծայրերը, որով հարյուր հազար կեղծ թալեր էր խոստանում նրան, ով ցույց կտար նորին պայծառափայլությանը վիրավորող մարդուն: Պալատի առջև, հրապարակում, ուղիղ հուշասյան մոտ գիլիոտին էր կառուցվել, որպեսզի անզգույշ գրչակի գլուխը կտրեին:
- Օ՛յ, մայրիկ, - բացականչեց Կաղլիկ-կատուն, ձեռքը պարանոցին դնելով և աշխատեց որքան կարելի է լավ թաքնվել հուշասյան վրա: - Ճիշտն ասած, ես չգիտեմ, թե խաբեբաների լեզվով ինչպես է կոչվում սարսափը, բայց եթե սարսափին այստեղ համարձակություն են ասում, ապա ես հիմա շատ համարձակ եմ զգում ինձ:
Զգուշության համար նա ամբողջ օրը կուչ եկած անցկացրեց իր ապաստարանում: Երեկոյան կողմ, երբ բավականաչափ համոզվեց, որ տհաճ հանդիպումներ չեն լինի, հարյուր անգամ շուրջը նայելով,

հուշասյան կատարից իջավ ցած: Երբ հասավ գետնին, ետևի թաթերը պատրաստ էին անմիջապես արանքը ճղելու: Եվ այդ պահին նա դարձյալ զգաց, որ առջևի աջ թաթը տհաճ քոր է գալիս:
- Ահա, էլի սկսվեց, - մլավեց Կաղլիկ-կատուն: - Ստիպված եմ էլի որևէ տհաճ բան գրել Ջակոմոն արքայի մասին, որպեսզի թաթիս քորն անցնի: Պարզ է, եթե ես ծնվել եմ որպես նկար, ամբողջ իմ կյանքում պետք է գրելով զբաղվեմ: Բայց ես այստեղ ոչ մի պատ չեմ տեսնում: Լավ, կգրեմ այնտեղ:
Եվ գիլիոտինի կացնի վրա նա իր նկարած թաթով մի նոր ուղերձ հղեց Ջակոմոն թագավորին:

Լուր է թռչում աշխարհով մեկ՝
Ջակոմոնը քաչալ է լերկ...

Քորն իսկույն անցավ, բայց Կաղլիկ-կատուն անհանգստությամբ նկատեց, որ մի քանի միլիմետրով էլ իր թաթը կարճացավ:
- Առանց այն էլ մի թաթ չունեմ, - ասաց նա, - եթե շարունակեմ գրել, ապա մյուս թաթս էլ կմաշվի, այն ժամանակ ինչպե՞ս պիտի քայլեմ:
- Ոչինչ, այն ժամանակ ես քեզ կօգնեմ, - լսվեց նրա թիկունքից;
Եթե միայն ձայնը լիներ, Կաղլիկ-կատուն կարող էր փախչելով ազատվել: Բայց ձայնն ուժեղ ձեռքեր և մատներ ուներ, որոնք շատ ամուր էին բռնել: Ձեռքերն ու ձայնը պատկանում էին մի պառավ սինյորայի, որն ուներ մոտ երկու մետր հասակ և արտաքինից շատ չոր էր ու խիստ.
- Մորաքույր Եգիպտացորեն...
- Այո, այդ ես եմ, - ֆշշաց պառավ սինյորան, - և քեզ իմ տուն կտանեմ: Դու այնտեղ կհասկանաս, թե ինչ է նշանակում իմ կատուների ընթրիքը թռցնել և կավիճով պատերի վրա գրոտել:
Կաղլիկ-կատուն առանց առարկելու թույլ տվեց, որ Մորաքույր Եգիպտացորենն իրեն փաթաթի շալի մեջ, մանավանդ որ արքայական պալատի դարպասի մոտ մի քանի ժանդարմներ հայտնվեցին:
«Լավ է, որ Մորաքույր Եգիպտացորենն ավելի շուտ երևաց, - մտածեց Կաղլիկ-կատուն: - Ավելի լավ է նրա ձեռքն ընկնել, քան Ջակոմոնի»:

Գլուխ յոթերորդ

Կաղլիկ-կատուն, ոչ դես, ոչ դեն,
կատուներին դաս է տալիս, որ մլավեն:

Մորաքույր Եգիպտացորենը Կաղլիկ-կատվին տուն բերեց և կարեց բազկաթոռին: Այո՛, այո՛, կարեց... ասեղով ու թելով կարեց այնպես, ինչպես սփռոցի վրա են ասեղով կտորից նկարներ կարում: Թելը կտրելուց առաջ նա կրկնակի հանգույց արեց, որպեսզի կարը չքանդվի:

- Մորաքույր Եգիպտացորեն, - ասաց Կաղլիկ-կատուն ուրախ, - գոնե կապույտ թելով կարեիր, ավելի լավ կսազեր իմ մորթուն: Այս նարնջագույն թելն ինձ հիշեցնում է Ջակոմոնի կեղծամը:

- Կեղծամների մասին մի խոսիր, - պատասխանեց Մորաքույր Եգիպտացորենը: - Ամենագլխավորն այն է, որ դու հանգիստ նստես և չփախչես ինձանից, ինչպես երեկ երեկոյան արեցիր: Դու արտառոց կենդանի ես, և ես քեզանից մեծամեծ գործեր եմ սպասում:

- Ես ընդամենը մի կատու եմ, - համեստորեն նկատեց Կաղլիկը;

- Դու մի կատու ես, որը մլավում է, իսկ մեր օրերում դրանք այնքան էլ շատ չեն: Նույնիսկ ամենևին չկան: Կատուները որոշել են շան նման հաչել և, իհարկե, այդ նրանց քիչ է հաջողվում. չէ՞ որ նրանք դրա համար չեն ծնվել: Իսկ ես կատու եմ սիրում, և ոչ թե շուն: Ես տասնյոթ կատու ունեմ: Նրանք քնում են խոհանոցում՝ լվացարանի տակ: Ամեն անգամ, երբ նրանք բերանները բացում են, քիչ է մնում տանից քշեմ: Մի հարյուր անգամ փորձել եմ նրանց մլավել սովորեցնել, բայց չեն լսում ինձ ու չեն վստահում:

Կաղլիկ-կատվին սկսեց դուր գալ այդ պառավ սինյորան, որն, անկասկած, իրեն փրկեց ոստիկաններից և որի զահլան տարել էին հաչող կատուները:

- Ամեն դեպքում, - շարունակեց Մորաքույր Եգիպտացորենը, - կատուների մասին կմտածենք վաղը: Այս երեկո մենք ուրիշ գործով կզբաղվենք:

Նա մոտեցավ գրադարակին և, մի գիրք վերցնելով, վերնագիրը ցույց տվեց Կաղլիկ-կատվին:

- «Տրակտատ մաքրության», - կարդաց կատուն:

- Իսկ հիմա, - հայտարարեց Մորաքույր Եգիպտացորենը հարմար նստելով Կաղլիկ-կատվի դիմացի բազկաթոռին: - Ես այս գիրքը առաջին գլխից մինչև վերջինը կկարդամ քեզ համար:

- Իսկ քանի՞ էջ ունի այդ գիրքը, մորաքույր:

- Մի բան չէ, ընդամենը ութ հարյուր քսանչորս էջ՝ հաշված նաև ցանկը, որ, եթե կուզես, չեմ կարդա: Եվ այսպես՝ «Գլուխ առաջին: Թե ինչու մարդ չպիտի իր անունը պատերին գրի: Անունը կարևոր բան է և նրա հետ չի կարելի խաղալ: Ա՛յ, մի լավ նկար նկարեք և կարող եք ձեր անունը տակը դնել: Մի հիանալի արձան ստեղծեք, և ձեր անունը կգրվի պատվանդանին: Մի լավ մեքենա հնարեք և իրավունք կունենաք այդ մեքենան ձեր անունով կոչել: Միայն նրանք, ովքեր որևէ լավ բան անել չեն կարողանում, նրանք են իրենց անունը պատերին գրում»:

- Լիովին համաձայն եմ, - հայտարարեց Կաղլիկ-կատուն, - բայց չէ՞ որ ես պատերին ոչ թե իմ, այլ Ջակոմոն արքայի անունն եմ գրել:

- Լռիր և լսիր: «Գլուխ երկրորդ: Ինչու չի կարելի պատերին գրել նաև ընկերոջ անունը»:

- Ես ընդամենը մի բարեկամ ունեմ, - ասաց Կաղլիկ-կատուն: - Ես ունեի մի ընկեր, որին կորցրի: Ես չեմ ուզում այդ գլուխը լսել, թե չէ կհուզվեմ:

- Բայց դու, միևնույն է, պիտի լսես: Չէ՞ որ տեղից շարժվել չես կարող:
Բայց այդ ժամանակ զանգը հնչեց, և Մորաքույր Եգիպտացորենը վեր կացավ, որպեսզի գնա դուռը բանալու: Ներս մտավ մի տասը տարեկան աղջիկ: Նրա աղջիկ լինելու մասին կարելի էր գլխի ընկնել միայն ծոծրակին հավաքած ձիու պոչ հիշեցնող մազերի փնջից: Մնացած ամեն ինչով հանգիստ կարելի էր տղայի տեղ ընդունել, որովհետև սպորտային շալվար էր հագել և վանդակավոր կովբոյկա տիպի վերնաշապիկ:
- Ռոմոլե՛տա, - զարմանքից իրեն կորցրած բացականչեց Կաղլիկ-կատուն:
Աղջիկը նայեց նրան և աշխատեց հիշել.
- Որտե՞ղ ենք հանդիպել:
- Ոնց թե, - շարունակեց Կաղլիկ-կատուն, - քեզ կարելի է նույնիսկ իմ մայրիկը համարել: Մի՞թե իմ գույնը քեզ ոչինչ չի ասում:
- Ասում է, - պատասխանեց Ռոմոլետան: - Մի անգամ ես դպրոցից կավիճ էի փոխ վերցրել:
- Փո՞խ էիր վերցրել, - հարցրեց Մորաքույր Եգիպտացորենը: - Իսկ ուսուցչուհին գիտե՞ր այդ մասին:
- Ես չհասցրեցի ասել նրան, - բացատրեց Ռոմոլետան, - մեծ դասամիջոցի զանգը շուտ տվեց:
- Հիանալի է, - ասաց Կաղլիկ-կատուն, - ուրեմն ինձ կարելի է այդ կավիճի աղջիկը համարել: Ահա թե ինչու ես կրթված կատու եմ՝ խոսել գիտեմ, կարդալ-գրել և հաշվել գիտեմ: Իհարկե, ես քեզ երախտապարտ կլինեի, եթե ինձ չորս թաթով նկարեիր: Բայց ոչինչ, այսպես էլ գոհ եմ:
- Ես էլ անչափ ուրախ եմ քեզ նորից տեսնելու համար, - ժպտաց Ռոմոլետան: - Ո՛վ գիտե, թե ինչքան նորություն կունենաս ինձ պատմելու:
- Ինձանից բացի բոլորը գոհ են, - միջամտեց Մորաքույր Եգիպտացորենը: - Կարծում եմ, դուք երկուսդ էլ պետք է սովորեք այն ամենը, ինչ գրված է իմ գրքում: Ռոմոլետա, նստիր այնտեղ:
Աղջիկը կոշիկները մի կողմ նետեց և ոտքերը հավաքած նստեց բազկաթոռին: Մորաքույր Եգիպտացորենն սկսեց կարդալ երրորդ գլուխը, որի մեջ ասվում էր, թե ինչու չի կարելի պատերի վրա գրել անցորդներին վիրավորող խոսքեր: Կաղլիկ-կատուն և Ռոմոլետան մեծ հետաքրքրությամբ էին լսում: Դե, Կաղլիկ-կատուն, որ կարված Էր աթոռին, ուրիշ ի՞նչ կարող էր անել: Իսկ Ռոմոլետան դա անում Էր մի փոքր խորամանկությամբ, թե ինչու՝ շուտով կիմանաք:
Տասներորդ գլխին հասնելով, Մորաքույր Եգիպտացորենն սկսեց հորանջել: Սկզբում նա ամեն մի Էջին մեկ-երկու անգամ էր հորանջում, հետո սկսեց ավելի ստեպ-ստեպ հորանջել՝ ամեն էջին երեք-չորս անգամ, ապա ամեն տողին մի անգամ, հետո ամեն բառից հետո և վերջապես այնքան քաղցր հորանջեց, որ բերանը փակելու հետ փակվեցին նաև բարի սինյորայի աչքերը:
- Ահա, միշտ այսպես Է, - բացատրեց Ռոմոլետան, - կհասնի մինչև գրքի կեսը և կքնի:
- Եվ ի՞նչ: Հիմա մենք պիտի սպասենք նրա արթնանալո՞ւն, - հարցրեց Կաղլիկ-կատուն: - Նա ինձ այնքան ամուր է կարել, որ եթե ուզենամ հորանջել բերանս բացել չեմ կարողանա: Բացի այդ, ես շտապում եմ, ուզում եմ փնտրել մի բարեկամի, որին երեկվանից չեմ տեսել:
- Հիմա ես ամեն բան կարգի կգցեմ, - ասաց Ռոմոլետան: Մկրատը վերցնելով, նա զգուշորեն թելերը կտրեց: Կաղլիկ-կատուն թռավ հատակին, ընդարմացած մարմինը կոտրատեց և թեթևացած շունչ քաշեց:
- Շուտ արա, - շշնջաց Ռոմոլետան, - անցնենք խոհանոցով: Խոհանոցում մութ-մութ Էր, բայց անկյունում, այնտեղ, ուր երևի լվացարանն էր, տասնչորս կանաչ կրակներ էին կայծկլտում:
- Այստեղից կատվի հոտ է գալիս, - ասաց մեր Կաղլիկը: - Ես նույնիսկ յոթ կատվի հոտ եմ առնում:
- Դրանք մորաքրոջ կատուներն են: Լվացարանի մոտից ուրախ քրքջոց լսվեց.
- Դու, բանից պարզվում է, ոչ միայն կաղ ես, այլև կույր: Մի՞թե չես տեսնում, որ մենք էլ քեզ նման շուն ենք:
- Խե՛ղճ սուտլիկներ, - բացականչեց Կաղլիկ-կատուն՝ կարգին ջղայնանալով: - Ուղղակի ձեր բախտը բանել Է, որ ես ժամանակ չունեմ, թե չէ, կսովորեցնեի ձեզ մլավել: Մորաքույր Եգիպտացորենը դրա համար ինձանից շնորհակալ կլիներ:
- Հա՛ֆ, հա՛ֆ, - խմբով պատասխանեցին յոթ կատվիկները:



Կաղլիկ-կատուն կաղալով մոտեցավ իր յոթ ցեղակիցներին և նստեց նրանց դիմաց:
- Մյա՛ու - ասաց նա հանդգնորեն:
Յոթ կատվիկները իրենց վատ զգացին:
- Լսեցի՞ք, - հարցրեց ամենափոքրիկ կատվիկը: - Նա իրոք կարողանում է ասել «մյաու»:
- Այո, այո... շան համար նույնիսկ վատ չէ:
- Մյա՛ու, - կրկնեց Կաղլիկը, - մյա՛ու, մյա՛ու, մյա՛ու...

- Սա երևի ռադիոյում աշխատում է որպես ձայներ նմանեցնող: Մի լսեք: Նա պարզապես ուզում է, որ ծափահարենք, - ասաց ամենաավագ կատվիկը:
- Մյա՛ու... - մի անգամ էլ մլավեց Կաղլիկ-կատուն:
- Անկեղծ ասած, ես էլ դեմ չեմ այդքան լավ մլավելուն: Եթե ուզում եք իմանալ, ես ուղղակի զզվել եմ հաչելուց: Ամեն անգամ երբ սկսում եմ հաչել, այնպես եմ սարսափում, որ մազերս բիզ-բիզ են կանգնում:
- Ախ դու, համառիկս: Իսկ գիտե՞ս, թե ինչու ես վախենում, - ասաց Կաղլիկ-կատուն: - Որովհետև դու կատու ես և ոչ թե շուն:
- Խնդրում եմ ինձ չվիրավորեք: Բավական է, որ մենք քեզ լսում ենք, ո՞վ գիտի, թե դու քեզանից ինչ ես ներկայացնում:
- Ես էլ ձեզ պես կատու եմ:
- Չգիտեմ, դու շուն ես թե կատու, բայց ես էլ կուզենայի մլավել:
- Փորձի՛ր, փորձի՛ր, - ասաց Կաղլիկ-կատուն: - Եվ կիմանաս, թե դա ինչ բան է: Բերանդ ավելի քաղցր համ կընկնի, քան...
- Քան Մորաքույր Եգիպտացորենի տված կաթը, - ասաց ամենափոքրիկ կատվիկը:
- Հարյուր անգամ քաղցր:
- Ես շատ, շատ եմ ուզում փորձել, - ծվծվաց կատվիկը:
- Մյա՛ու, մյա՛ու, - թաքուն մլավեց Կաղլիկ-կատուն: - Համարձակ, համարձակ եղեք, եղբայր կատվիկներ, սովորեք մլավել:
Եվ այն ժամանակ, երբ Ռոմոլետան ծիծաղից փորը բռնել էր, ամենափոքրիկ կատվիկը սկսեց վախվխելով մլավել: Երկրորդ կատվիկը կրկնեց արդեն ավելի ուժեղ: Հետո երրորդը միացավ երգչախմբին: Եվ շուտով յոթը կատուները, յոթ ջութակի նման, ձայնակցելով Կաղլիկ-կատվին, մլավում էին:
- Հը՛, հիմա ի՞նչ կասեք:
- Իսկապես որ քաղցր է:
- Ավելի քաղցր, քան շաքարով կաթը:
- Ի միջի այլոց, - բացականչեց Ռոմոլետան, դուք կարթնացնեք Մորաքույր Եգիպտացորենին: Գնանք, Կաղլիկ:
Ռոմոլետան և Կաղլիկ-կատուն վազեցին դեպի բակ:
Մորաքույր Եգիպտացորենն արթնացավ և մոտեցավ խոհանոցի դռանը: Լսվեց էլեկտրաանջատիչի ձայնը և երևաց, թե ինչպես են պառավ սինյորայի դեմքով երջանկության արցունքներ հոսում:
- Փիսիկնե՛րս, վերջապե՛ս, վերջապե՛ս.,,
Սկզբում յոթ կատվիկներն անվճռական էին: Նրանք նայում էին իրենց տիրուհուն, առանց դադարի մլավում ու չէին հասկանում, թե ինչ են նշանակում նրա աչքերից հոսող առվակները: Հետո նայեցին դռանը և իրար հետևից վազեցին բակ, շարունակելով մլավել:
Մորաքույր Եգիպտացորենն արցունքները սրբելով, նայում էր նրանց հետևից:
- Ապրե՛ք, ապրե՛ք, - կրկնում էր նա, - ա՛յ դուք ապրեք:
Կատվիկները պատասխանում էին նրան.
- Մյա՛ու... մյա՛ու...
Բայց կար մեկը, որ աննկատելիորեն հետևում էր այդ անսովոր տեսարանին: Դա սինյոր Կալիմերն էր՝ տան տերը, նա այնքան ժլատ էր, որ ինքն ապրում էր ձեղնահարկում, իսկ տունը լրիվ՝ մինչև ամենավերջին սենյակը, վարձով էր տալիս: Շատ զզվելի մարդ էր և նման էր մատնիչի: Շատ անգամ էր Կալիմերը Մորաքույր Եգիպտացորենին արգելել, որ տանը կենդանիներ պահի, բայց պառավ սինյորան, հասկանալի է, չէր լսում նրան:
- Ես բնակարանի համար վճարում եմ, - ասում էր նա, - և շատ թանկ: Իմ տանը ում ուզենամ, կընդունեմ:

Իր ժամանակի մեծ մասը Կալիմերն անց էր կացնում ձեղնահարկի պատուհանի մոտ, դիտում էր, թե ինչով են զբաղված ուրիշները: Հենց դրա համար էլ նա այդ երեկո տեսավ կատուներին, լսեց, թե ինչպես են մլավում և նույնիսկ այն, թե ինչպես է Մորաքույր Եգիպտացորենը խրախուսում նրանց:
- Ա՛յ, ապրեք դուք, ապրե՛ք...
- Ահա, բռնվեցի՛ր, - ասաց Կալիմերը ձեռքերը շփելով: - Ուրեմն այդ պառավ վհուկը հավաքում է թափառական շներին և նրանց մլավել է սովորեցնում: Այս անգամ ես նրան իր տեղը կդնեմ: Հենց հիմա կգրեմ մինիստրին:
Պատուհանը փակելով, նա վերցրեց թանաք, թուղթ ու գրիչ և գրեց.
-«Պարոն մինիստր,
Անհասկանալի բաներ են տեղի ունենում, որոնց հետ մեր քաղաքի բնակիչները ոչ մի կերպ չեն ցանկանում հաշտվել: Սինյորա Մորաքույր Եգիպտացորենն այս է անում, այն է անում և այլն և այլն...»:
Ստորագրություն՝ «Ստի բարեկամ»:
Նամակը ծրարելով, նա վազեց դեպի փոստարկղ: Հակառակի պես այն ժամանակ, երբ Կալիմերը տուն էր դառնում, Ռոմոլետան և Կաղլիկ-կատուն կանգ էին առել փողոցում, որպեսզի անեին այն, ինչի համար դեռ էլի մի տասը գլուխ պիտի լսեին Մորաքույր Եգիպտացորենի գրքից: Դուք արդեն գիտեք, որ Կաղլիկ-կատվի թաթը երբեմն մի առանձնահատուկ ձևով քոր էր գալիս, և նա չէր կարողանում իրեն զսպել, որպեսզի որևէ բան չգրի պատերին: Հենց այդ ժամանակ նա ի կատար էր ածում իր ցանկությունը, իսկ Ռոմոլետան նախանձով նայում էր նրան, քանի որ նրա գրպանում ոչ մի կտոր կավիճ չկար: Նրանցից ոչ մեկը Կալիմերին չնկատեց:
Նրանց տեսնելով, մատնիչն իսկույն զգաց, որ ինչ-որ կասկածելի բան է կատարվում: Թաքնվելով դարպասախորշում, նա մեծ հաճույքով կարողացավ կարդալ Կաղլիկ-կատվի նոր ուղերձը, որի մեջ ասվում էր.

Երբ կատուները կտրեն հաչոցը,
Կկտրվի այնժամ արքայի պոչը...

Դեռ Ռոմոլետան և Կաղլիկ-կատուն չէին հասցրել գնալ, երբ Կալիմերը սլացավ տուն և մինիստրին մի նոր նամակ գրեց.
«Ձերդ բարձրություն, համարձակվում եմ հաղորդել, որ պատերին գրված մեր թագավորի համար վիրավորական մակագրությունների հեղինակները ապրում են սինյորա Եգիպտացորենի տանը: Դրանք են Եգիպտացորենի ազգականուհի Ռոմոլետան և այն շներից մեկը, որոնց նա հավաքում է փողոցներում, որպեսզի մլավել սովորեցնի: Հավատացած եմ, որ ձեզանից կստանամ խոստացած պարգևը՝ հարյուր հազար կեղծ թալեր:
Կալիմեր Մուրիակ»:
Այդ ժամանակ Կաղլիկ-կատուն անհանգստությամբ նկատեց, որ իր աջ թաթը մի քանի միլիմետրով էլ է կարճացել:
- Հարկավոր է մի միջոց գտնել, որ գրելիս թաթս չկարճանա, - հառաչելով ասաց նա:
- Սպասի՛ր, - բացականչեց Ռոմոլետան, - ինչ հիմարն եմ, որ միանգամից չմտածեցի: Ես մի նկարիչ եմ ճանաչում, որն ապրում է մոտերքում: Նրա սենյակը ձեղնահարկում է և միշտ բաց է լինում: Նա ոչինչ չունի աշխարհում, դրա համար էլ գողերից վախ չունի: Դու կարող ես մտնել նրա մոտ և փոխարինաբար մի քիչ ներկ վերցնել: Նույնիսկ կարող ես վերցնել մի ամբողջ տուփ: Գնանք, ես քեզ ճանապարհը ցույց կտամ, հետո կվերադառնամ տուն: Ես չեմ ուզում, որ Մորաքույր Եգիպտացորենն ինձ համար անհանգստանա:

Գլուխ ութերորդ

Քաջ նկարիչ Բանանիտոն տեղից վեր թռավ,
վրձինը նետեց ու դանակն առավ:

Այդ երեկո նկարիչ Բանանիտոն ոչ մի կերպ չէր կարողանում քնել:

Աթոռին կուչ եկած՝ նա մեն-մենակ նստել էր իր ձեղնահարկում և, հայացքը հառած նկարներին, տխուր մտածում էր. «Չէ, իզուր ջանքեր եմ թափում: Իմ նկարներում ինչ-որ բան պակասում է: Այդ ինչ-որ բանը որ լիներ, սրանք իսկական գլուխգործոցներ կդառնային: Բայց թե ի՞նչ է պակասում, այդ է, որ չգիտեմ»:

Հենց այդ ժամանակ էլ Կաղլիկ-կատուն բարձրացավ Բանանիտոյի պատուհանի գոգը: Տանտիրոջն իզուր չանհանգստացնելու համար նա մագլցելով բարձրացել էր կտուրը, որպեսզի պատուհանից մտնի ներս:

- Վայ, դեռ քնած չէ, - կամաց մլավեց կատուն: - Ի՞նչ արած, ստիպված պիտի սպասեմ այստեղ: Ես չեմ ուզում, որ ինձ անքաղաքավարի համարեն: Երբ Բանանիտոն քնած լինի, ես ներկը կվերցնեմ, նա իսկի չի էլ նկատի: Իսկ հիմա մնում է միայն նկարներին նայել:

Սակայն այն, ինչ տեսավ Կաղլիկ-կատուն, նրան շշմեցրեց: «Իմ կարծիքով, - մտածեց նա, - նկարներում ամեն ինչ չափազանցված է: Եթե այդպես չլիներ, մի կերպ տանելի կլինեին: Բայց, այնուամենայնիվ, ի՞նչ է եղել: Չափազանց շատ են ոտքերը: Այն ձին, օրինակ, տասներեք ոտանի է: Տեսեք, իսկ ես միայն երեքն ունեմ... Բացի այդ, քթերն են շատ: Այս դիմանկարի վրա երեք քիթ կա... Ես չեմ նախանձում այդ սինյորին: Հարբուխ որ ընկնի, ստիպված պիտի միանգամից երեք թաշկինակ գործածի: Ահա, նկարիչը կարծես ինչ-որ բան է ուզում անել...»: Բանանիտոն, իրոք, վեր կացավ իր աթոռից:

«Այստեղ կարծես կանաչ գույնը քիչ է, - մտածեց նա, - դե, իհարկե, հենց կանաչն է պակաս»:

Նա ներկը բացեց ներկապնակի վրա և սկսեց կանաչ գույն ավելացնել բոլոր նկարներին՝ ձիու ոտքերին, երեք քթին, ինչ-որ սինյորայի աչքերին, որոնք վեց հատ էին՝ ամեն կողմից երեքը:

Հետո նա մի քանի քայլ հետ գնաց, աչքերը կկոցեց, որպեսզի իր աշխատանքի արդյունքը լավ գնահատի:

- Ո՛չ, ոչ, - ասաց նա քթի տակ, - երևի դրանից չէ, որովհետև նկարները իսկի էլ չլավացան:

Կաղլիկ-կատուն իր դիտակետից այդ խոսքերը լսել չէր կարող, բայց նա տեսավ, թե ինչպես Բանանիտոն գլուխը տխուր կախեց:

«Գրազ կգամ, որ նա խիստ վշտացած է», - մտածեց Կաղլիկ-կատուն:

- Ես չէի ուզենա այդ վեցաչքանի սինյորայի տեղը լինել: Ախր, որ նրա տեսողությունը թուլանա, ստիպված վեց ապակի ունեցող ակնոց պիտի առնի, որը, երևի, բավականին թանկ կնստի:

Իսկ Բանանիտոն արդեն ուրիշ ներկ էր ավելացրել ներկապնակին և, ծղրիդի նման սենյակում թռչկոտելով, մեկ այս, մեկ այն նկարին գույներ էր ավելացնում:

«Այո, այստեղ հենց դեղինը կսազի, - մտածում էր նա, - ես գտնում եմ, որ այստեղ դեղնությունն է մի փոքր պակասում»:

«Ամեն ինչ կորավ, - այդ ժամանակ մտածում էր Կաղլիկ-կատուն, հիմա նկարները ձվածեղ կդառնան»:

Բայց Բանանիտոն ներկապնակն ու վրձինը նետեց հատակին և կատաղորեն սկսեց տրորել ոտքերով, հետո էլ սկսեց իր մազերը պոկել:
«Եթե նա շուտով չթողնի այդ զբաղմունքը, - անցավ Կաղլիկի մտքով, - Ջակոմոն թագավորի նման ճաղատ կդառնա: Չփորձե՞մ հանգստացնել: Հանկարծ ու նեղանա: Կատուների խորհուրդները ոչ ոք դեռևս չի լսել; Ասենք, դա դժվար էլ է: Չէ՞ որ գրեթե ոչ ոք կատվի լեզուն չի հասկանում»: Վերջապես Բանանիտոն ձեռ քաշեց իր մազերից:
- Հերիք է, - որոշեց նա, - ավելի լավ է խոհանոցից դանակը վերցնեմ ու նկարներս կտոր-կտոր անեմ, այնքան մանրեմ, որ խայտաբղետ մանրօղակներ դառնան: Երևի ինձ վիճակված չի նկարիչ լինել:
Բանանիտոյի «խոհանոցը» իրենից ներկայացնում էր մի փոքրիկ սեղան, որը դրված էր նույն ձեղնահարկի մի անկյունում: Սեղանի վրա ինքնավառն էր, մի փոքրիկ պղինձ, թավա և մի քանի դանակ-պատառաքաղ: Սեղանը պատուհանից հեռու չէր, և Կաղլիկ-կատուն ստիպված թաքնվեց ծաղկամանի հետևը, որպեսզի աննկատելի մնա: Ասենք, եթե նույնիսկ չթաքնվեր, միևնույն է, Բանանիտոն չէր նկատի, որովհետև նրա աչքերում կաղինի չափ արցունքի կաթիլներ էին հայտնվել:
«Հիմա ի՞նչ է ուզում անել, - մտածեց Կաղլիկ-կատուն: - Գդալն է վերցնում... այդպես, երևի սոված է: Չէ, գդալը ցած է դնում և վերցնում է դանակը: Ես սկսում եմ անհանգստանալ: Չլինի՞ որևէ մեկին ուզում է մորթել, ասենք, թեկուզ իր քննադատին: Ի միջի այլոց, նա պետք է ուրախանա, որ իր նկարներն այդքան այլանդակ են: Չէ՞ որ դրանք եթե ցուցահանդես ընկնեն, մարդիկ ճշմարտությունը չեն կարող ասել, բոլորը կասեն, որ այդ նկարներն իսկական գլուխգործոց են, ու նա ահագին փող կաշխատի»:
Մինչ Կաղլիկ-կատուն նման մտքերով էր տարված, Բանանիտոն դարակից հանեց հեսանն ու սկսեց դանակը սրել:
- Ես ուզում եմ, որ դանակս ածելու պես սուր լինի: Թող իմ աշխատանքների հետքն անգամ չմնա, - ասում էր նա:
«Երևում է, նա վճռել է որևէ մեկին սպանել, - մտածում էր Կաղլիկ-կատուն, - և ուզում է, որ հարվածը մահացու լինի: Սպասեք, իսկ եթե ուզում է ինքնասպանություն գործե՞լ... Դա ավելի սարսափելի հանցագործություն է: Հարկավոր է անպայման մի բան անել: Ոչ մի րոպե չի կարելի կորցնել: Եթե ժամանակին սագերը փրկել են Հռոմը, հապա ինչո՞ւ կաղլիկ մի կատու չփրկի հուսահատ նկարչին»:
Եվ մեր փոքրիկ հերոսը կատաղորեն մլավելով՝ իր երեք ոտներով համարձակ թռավ սենյակ: Հենց նույն րոպեին դուռը լայն բացվեց ու շնչակտուր ձեղնահարկ ներխուժեց քրտնած, ամբողջովին կրով ու փոշով ծածկված... հապա գուշակեցեք, ո՞վ...
- Ջելսոմի՛նո...
- Կաղլի՛կ...
- Ինչքա՛ն ուրախ եմ, որ նորից տեսնում եմ քեզ:
- Մի՞թե այդ դու ես, Կաղլիկս...
Եվ նկարչի աչքի առաջ, որը զարմանքից բերանը բաց, դանակը ձեռքին մնացել էր կանգնած, Ջելսոմինոն ու Կաղլիկ-կատուն գրկախառնվեցին և ուրախությունից սկսեցին պար գալ:
Այն մասին, թե ինչու էր մեր տենորը բարձրացել մինչև ձեղնահարկ և թե ինչու էր հենց այդ դուռը բացել, մանրամասն կպատմվի հետևյալ գլխում:

Գլուխ իններորդ

Ջելսոմինոն, ահա թե ինչ,
հանդես եկավ որպես երգիչ:

Դուք երևի հիշում եք, որ Ջելսոմինոն քնեց նկուղում՝ ածուխի կույտի վրա: Ճիշտ որ ասենք, դա այնքան էլ հարմար անկողին չէր, բայց դե երիտասարդները հարմարությանն այնքան էլ չեն նայում, ու թեև ածուխի սուր կտորները ծակում էին նրա կողերը, այդ չէր խանգարում, որպեսզի Ջելսոմինոն պինդ քնի և դեռ երազ էլ տեսնի:

Քնի մեջ նա սկսեց երգել: Շատերը քնելու ժամանակ խոսելու սովորություն ունեն, իսկ Ջելսոմինոն երգում էր: Երբ արթնանում էր, ոչինչ չէր հիշում: Գուցե նրա ձայնը այդ խաղը խաղում էր տղայի գլխին այն բանի համար, որ Ջելսոմինոն ամբողջ ցերեկը ստիպում էր նրան լռել: Դրանով ձայնը պարզապես վրեժ էր լուծում իր տիրոջից այն բոլոր դեպքերի համար, երբ վերջինս արգելում էր նրան դուրս պրծնել կոկորդից:

Ջելսոմինոն քնի մեջ կիսաձայն էր երգում, բայց դա էլ բավական էր, որպեսզի քաղաքի կեսին ոտքի հաներ:

Բնակիչները պատուհանից նայում էին դուրս ու զայրանում.

- Որտե՞ղ է կորել գիշերապահը: Սա ուղղակի անտանելի է. մի՞թե մեկը չկա, որ այդ հարբեցողին ստիպի լռել:

Գիշերապահները վազվզում էին այս ու այն կողմ, բայց դատարկ փողոցներում ոչ ոք չկար:

Արթնացավ նաև քաղաքային թատրոնի դիրեկտորը, որն ապրում էր քաղաքի հակառակ ծայրում՝ Ջելսոմինոյի նկուղից մի տասը կիլոմետր հեռու:

- Ի՜նչ սքանչելի ձայն է, - բացականչեց նա: - Այ սա իսկական տենոր է: Բայց ո՞վ է այսպես երգում: Ա՜խ, եթե կարողանայի նրան ձեռք գցել, իմ թատրոնը հանդիսականների առատությունից փուլ կգար: Այդ մարդը կարող է ինձ փրկել:

Եվ իրոք, դուք պետք է իմանաք, որ այդ քաղաքի թատրոնը ճգնաժամ էր ապրում, ավելի ճիշտ կործանման եզրին էր կանգնած: Խաբեբաների աշխարհում երգիչները քիչ էին, եղածներն էլ իրենց պարտքն էին համարում կեղծ երգել, և ահա թե ինչու, երբ նրանք լավ էին երգում, հանդիսականներն սկսում էին աղաղակել, «Հերիք է հաչես, շուն», իսկ երբ վատ էին երգում, գոռում էին. «Կեցցես, բրավո, բիս»: Երգիչները, հասկանալի է, գերադասում էին, որ «Կեցցես» կանչեն, և վատ էին երգում:

Թատրոնի դիրեկտորը շտապ հագնվեց, դուրս գալով փողոց, գնաց դեպի քաղաքի կենտրոնը, որտեղից, նրա կարծիքով, ձայնը գալիս էր: Ես չեմ պատմի, թե քանի անգամ նրան թվաց, որ արդեն հետքը գտել է:

- Անպայման այս տանն է, - ամեն անգամ ասում էր նա, - կասկած չկա, ձայնը լսվում է վերին հարկի պատուհանից:

Երկու ժամ հետո հոգնությունից կիսամեռ էր եղել և արդեն ուզում էր հրաժարվել հետագա որոնումներից, երբ հանկարծ հասավ այն նկուղին, ուր քնած էր Ջելսոմինոն: Պատկերացնո՞ւմ եք, թե որքան զարմացավ, երբ վառիչի թույլ լույսի տակ տեսավ, որ արտասովոր ձայնը պատկանում է ածխի կույտի վրա քնած մի պատանու:

- Եթե նա քնի մեջ այդքան լավ է երգում, կարելի է պատկերացնել թե ինչքան լավ կերգի արթուն ժամանակ, - ձեռքերը շփելով ասաց թատրոնի դիրեկտորը: - Այս պատանին ուղղակի գանձ է և, ինչպես երևում է՝ ինքը չգիտի այդ: Ես գտա այդ գանձը, և նա կօգնի ինձ, որ հարստանամ:



Նա արթնացրեց Ջելսոմինոյին և ներկայացավ.
- Ես մաեստրո Դոմիսոլն եմ և տասը կիլոմետր անցել եմ ոտքով, որպեսզի գտնեմ քեզ: Դու անպայման հենց վաղը երեկոյան կերգես իմ թատրոնում: Իսկ հիմա վեր կաց, գնանք մեր տուն և փորձ անենք:

Ջելսոմինոն փորձեց հրաժարվել: Նա անընդհատ ասում էր, թե քունը տանում է. բայց Դոմիսոլը խոստացավ նրան տրամադրել երկուտեղանոց շատ հարմար մի անկողին: Հետո Ջելսոմինոն ասաց, որ երբեք երաժշտությամբ չի զբաղվել, իսկ մաեստրոն սկսեց երդվել, որ նման ձայն ունեցողի համար բոլորովին էլ պետք չէ նոտաներ իմանալը:
Իսկ Ջելսոմինոյի ձայնը, պարզ է, շտապեց օգտվել հարմար առիթից, «Համարձակ եղիր, - հրահրում էր նա իր տիրոջը: - Մի՞թե դու չէիր, որ ուզում էիր երգիչ դառնալ: Համաձայնիր, թերևս դա լինի քո երջանկության սկիզբը»:
Մաեստրո Դոմիսոլը վերջ տվեց այդ հակաճառություններին և, բռնելով Ջելսոմինոյի թևից, զոռով քարշ տվեց իր հետևից: Տուն գալով, նա նստեց դաշնամուրի առաջ և, ակորդ հնչեցնելով, հրամայեց Ջելսոմինոյին.
- Երգի՛ր:
- Գուցե պատուհանները բացե՞նք, - քաշվելով ասաց Ջելսոմինոն:
- Ո՛չ, ո՛չ, ես չեմ ուզում հարևաններին անհանգստացնել:
- Իսկ ի՞նչ երգեմ:
- Ինչ ուզում ես երգիր: Թեկուզ այն երգերից մեկը, որ երգում են ձեր գյուղում:
Եվ Ջելսոմինոն սկսեց երգել իրենց գյուղի երգերից մեկը: Նա աշխատում էր որքան կարելի է ցածր երգել և միաժամանակ աչքը չէր կտրում պատուհանների ապակիներից, որոնք ուժեղ ցնցվում էին ու թվում էր, թե որտեղ որ է հազար կտոր կլինեն:
Սակայն ապակիները չէին ջարդվում, դրա փոխարեն, երկրորդ տունը երգելիս, փշուր-փշուր եղավ ջահը և սենյակը թաղվեց խավարի մեջ:
- Հիանալի՛ է, - ասաց մաեստրո Դոմիսոլը մոմը վառելով: - Սքանչելի է, ցնցող: Արդեն երեսուն տարի է, որ այս սենյակում տենորներ են երգում և նրանցից ոչ մեկին չի հաջողվել Նույնիսկ սուրճի մի գավաթ ջարդել:
Երրորդ քառատողի վերջում, ինչպես ենթադրում էր Ջելսոմինոն, պատուհանի ապակիները փշրվելով ցած թափվեցին: Մաեստրո Դոմիսոլը վեր թռավ տեղից և, նետվելով դեպի Ջելսոմինոն, պինդ գրկեց նրան.
- Տղաս, - հրճվանքից լալով գոռում էր նա: - Ահա և ապացույց, որ ես չեմ սխալվել: Դու կլինես բոլոր ժամանակների ամենամեծ երգիչը: Քո երկրպագուները կհանեն ավտոմեքենայից անիվները և քեզ ձեռքերի վրա կտանեն:
- Բայց ես ավտոմեքենա չունեմ, - նկատեց Ջելսոմինոն:
- Դու տասնյակ ավտոմեքենաներ կունենաս: Յուրաքանչյուր օր դու նոր ավտոմեքենա կնստես: Փառք տուր երկնքին, որ քեզ հանդիպեց մաեստրո Դոմիսոլը: Իսկ հիմա էլի մի երգ երգիր:
Ջելսոմինոն մի փոքր հուզվեց: Դե, իհարկե, կյանքում առաջին անգամ էին նրան երգելու համար գովում: Նա փառասեր չէր, բայց գովասանքը բոլորին էլ դուր է գալիս: Նա հաճույքով մի երգ էլ երգեց և այս անգամ արդեն չէր աշխատում զսպել իր ձայնը: Ընդամենը մեկ թե երկու բարձր նոտա վերցրեց, բայց այդ էլ բավական էր, որպեսզի իսկական խառնաշփոթություն ու իրարանցում սկսվեր:
Հարևան տներում պատուհաններն իրար հետևից ջարդվում էին, մարդիկ սարսափած գլուխները դուրս էին հանում պատուհաններից ու բղավում.
- Երկրաշա՛րժ... օգնեցե՛ք, օգնեցե՛ք... Ով կարող է, թող գլուխն ազատի...
Ականջ ծակող սուլոցով սլացան հրշեջ մեքենաները: Փողոցում հայտնվեցին մարդկանց խուռներամ խմբեր, որոնք նետվում էին քաղաքից դուրս, քարշ տալով տնային իրերով լի սայլակները, քնած երեխաներին գրկած:
Մաեստրո Դոմիսոլը ուրախությունից կորցրել էր իրեն:
- Շշմեցուցիչ է, չտեսնված, չլսված: - Նա Ջելսոմինոյին գրկած անընդհատ համբուրում էր: Այնուհետև տղայի պարանոցին տաք վզնոց գցեց, որ հանկարծ ձայնը չմրսեցնի, իսկ հետո հրավիրեց ճաշասենյակ և մի այնպիսի ճաշով հյուրասիրեց, որը, երևի, մի տասը գործազուրկի կկշտացներ:

- Կե՛ր, որդյակ իմ, կե՛ր, - ասում էր նա: - Այս հավի միսը մոտիկ քաշիր: Հավի միսն օգնում է ավելի բարձր նոտաներ վերցնելուն: Իսկ ոչխարի այս ոտքը հատուկ թավշյա երանգ է տալիս ցածր նոտաներին: Կեր: Այսօրվանից սկսած դու իմ հյուրն ես: Դու կապրես իմ ամենալավ սենյակում, որի պատերը կկարգադրեմ թաղիքով պատեն և դու, ինչքան ուզում ես, կարող ես վարժվել: Ոչ ոք քեզ չի լսի:

Ջելսոմինոն, ճիշտն ասած, ուզում էր նետվել փողոց, որպեսզի վախեցած բնակիչներին հանգստացնի կամ թեկուզ զանգահարի հրշեջներին, որպեսզի իզուր տեղը այս ու այն կողմ չսլանան քաղաքում, բայց մաեստրո Դոմիսոլը համոզեց նրան.

- Խորհուրդ չեմ տալիս, որ այդպես վարվես, որդյակս: Չէ՞ որ դու ստիպված պիտի լինես վճարել բոլոր ջարդված ապակիների համար, իսկ առայժմ դու մի գրոշ անգամ չունես: Էլ չեմ ասում, որ կարող են քեզ բանտարկել: Իսկ եթե ընկնես բանտ, այն ժամանակ ձեռք պիտի քաշես երաժշտական կարիերայից:

- Իսկ եթե թատրոնում էլ իմ ձայնը աղետի պատճառ դառնա՞:

Դոմիսոլը ծիծաղեց.

- Թատրոնները հենց նրա համար են ստեղծված, որպեսզի երգիչներն այնտեղ երգեն: Թատրոնները ոչ միայն ձայների են դիմանում, այլ ռումբի պայթյունի: Դե հիմա գնա քնելու, իսկ ես կզբաղվեմ հայտագրերով ու կտամ շուտ տպագրեն:

Գլուխ տասներորդ

Մեր հերոսը այնպես երգեց,
որ փուլ եկավ թատրոնը մեծ:

Հաջորդ օրն արթնանալով, քաղաքի բնակիչները տեսան, որ բոլոր անկյուններում հայտագրեր են փակցված հետևյալ բովանդակությամբ.
«Այսօր առավոտյան (իսկ ավելի սխալ՝ ժամը 48-ին) հալից ընկած տենոր Ջելսոմինոն՝ շուն-շանորդու մեկը, որը հենց նոր է վերադարձել Եվրոպայի ու Ամերիկայի խոշորագույն թատրոններում բազմաթիվ ձախողումներ ունենալուց հետո, ուր նրան շվացնելով դուրս են արել, քաղաքային թատրոնում չպիտի երգի:
Քաղաքի բնակիչներին խնդրվում է չգալ:
Տոմսերը տրվում են ձրի»:
Բնական է, որ այս հայտագիրը պետք էր հասկանալ հակառակ իմաստով, և քաղաքի բոլոր բնակիչներն էլ հասկացան, որ հայտագրում ամեն ինչ շուռ տված պետք է ընդունել: «Ձախողում» բառի տակ պետք էր հասկանալ «հաջողություն», իսկ «չպիտի երգի» արտահայտությունը նշանակում էր, որ Ջելսոմինոն անպայման պիտի երգի ժամը 48-ին, այսինքն՝ 21-ին:
Ճիշտն ասած, Ջելսոմինոն այնքան էլ չէր ուզում, որ հայտագրում հիշատակվի Ամերիկա կատարած ուղևորության մասին:
- Ես ոչ մի անգամ Ամերիկայում չեմ եղել, - բողոքում էր նա:
- Հենց բանն էլ այդ է, - հակաճառեց նրան մաեստրո Դոմիսոլը, - որ սուտ է, նշանակում է՝ այդպես էլ պիտի լինի: Եթե դու Ամերիկայում եղած լինեիր, մենք ստիպված պիտի գրեինք, որ դու Ասիայում ես հյուրախաղեր տվել: Այսպես է օրենքը: Մոռացիր օրենքները և մտածիր միայն երգեցողության մասին:
Այդ առավոտ, ինչպես արդեն հայտնի է մեր ընթերցողներին, բավական անհանգիստ առավոտ էր (թագավորական պալատի ճակատին հայտնաբերվել է Կաղլիկ-կատվի գրած նշանավոր խոսքը: Օրվա երկրորդ կեսին քաղաքում նորից հանգստություն տիրեց, և երեկոյան ժամը ինը դեռ չեղած՝ թատրոնում, ինչպես հետո գրեցին թերթերը, «անապատի նման դատարկություն էր տիրում»: Այդ նշանակում էր, որ թատրոնը լեփ-լեցուն էր հանդիսատեսներով:
Բոլորը թատրոն էին եկել այն հույսով, որ մի իսկական երգչի են լսելու: Իզուր չէր մաեստրո Դոմիսոլը հանդիսականներին գայթակղելու համար Ջելսոմինոյի մասին անհավատալի լուրեր տարածում:
- Չմոռանաք հետներդ շատ բամբակ վերցնել, - ասում էին Դոմիսոլի գործակալները, որոնք թափառում էին քաղաքում: - Այդ տենորն ուղղակի սարսափելի է և ձեզ դժոխային տանջանքներ է պատճառելու:
- Պատկերացրեք տասնյակ կատաղած շների հաչոցը, դրան գումարեք մի երգչախումբ, որ կազմված է հարյուրավոր պոչերը կրակ տված կատուներից: Այդ բոլորը խառնեք հրշեջ մեքենաների շչակների վայնասունին և մի լավ թափ տվեք, կստացվի Ջելսոմինոյի ձայնի նման մի բան:
- Կարճ ասած՝ հրեշ է:
- Իսկական հրեշ: Նրա տեղը ճահիճն է, որ գորտերի հետ կռկռա և ոչ թե թատրոնում երգելը: Նրան պետք է ստիպել, որ ջրի տակ երգի՝ առանց գլուխը դուրս հանելու: Կատաղած կատվի նման թող սուզվի:

Այս պատմությունները, ինչպես բոլոր տեսակի պատմությունները խաբեբաների աշխարհում, մարդիկ հակառակ իմաստով էին հասկանում և, պարզ է, դրա համար էլ համերգն սկսելուց դեռ շատ առաջ թատրոնը այնպես էր լցվել, որ ասեղ գցելու տեղ չկար:
Ուղիղ ժամը ինչին արքայական օթյակում հայտնվեց նորին մեծություն Ջակոմոն Առաջինը, որն իր գլխին հպարտորեն կրում էր նարնջագույն կեղծամը: Թատրոնում բոլոր ներկա գտնվողները վեր կացան և, խոնարհ գլուխ տալով թագավորին, նորից նստեցին իրենց տեղը, ըստ որում աշխատում էին չնայել նրա կեղծամին: Ոչ ոք իրեն թույլ չտվեց ամենափոքրիկ ակնարկ անգամ անել առավոտյան պատահածի մասին: Ախր բոլորը գիտեին, որ թատրոնը լի է լրտեսներով, որոնք պատրաստ էին իրենց ծոցատետրում գրի առնել անզգույշ մարդկանց խոսակցությունները:
Դոմիսոլը, որ անհամբեր սպասում էր թագավորին և վարագույրի վրա բացած հատուկ անցքից նայում էր արքայական օթյակին, հասկացրեց, որ Ջելսոմինոն պատրաստվի, իսկ ինքը իջավ նվագախմբի մոտ: Նրա դիրիժորական փայտիկի մի շարժումով հնչեց ազգային հիմնը, որն սկսվում էր հետևյալ խոսքերով.

Փա՜ռք, փա՜ռք Ջակոմոնին,
Որ մեկ տվեց կյանք ու բախտ.
Նրա գահն ու մայը ոսկի
Թող որ մնան միշտ անխախտ:

Հասկանալի է, որ ոչ ոք չծիծաղեց: Ոմանք պնդում են, թե Ջակոմոնն այդ ժամանակ նույնիսկ մի թեթև կարմրեց, բայց դրան դժվար է հավատալ, քանի որ այդ երեկո Ջակոմոնի դեմքին դիմափոշու բավական հաստ շերտ կար քսված:
Հենց որ Ջելսոմինոն հայտնվեց բեմի վրա, Դոմիսոլի գործակալների ազդանշանով դահլիճում սկսեցին սուլել ու բղավել.
- Կորչի Ջելսոմինո՜ն...
- Կորի՛ր այստեղից, շուն...
- Չքվիր քո ճահիճը, գո՜րտ...
Ջելսոմինոն համբերությամբ լսեց այս ու դրանց նման հիշոցները և սպասեց մինչև դահլիճում նորից լռություն տիրի: Հետո նա սկսեց երգել իր ծրագրի առաջին երգը: Նա երգում էր ամենաքնքուշ ձայնով, ըստ որում այնքան պինդ էր շրթունքները սեղմել իրար, որ հեռվից թվում էր, բերանը բոլորովին չի բացում: Դա այն երգերից մեկն էր, որ երգում էին նրա հայրենի գյուղում: Դա մի հասարակ երգ էր փոքր-ինչ ծիծաղելի խոսքերով, բայց Ջելսոմինոն այնքան զգացմունքով էր երգում, որ շուտով ամբողջ դահլիճում սկսեցին սպիտակին տալ թաշկինակները: Հանդիսատեսները չէին հասցնում արցունքները սրբել: Երգը վերջանում էր շատ բարձր նոտայով, բայց Ջելսոմինոն ոչ միայն ավելի բարձր չերգեց, այլ ընդհակառակը, աշխատեց որքան կարելի է խլացնել ձայնը: Սակայն դա չօգնեց, և հանկարծ վերնասրահում չարաբաստիկ շխկշխկոց սկսվեց: Պայթեցին ամենանուրբ ապակուց պատրաստված տասնյակ լապտերներ:
Ասենք, այդ աղմուկը խլացավ սուլոցի սարսափելի փոթորկի մեջ: Հանդիսականները մեկ մարդու պես ոտքի էին ելել և գոռում էին ամբողջ կոկորդով մեկ.
- Կորիր այստեղից, խեղկատակ...
- Էլ չենք ուզում լսել քեզ...
- Քո սերենադները երգիր ծովացուլերի համար:
Մի խոսքով, եթե թերթերը կարողանային ճշմարտությունը գրել, մենք կկարդայինք, «Հասարակության հրճվանքին չափ ու սահման չկար»:
Ջելսոմինոն գլուխ տվեց ու սկսեց երկրորդ երգը երգել: Այս անգամ պետք է խոստովանել, որ նա մի փոքր չափն անցավ: Երգը նրան դուր էր գալիս, երգելը նրա տարերքն էր, հասարակությունը նրան հիացմունքով էր լսում, և Ջելսոմինոն, մոռանալով իր սովորական զգուշությունը, բարձր նոտա վերցրեց, որը մեծ հրճվանք պատճառեց նրանց, ովքեր տոմս չէին ճարել և թատրոնից մի քանի կիլոմետր հեռու կանգնած՝ լսում էին:

Ջելսոմինոն սպասում էր, որ ծափահարություններ կլինեն կամ սուլոցի ու հիշոցների մի նոր փոթորիկ կբարձրանա: Բայց փոխարենը պայթեց մի անզուսպ ծիծաղ, որից նա զարհուրեց: Թվում էր, թե հանդիսականները մոռացել են նրան, բոլորը մեջքները դարձրել էին տղայի կողմը և ծիծաղելով նայում էին մի կետի: Ջելսոմինոն նույնպես նայեց այն կողմը, և զարմանքից երակներում արյունը սառեց, իսկ ձայնը դեմ առավ կոկորդին: Երկրորդ երգի հնչյունները չէին ջարդել պատերի վրա կախված ծանր ջահերը, բայց դրա փոխարեն ավելի սարսափելի բան էր տեղի ունեցել: Նշանավոր նարնջագույն կեղծամը հօդս էր ցնդել և մերկացրել Ջակոմոն թագավորի գլուխը: Թագավորը մատներով կտկտացնում էր իր օթյակի հենափայտը և աշխատում ընդհանուր ուրախության պատճառը հասկանալ: Խեղճը ոչինչ չէր նկատել, և ոչ ոք սիրտ չէր անում ճշմարտությունն ասել նրան: Բոլորը շատ լավ էին հիշում, թե ինչ բախտ վիճակվեց այն առավոտ չափից ավելի եռանդ ցուցաբերած պալատականին, որը զրկվեց լեզվից:

Դոմիսոլը, որ մեջքով էր կանգնած դեպի դահլիճը, ոչինչ չէր կարող տեսնել, դրա համար էլ նշան արեց Ջելսոմինոյին, որ սա սկսի երրորդ երգը երգել:

«Եթե Ջակոմոնն այսպես խայտառակվեց, այդ չի նշանակում, թե ես էլ պիտի նույն բախտին արժանանամ: Այս անգամ ես իրոք ուզում եմ լավ երգել»:

Եվ նա սկսեց երգել այնքան գեղեցիկ, այնպիսի ոգևորությամբ, այնքան ուժեղ ձայնով, որ առաջին իսկ հնչյուններից թատրոնն սկսեց փուլ գալ: Առաջինը ջարդվեցին և ցած ընկան ջահերը՝ ճզմելով այն հանդիսականներին, որոնք չէին հասցրել որևէ անվտանգ տեղում թաքնվել: Հետո փլվեց օթյակների մի ամբողջ շարք: Դա հենց այն օթյակաշարն էր, ուր գտնվում էր թագավորական օթյակը, բայց Ջակոմոնն, իր բախտից, արդեն հասցրել էր հեռանալ թատրոնից: Բանն այն է, որ նայել էր հայելու մեջ, որպեսզի տեսնի՝ պետք չէ՞ արդյոք նորից շպարվել և սարսափով նկատել էր, որ կեղծամը թռել է գլխից: Ասում են, որ այդ գիշեր թագավորի հրամանով կտրել էին բոլոր այն պալատականների լեզուները, որոնք նրա հետ եղել էին թատրոնում և չէին հայտնել այդքան ցավալի փաստի մասին:

Իսկ Ջելսոմինոն շարունակում էր երգել, և բոլոր հանդիսականները խուռներամ նետվեցին դեպի դուռը: Երբ փուլ եկան վերջին օթյակաշարն ու վերնասրահը, դահլիճում մնացին միայն Ջելսոմինոն և Դոմիսոլը: Առաջինը դեռ շարունակում էր աչքերը փակած երգել: Նա մոռացել էր, որ գտնվում է թատրոնում, մոռացել էր, ինքը Ջելսոմինոն է և մտածում էր միայն այն հաճույքի մասին, որ ստանում էր երգելուց: Իսկ Դոմիսոլի աչքերը, դժբախտաբար, բաց էին, և նա ամեն ինչ տեսնում էր և հուսահատությունից մազերը պոկում:

- Աստված իմ, թատրոնս... Ես սնանկացած եմ, բոլորովին սնանկացած...

Թատրոնի առջևի հրապարակում հավաքված ամբոխն այս անգամ գոռում էր.

- Բրա՛վո, բրա՛վո...

Ըստ որում, այս անգամ նրանք այնպիսի արտահայտությամբ էին «բրավո» կանչում, որ Ջակոմոնի պահնորդները իրար երես էին նայում ու ասում.

- Բայց նրանք, գիտե՞ս, «բրավո» են կանչում, որովհետև տղան լավ է երգում և ոչ թե նրա համար, որ երգը դուր չի գալիս իրենց:

Ջելսոմինոն երգն ավարտեց բարձր նոտայով, որը շուռ տվեց թատրոնի մնացած ավերակները, փոշու հսկայական ամպեր բարձրացրեց: Նա տեսավ, որ Դոմիսոլը իր դիրիժորական փայտիկը թափահարելով ուզում է անցնել աղյուսի կույտերից և մոտենալ իրեն:

«Ինձնից երգիչ դուրս չեկավ, - հուսահատ մտածեց Ջելսոմինոն: - Փորձեմ գոնե ողջ և առողջ գլուխս ազատել այստեղից»:

Պատի մեջ բացված անցքով նա դուրս եկավ հրապարակ և, դեմքը ձեռքերով ծածկելով, խառնվեց ամբոխին: Քիչ հետո հասավ մի դատարկ փողոց և այնքան արագ սկսեց վազել, որ ամեն քայլափոխի կարող էր ոտքը ջարդել:

Իսկ Դոմիսոլը, որն աշխատում էր տղային աչքից բաց չթողնել, ընկավ նրա հետևից.

- Կանգնիր, դժբախտ, վճարիր թատրոնիս արժեքը:

Ջելսոմինոն մտավ մի նրբանցք, ներս ընկավ առաջին պատահած նախամուտքը և շնչակտուր վազեց մինչև ձեղնահարկ: Այստեղ նա հրեց մի դուռ և հայտնվեց Բանանիտոյի արվեստանոցում ճիշտ նույն պահին, երբ Կաղլիկ-կատուն ցած էր թռչում պատուհանի գոգից:

Գլուխ տասնմեկերորդ

Պետք է իսկություն և տաղանդի ուժ,
որ շրջանակից նկարը գա դուրս:

Բանանիտոն բերանը բաց լսում էր, թե Ջելսոմինոն ու Կաղլիկ-կատուն ինչպես են իրար բերանից խոսք խլելով պատմում իրենց արկածները: Նրա ձեռքին դանակ կար, բայց նկարիչն արդեն մոռացել էր, թե ինչի համար է վերցրել դա:

- Դուք ի՞նչ եք ուզում անել դանակով, - անհանգստացած հարցրեց Կաղլիկ-կատուն:

- Հենց ես էլ այդ եմ մտածում, - պատասխանեց Բանանիտոն: Սակայն բավական էր, որ նա աչք ածի իր սենյակը, որպեսզի նորից ընկնի անհուսալի վիճակի մեջ:

Նրա նկարները նույնքան այլանդակ էին, ինչպես առաջ:

- Ես տեսնում եմ, որ դուք նկարիչ եք, - հարգանքով ասաց Ջելսոմինոն, որը դեռևս չգիտեր այդ մասին:

- Ես էլ էի այդպես կարծում, - տխուր պատասխանեց Բանանիտոն, - ինձ նկարիչ էի համարում: Բայց, երևի, պիտի փոխեմ արհեստս ու այնպիսի գործ ընտրեմ, որ ներկերի հետ, որքան հնարավոր է, քիչ գործ ունենամ: Օրինակ՝ կդառնամ գերեզմանափոր և գործ կունենամ միայն սև գույնի հետ:

Բայց գերեզմանոցում էլ գույներ կան: Աշխարհում ամբողջովին սև և միայն սև ոչինչ չկա:

- Իսկ ածո՞ւխը, - հարցրեց Կաղլիկ-կատուն:

- Բայց չէ՞ որ երբ ածուխը վառում են, կարմիր, սպիտակ և երկնագույն բոց է արձակում:

- Իսկ սև թանա՞քը: Չէ՞ որ դա սև-սև է:

- Բայց սև թանաքով կարելի է գունագեղ ու սրամիտ պատմություններ գրել:

- Անձնատուր եմ լինում, - ասաց Կաղլիկ-կատուն: - Ինչ լավ է, որ գրազ չեկա թաթիկիս վրա, թե չէ հիմա կմնայի երկու թաթիկով:

- Լավ, մի գործ կգտնեմ, - հառաչելով ասաց Բանանիտոն:

Սենյակում շրջելով, Ջելսոմինոն կանգ առավ երեք քթանի մարդու դիմանկարի առաջ, որը մեծ զարմանք էր պատճառել Կաղլիկ-կատվին:

- Ո՞վ է սա, - հարցրեց Ջելսոմինոն:

- Մի բարձրաստիճան պալատական է:

- Երջանիկ մարդ է: Երեք քթով նա բոլոր հոտերը երեք անգամ ուժեղ կզգա:

- Օ՜, դա մի ամբողջ պատմություն է: Երբ նա ինձ հանձնարարեց նկարել իր դիմանկարը, պնդեց, որ անպայման երեք քիթ նկարեմ: Մենք անընդհատ վիճում էինք: Ես ուզում էի մի քիթ նկարել: Հետո առաջարկեցի, որ հաշտվի գոնե երկու քթի հետ, բայց նա համառեց: Կամ երեք քիթ, կամ դիմանկար պետք չէ: Եվ տեսնում եք, թե ինչ ստացվեց: Մի սարսափելի արարած, որով արժե երեխաներին վախեցնել:

- Իսկ այս ձին նո՞ւյնպես պալատական է, - հարցրեց Ջելսոմինոն:

- Ձի՞... Մի՞թե չեք տեսնում, որ կով է:

- Գուցե և կով է, բայց ինձ թվում է, թե ձի է: Ավելի ճիշտ կարող էր ձի հիշեցնել, եթե չորս ոտք ունենար: Ախր սա տասներեք ոտք ունի: Տասներեք ոտքը կբավականացներ երեք ձի նկարելու համար և դեռ մի ոտք էլ կավելանար:

- Բայց կովերը տասներեք ոտք ունեն, - հակաճառեց Բանանիտոն: Դա ամեն մի դպրոցական գիտի:

Ջելսոմինոն ու Կաղլիկ-կատուն հառաչելով նայեցին իրար և մեկը մյուսի աչքերում միևնույն միտքը կարդաց: «Եթե սա փչան կատու լիներ, կսովորեցնեիինք մլավել: Իսկ այս դժբախտին ի՞նչ կարող ենք սովորեցնել»:

- Իմ կարծիքով, նկարը շատ ավելի կշահեր և կգեղեցկանար, եթե մի քանի ոտք ջնջվեր, - ասաց Ջելսոմինոն:

- Այդ էր պակաս, բոլորը կսկսեն ինձ վրա ծիծաղել, իսկ քննադատները կառաջարկեն գժանոց տանել: Հիմա ես հիշեցի, թե ինչու էի դանակը վերցրել: Ուզում էի իմ նկարները կտոր-կտոր անել և հիմա անմիջապես կանեմ այդ:

Նկարիչը նորից դանակը խլեց և սպառնալից մոտեցավ այն նկարին, որը ձիու տասներեք անճոռնի ոտք ուներ և որը կոչվում էր կով: Նա ձեռքը բարձրացրեց, որ հասցնի առաջին հարվածը, բայց հետո կարծես թե միտքը փոխեց:

- Ինչքան դժվար է ամիսների աշխատանքը սեփական ձեռքով ոչնչացնել, - հառաչեց նա:

- Ա՛յ, հիանալի խոսքեր են, - ասաց Կաղլիկ-կատուն: - Երբևէ եթե ես ծոցատետր ունենամ, անպայման այդ խոսքերը կգրեմ, որպեսզի չմոռանամ: Բայց նախքան նկարը կտոր-կտոր անելը ինչո՞ւ չլսեք Ջելսոմինոյի խորհուրդը:

- Դե, իհարկե, - բացականչեց Բանանիտոն: - Ի՞նչ ունեմ կորցնելու: Նկարը միշտ էլ կարող եմ կտրատել:

Եվ նա կտավից դանակով քերեց ներկը այնքան, մինչև որ տասներեք ոտքերից հինգը չքացան:

- Ինձ թվում է, որ հիմա ավելի լավ եղավ, - խրախուսում էր Ջելսոմինոն:

- Տասներեքից հանած հինգ, հավասար է ութի, - ասաց Կաղլիկ-կատուն: - Եթե կտավի վրա երկու ձի նկարված լիներ, ամեն բան հեշտ կստացվեր: Ներեցեք, ես ուզում էի ասել՝ երկու կով:

-Հը՛, ինչ է, էլի՞ մի քանի ոտք ջնջեմ, - հարցրեց Բանանիտոն: Եվ պատասխանի չսպասելով, մի զույգ ոտք էլ քերեց:

- Եռանդով... ավելի եռանդով, - խրախուսում էր Կաղլիկը, - մենք համարյա նպատակին ենք հասնում:

- Ո՞նց է հիմա:

- Թողեք միայն չորս ոտք, տեսնենք ինչ դուրս կգա:

Իսկ երբ մնաց միայն չորս ոտք, հանկարծ մի թեթև խրխինջ լսվեց, ու հենց նույն պահին ձին թռավ հատակին ու սկսեց վազել սենյակում:

- Ախ, ի՛նչ լավ եղավ: Ես սկսում եմ ինձ շատ ավելի լավ զգալ: Կտավի վրա ինձ համար սարսափելի նեղվածք էր:

Անցնելով պատից կախված հայելու մոտով, ձին ոտից-գլուխ չափեց իրեն և գոհ խրխնջաց.

- Ի՜նչ սիրուն ձի է: Ես իսկապես գեղեցիկ ձի եմ: Սինյորներ, չգիտեմ թե ինչպես շնորհակալ լինեմ ձեզանից: Եթե դուք երբևէ ընկնեք մեր կողմերը, ես ձեզ հիանալի ման կածեմ:

- Ո՞ր կողմերը... Հե՛յ, կանգնիր, կանգ առ, - գոռաց Բանանիտոն: Բայց ձին արդեն դուրս էր եկել սենյակից և աստիճանների վրա էր:

Երբ նա իջնում էր աստիճաններով, լսվում էր նրա սմբակների դոփյունը, իսկ շուտով մեր բարեկամները պատուհանից կարող էին տեսնել, թե ինչպես է անցնում նրբանցքը այդ հպարտ կենդանին և ճանապարհ ընկնում քաղաքից դուրս:

Բանանիտոն հուզմունքից ամբողջովին կորել էր քրտինքի մեջ:

- Վերջիվերջո դա իսկապես որ ձի էր, - ուշքի գալով ասաց նա: - Քանի որ այդ ասաց ինքը, ես պարտավոր եմ նրան հավատալ: Տեսեք, է, դպրոցում ինձ ցույց էին տալիս դրա նկարը և սովորեցնում արտասանել «Կ» տառը կով:

- Անցնենք առաջ, - մլավեց Կաղլիկ-կատուն, - մոտենանք մյուս նկարներին:

Բանանիտոն մոտեցավ բազմասապատ ուղտին: Նրա սապատներն այնքան շատ էին, որ հիշեցնում էին անապատային ավազաթմբեր: Բանանիտոն սկսեց քերել սապատները, մինչև որ վերջապես մնացին միայն երկուսը:

- Լավ է ստացվում, - տենդագին աշխատելով ասում էր նա: - Այս նկարն էլ վատը չի: Ի՞նչ եք կարծում, վերջիվերջո ուղտն է՞լ կկենդանանա:
- Այո, եթե բավականաչափ գեղեցիկ լինի, - ասաց Ջելսոմինոն:
Բայց ոչինչ տեղի չունեցավ: Ուղտը հանգիստ ու անտարբեր մնաց կտավի վրա, կարծես նրան ոչինչ չէր վերաբերում:
- Պոչե՛րը, - ճչաց Կաղլիկ-կատուն: - Սա երեք պոչ ունի: Դա ուղտի մի ամբողջ ընտանիքի կբավականացնի:
Երբ ավելորդ պոչերն էլ անհետացան, ուղտը վեհապանծ ցած իջավ կտավից, թեթևացած շունչ քաշեց և երախտապարտ մի հայացք նետեց Կաղլիկ-կատվի վրա:
- Ինչ լավ էր, որ դու պոչերի մասին հիշեցրիր, թե չէ ես դատապարտված էի հավիտյան այս ձեղնահարկում մնալու: Չգիտե՞ք, արդյոք, այստեղ մոտերքում անապատ կա:
- Մի անապատ կա քաղաքի կենտրոնում: Դա քաղաքային անապատ է, բայց այս ժամին փակ է:
- Նա ուզում էր ասել քաղաքային այգի, - բացատրեց Կաղլիկ-կատուն: - Իսկական անապատներն այստեղից երկու-երեք հազար կիլոմետր հեռու են: Բայց աշխատիր ոստիկանության աչքին չերևալ, թե չէ քեզ կգցեն կենդանաբանական այգի:
Գնալով առաջ, ուղտն էլ նայեց հայելու մեջ ու տեսավ, որ ինքը գեղեցիկ է: Շուտով նա ևս թեթև վարգով կտրեց անցավ նրբանցքը: Նրան տեսնելով, գիշերային պահակը աչքերին չհավատաց և ինքն իրեն կսմթեց, որ տեսնի՝ հո երազում չի՞:
- Երևում է՝ ծերանում եմ, - ինքն իրեն խոսեց ծերունին, երբ ուղտը թաքնվեց ոլորանի հետևում: - Հիմա ես նույնիսկ հերթապահության ժամին եմ քնում և երազիս մեջ ընկնում եմ Աֆրիկա: Հարկավոր է ուշադիր լինել, թե չէ կհեռացնեն գործից:
Իսկ Բանանիտոյին հիմա ոչ մահվան սպառնալիքը, ոչ էլ որևէ անստորագիր նամակ չէր կարող կանգնեցնել: Նա մի նկարից մյուսն էր նետվում և ձայնը գլուխը գցած՝ շարունակում էր դանակով քերել ներկերը:
- Ա՛յ սա իսկական վիրահատություն է: Ես տասը րոպեում ավելի շատ վիրահատում կատարեցի, քան հիվանդանոցում պրոֆեսորները տասը օրում:
Երբ նկարները կեղծիքից մաքրվում էին, իսկապես գեղեցկանում էին, դառնում ճշմարտացի ու կենդանանում էին: Շները, ոչխարները, այծերը կտավներից ցած էին թռչում և գնում աշխարհում երջանկություն կամ մկներ փնտրելու, եթե դրանք կատուներ էին: Բանանիտոն միայն մի նկար մանրատեց: Դա այն պալատականի նկարն էր, որը կամեցել էր երեք քիթ ունենալ: Եթե նա էլ մի քթով մնար, կարող էր հանկարծ կտավից ցած իջնել և նկարչին մի լավ հուպ տալ իր հրամանը չկատարելու համար: Ջելսոմինոն օգնում էր Բանանիտոյին նկարից խայտաբղետ մանրօղակներ կտրատել:
Իսկ Կաղլիկ-կատուն ետուառաջ էր գնում և ինչ-որ թան փնտրում: Բայց նրա հիասթափված տեսքից կարելի էր գլխի ընկնել, որ գործերն այնքան էլ հաջող չեն գնում:
- Ձիեր, ուղտեր, պալատականներ, - քթի տակ մրթմրթում էր նա, - և ոչ մի կտոր պանիր: Նույնիսկ մկներն աշխատում են ձեղնահարկից հեռու փախչել: Աղքատության հոտը ոչ ոքի դուր չի գալիս: Սովը թույնից վատ է;
Սենյակի մութ անկյունը քրքրելով, նա փոշով ծածկված մի նկար գտավ, որի տակ բնակություն էր հաստատել հազարոտնուկը: Վտանգ զգալով, սա իր բոլոր ոտքերը գործի դրեց ու փախավ: Ոտքերն իրոք հազար հատ էին, այնպես որ ոչ ոքի չէր վիրավորի եթե հաշիվը ճիշտ չպահեր: Նկարում պատկերվածը, լավ երևակայության դեպքում, կարելի կլիներ ընդունել իբրև ուտելիքով լի սեղան: Օրինակ, ափսեի վրա սարսափելի մի կենդանի կար, որը կարող էր տապակած հավ կոչվել, եթե միայն երկու ոտք ունենար: Բայց նա այնքան ոտ ուներ, որ կարող էր հազարոտնուկի ցեղակիցը համարվել: «Ահա մի նկար, որը կյանքում կուզենայի տեսնել այնպես, ինչպես կա հիմա, - մտածեց Կաղլիկ-կատուն: - Քսան ոտանի հավ... Շատ հարմար է ընտանիքի, սրճարանի տիրոջ կամ սոված կատվի համար: Տոտիկների մեծ մասը պետք է ջնջել: Բայց ոչինչ, մնացածն էլ բավական է, որպեսզի երեք հոգի մի փոքր կշտանան»:

Նկարը նա մոտեցրեց Բանանիտոյին և խնդրեց, որ սա գործի դնի իր դանակը:
- Բայց հավը եփած է և չի կարող կենդանանալ:
- Մեզ էլ հենց եփած է պետք, - պատասխանեց Կաղլիկ-կատուն:
Դրան նկարիչը չիմացավ, թե ինչ պատասխանի: Բացի այդ, հիշեց, որ իր նկարներով տարված՝ երեկվանից ոչինչ չի կերել:
Հավը չկենդանացավ, բայց, միևնույն է, գոլորշի ու հիանալի բուրմունք արձակելով՝ կտավից ցած իջավ, կարծես հենց նոր էին օջախից վերցրել:
- Որպես նկարիչ դու անպայման հաջողության կհասնես, - ասաց Կաղլիկ-կատուն՝ ատամներն ագահորեն հավի թևի մեջ խրելով (ոտքերը նա թողել էր Բանանիտոյին ու Ջելսոմինոյին), - բայց որպես խոհարար արդեն ռեկորդ սահմանեցիր:
- Մի քիչ որ գինի լիներ, վատ չէր լինի, - նկատեց Ջելսոմինոն և սկսեց ուտել, - բայց հիմա երևի բոլոր խանութները փակ են: Ասենք, որ բաց էլ լինեին, մեզ համար մեկ է, միևնույն է, փող չունենք:
Այստեղ Կաղլիկ-կատվի գլուխը մի միտք եկավ, և նա Բանանիտոյին ասաց.
- Իսկ ի՞նչ կլինի, որ դու հիմա մի շիշ գինի նկարես:
- Փորձեմ, - ասաց նկարիչը ոգևորված:
Նա մի շիշ «կյանտի» տեսակի գինի նկարեց: Երբ գինին ներկեց, այնքան սքանչելի ստացվեց, որ եթե Ջելսոմինոն ժամանակին շիշը չբռներ, գինին կթափվեր հատակին:
Երեք բարեկամները խմեցին գեղանկարչության, լավ երգի ու կատուների կենացը: Սակայն երբ վերջին կենացն էին խմում, Կաղլիկ-կատուն հանկարծ տխրեց: Ստիպված եղան երկար խնդրելու, որպեսզի նա ասի իր տխրության պատճառը:
- Վերջին հաշվով, ես իսկական կատու չեմ, - վճռեց խոսել նա, - ես այն կենդանիներից չեմ, որոնք կես ժամ առաջ նկար էին: Ես միայն երեք թաթ ունեմ և չեմ կարող ասել, որ չորրորդ թաթս կորցրել եմ պատերազմում կամ տրամվայի տակ եմ գցել: Դա սուտ կլինի: Այ, եթե Բանանիտոն...
Բայց այդքանն էլ բավական էր... Նկարիչն իսկույն վերցրեց վրձինն ու վայրկենապես մի այնպիսի թաթ նկարեց, որ դուր կգար անգամ Կոշկավոր կատվին:
Եվ ամենահետաքրքիրն այն է, որ թաթն իսկույն կպավ անհրաժեշտ տեղին և Կաղլիկ-կատուն սկզբում մի փոքր անվստահ, հետո ավելի համարձակ սկսեց քայլել սենյակում:
- Ախ, ինչ հիանալի է, - մլավում էր նա: - Ես ինձ բոլորովին ուրիշ տեսակ եմ զգում: Ես հիմա այնքան եմ փոխվել, որ կուզենայի նաև փոխել անունս:
- Ա՛յ թե խելք եմ ասել, - ճակատին խփելով բացականչեց Բանանիտոն, - ես քո թաթը յուղաներկով եմ նկարել, իսկ քո մյուս թաթերն ախր կավիճով են նկարված:
- Սարսափելի ոչինչ չկա, - ասաց Կաղլիկ-կատուն, - թող մնա այնպես, ինչպես կա: Ով որ իմ թաթին ձեռք տա էժան չի պրծնի: Ես իմ հին անունն էլ կպահեմ: Որ լավ մտածենք, կտեսնենք, որ այդ անունն ինձ շատ է սազում: Չէ՞ որ պատերի վրա գրելուց իմ առաջին աջ թաթը ամենաքիչը մի կես սանտիմետրով կարճ է:
Այդ գիշեր Բանանիտոն իր մահճակալը զիջեց Ջելսոմինոյին, իսկ ինքը պառկեց հատակին՝ հին կտավների կույտի վրա: Կաղլիկ-կատուն շատ հարմար տեղավորվեց Բանանիտոյի դռան վրա կախ արած վերարկուի գրպանում և մեկը մյուսից քաղցր երազներ տեսավ:

Գլուխ տասներկուերորդ

«Օրինակելի ստախոսը» երբ որ կարդաց,
Կաղլիկ-կատուն բարկությունից մռլտաց:

Բանանիտոն, զինված վրձիններով, կտավով և ոգևորությամբ, վաղ առավոտյան դուրս եկավ տանից: Նա կամենում էր որքան կարելի է շուտ ցույց տալ իր վարպետությունը: Ջելսոմինոն դեռ քնած էր, իսկ Կաղլիկ-կատուն գնաց նկարչին ուղեկցելու և ճանապարհին նրան մի քանի լավ խորհուրդ տվեց...

- Ծաղիկներ նկարիր ու վաճառիր: Ես համոզված եմ, որ կվաստակես կեղծ դրամի մի մեծ կույտ, մի բան, որ այնքան անհրաժեշտ է այս արտասովոր երկրում: Նկարիր ուրեմն այնպիսի ծաղիկներ, որոնք այս ամսին դեռ չեն բացվել. եղանակին համապատասխան ծաղիկներ մարդիկ կարող են գնել նաև ծաղկավաճառուհիներից: Էլի մի խորհուրդ մկներ չնկարես, թե չէ կանայք սարսափելի կվախենան: Սա ես ասում եմ քո օգուտի համար, թե չէ ինձ ինչ կա, մկներն ինձ ձեռնտու են:

Բանանիտոյից բաժանվելով, Կաղլիկ-կատուն գնեց օրվա թերթը, մտածելով, որ Ջելսոմինոյին հաճելի կլինի իմանալ, թե իր համերգի մասին ինչ են գրում այնտեղ: Թերթը կոչվում էր «Օրինակելի ստախոս» և, հասկանալի է, լի էր կեղծ հաղորդումներով ու փաստերով, որոնք շարադրված էին թարսուշիտակ ձևով:

Թերթում, օրինակ, մի թղթակցություն կար «Վազքի վարպետ Պերսիկետիի խոշոր հաղթանակը» վերնագրով: Ահա այդ հաղորդման տեքստը;

«Պարկի մեջ մտած վազելու նշանավոր չեմպիոն Ֆլավիո Պերսիկետին երեկ թագավորության շուրջը պտտվելու տասներորդ փուլում հաղթանակի հասավ, քսան րոպե առաջ անցնելով Ռոմոլո Բարոնիից, որը երկրորդ տեղը գրավեց և երեսունհինգ վայրկյան առաջ անցավ երրորդ տեղը գրաված Պյեր Կլեմենտինիից: Հաղթանակից մեկ ժամ հետո տեղ հասած վազորդների խմբում, վերջնագծի մոտ առաջ նետվեց Պասկուալինո Բալզիմելին»:

«Իսկ ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ, - կհարցնեք դուք: - Պարկերով վազքը նույնպիսի սպորտային մրցություն է, ինչպես սպորտի մյուս տեսակները: Պարկավազք նայելը նույնիսկ ավելի հետաքրքիր է, քան, ասենք, մոտովազքն ու ավտովազքը»: Համաձայն եմ, բայց «Օրինակելի ստախոս» թերթի ընթերցողները հիանալի գիտեին, որ պարկերով վազք երբևէ տեղի չի ունեցել և Ֆլավիո Պերսիկետին, Ռոմոլո Բարոնին, Պյերո Կլեմենտինին, Պասկուալինո Բուլզիմելին և վազողների խումբը իրենց կյանքում երբեք պարկի մեջ չեն մտել և իսկի չեն էլ երազել իրարից առաջ անցնելու կամ վերջնագծի մոտ առաջ նետվելու մասին:

Ահա թե սովորաբար ինչպես էր լինում: Յուրաքանչյուր տարի թերթը պարկավազք էր կազմակերպում, որին ոչ ոք երբեք չէր մասնակցում: Որոշ փառասերներ, ցանկանալով իրենց անունը տեսնել թերթերում, մրցավազքին մասնակցելու համար վճարում էին և ամեն օր որոշ գումար էին մուծում, որպեսզի հաղթող դուրս գան: Ով որ շատ էր վճարում, նա էլ հռչակվում էր հաղթող: Թերթը բառեր չէր խնայում նրան փառաբանելու համար, մերթ «հերոս», մերթ «բարձր կարգի վազորդ» և այլ ածականներ տալով: Հաղթանակը ուղղակի կախում ուներ դրամական վճարումներից: Այն օրերը, երբ մուծումներն աննշան էին լինում, թերթը վրեժ էր լուծում մասնակիցներից, գրելով, թե թիմը քուն է մտել ճանապարհին, իսկ առաջնակարգ վազորդներն ու շարքային մարզիկները գլուխ են պահում:

Դա խայտառակություն է, և չեմպիոններ Պերսիկետին ու Բարոնին պետք է հաջորդ փուլում ավելի մեծ եռանդ ցույց տան, եթե չեն ուզում հանդիսատեսի համակրանքը կորցնել:
Սինյոր Պերսիկետին խմորեղենի ֆաբրիկայի տերն էր և, իր անունը թերթում տպագրելով, իր անուշահացերի համար լավ ռեկլամ էր ունենում: Քանի որ Պերսիկետին շատ հարուստ էր, միշտ կարողանում էր մյուսներից առաջ ընկնել և առաջինը տեղ հասնել: Մրցության ավարտակետում նրան «համբուրում էին ու պատիվ տալիս, իսկ գիշերները մարզասերները նրա պատուհանների տակ սերենադներ էին երգում»: Այդպես գրում էր թերթը: Հարկ չկա ասելու, որ մարզասերները, որոնք նույնիսկ թմբուկ խփել չգիտեին, այդ ժամանակ իրենց անկողիններում պառկած հանգիստ խռմփացնում էին:
Այդ նույն էջում Կաղլիկ-կատուն էլի մի վերնագիր կարդաց. «Կորնելիայի փողոցում ոչ մի աղետ տեղի չունեցավ, հինգ հոգի չզոհվեցին և մյուս տասը հոգին ոչ մի քերծվածք չստացան»:
Թղթակցության մեջ ասվում էր. «Երեկ Կորնելիա փողոցի տասներորդ կիլոմետրի վրա երկու ավտոմեքենա, որոնք մեծ արագությամբ գնում էին տարբեր ուղղությամբ, բոլորովին էլ չընդհարվեցին: Տեղի չունեցած ընդհարման ժամանակ հինգ հոգի չզոհվեցին (հետևում են անունները), մյուս տասը ոչ մի վերք չստացան (հետևում են անունները), դրա համար էլ նրանց հիվանդանոց տեղափոխելու հարկ չեղավ»: Ցավոք սրտի, դա հնարովի բան չէր, այլ թարս ու շիտակ մի հաղորդում, որի մեջ ցույց էր տրված ճիշտ հակառակը այն բանի, ինչ տեղի էր ունեցել իրականում:
Նույն ձևով էր հաղորդվում նաև Ջելսոմինոյի համերգի մասին: Թղթակցության մեջ, օրինակ, գրված էր, որ «նշանավոր տենորը համերգի սկզբից մինչև վերջ լռում էր»: Թերթում տպագրված էր նաև ավերված թատրոնի լուսանկարը, որի տակ գրված էր. «Ինչպես կարող է ընթերցողը տեսնել իր սեփական ականջներով, թատրոնին որոշակիորեն ոչինչ չի պատահել»:
Ջելսոմինոն և Կաղլիկ-կատուն «Օրինակելի ստախոս» թերթը կարդալով մի լավ զվարճացան: Թերթում գրական էջ էլ կար, ուր մի այսպիսի ոտանավոր էր տպագրված.

Վերոնացի մի խոհարար,
Լավ մասնագետ,
Ուզեց պրույց անել մի օր
Ագռավի հետ.
- Ա՜խ, ինչ լավ է, ինչքան սիրուն
Հացի տեղակ,
Բերանն առնել քարեր տաք-տաք:
Ինչքան լավ է քնել-ելնել,
Ատամները մուրճով մաքրել:

- Այստեղ չի ասված, թե ինչ պատասխանեց ագռավը, - նկատեց Կաղլիկ-կատուն: - Բայց ես պատկերացնում եմ, որ նրա կռկռոցը երևի լսվում էր Ապենիններից մինչև Անդեր:
Վերջին էջի վերջին սյունակի վերջում մի կարճ թղթակցություն կար, որի վերնագիրն էր «Հերքում»: Ջելսոմինոն կարդաց այդ թղթակցությունը.
«Ամենավճռական ձևով հերքվում է, թե այսօր գիշերվա ժամը երեքին ոստիկանությունը Ջրհորի փողոցում բանտարկել է սինյորա մորաքույր Եգիպտացորենին և նրա թոռնիկ Ռոմոլետային: Հասկանալի է, որ մոտավորապես ժամը հինգին նրանք չտեղավորվեցին խելագարանոցում, ինչպես ոմանք այդ ցանկանում էին»:
Ստորագրություն՝ «Ոստիկանապետ»:
- Խաբեբաների պետ, - բացականչեց Կաղլիկ-կատուն: - Սա Նշանակում է, որ խեղճերն իրոք որ հիմա նստած են խելագարների հետ: Ես գրեթե համոզված եմ, որ այդ ամենն իմ մեղքով է եղել:
- Նայիր, - ընդհատեց նրան Ջելսոմինոն, - կարդա, այ, այստեղ: Էլի մի հերքում:
Հիմա արդեն խոսքն անմիջականորեն վերաբերվում էր Ջելսոմինոյին.
«Բոլորովին իրականությանը չի համապատասխանում, թե իբր ոստիկանությունը փնտրում է նշանավոր տենոր Ջելսոմինոյին: Դրա համար ոչ մի պատճառ չկա, որովհետև Ջելսոմինոն բոլորովին

էլ պարտավոր չէ պատասխան տալ քաղաքային թատրոնին պատճառած վնասների համար: Ուստի, ով գիտե, թե որտեղ է թաքնվում Ջելսոմինոն, թող չհայտնի ոստիկանությանը, այլապես խստորեն կպատժվի»:
Գործը բարդանում է, - նկատեց Կաղլիկ-կատուն: - Լավ է դու տանը նստես, ես գնամ նորություններ իմանալու:
Ջելսոմինոն չէր ուզում ձեռքերը ծալած նստել, բայց, վերջիվերջո, համաձայնեց, որ Կաղլիկ-կատուն իրավացի է և բաց թողեց նրան: Հետո նա պառկեց մահճակալին և համբերությամբ զինվելով, պատրաստվեց ամբողջ օրը պարապ անցկացնել:

Գլուխ տասներեքերորդ

Կա մի օրենք սուտլիկների աշխարհում՝
Ով չի ստում, նա հիվանդ է համարվում:

Մենք Մորաքույր Եգիպտացորենից բաժանվեցինք այն ժամանակ, երբ նա դռան մոտ կանգնած լսում էր իր փիսիկ-ների մլավոցը: Ըստ որում, նա իրեն շատ երջանիկ էր զգում, այնպես, ինչպես երաժշտագետը երջանիկ կզգար իրեն, եթե հայտնաբերեր Բեթհովենի չհրատարակված սիմֆոնիան, որը երկար տարիներ մնացել էր սեղանի դարակում: Ռոմոլետայից բաժանվեցինք այն ժամանակ, երբ նա վազեց տուն, Կաղլիկ-կատվին ցույց տալով, թե ինչպես պիտի գնալ նկարիչ Բանանիտոյի մոտ: Քիչ անց մորաքույրն ու ազգականուհին արդեն հանգիստ քնած էին իրենց անկողիններում, չկասկածելով, որ Կալիմերի նամակներն ամբողջ ոստիկանական մեքենան շարժման մեջ են դրել: Գիշերվա ժամը 3-ին այդ մեքենայի մի քանի պտուտակներ, ի դեմս ժանդարմների մի դասակի, առանց խոսքերի ներս ընկան, Եգիպտացորենին ու աղջկան ստիպեցին շուտ հագնվել ու բանտ տարան:

Ավագ ժանդարմը, բանտարկվածներին հանձնելով բանտապետին, ուզում էր նորից քնելու գնալ, մոռացել էր, որ կոլեգան ձևամոլ է:

- Ի՞նչ մեղք են գործել այս երկուսը:

- Պառավը շներին մլավել է սովորեցրել, իսկ աղջիկը պատերի վրա մակագրություններ է արել: Սրանք երկու վտանգավոր հանցագործներ են: Քո տեղը լինեի, սրանց կնստեցնեի նկուղում և կուժեղացնեի հսկողությունը:

- Ինքս գիտեմ, թե ինչ պիտի անեմ, - նետեց բանտապետը: - Հիմա տեսնենք, թե իրենք ինչ կասեն:

Նախ հարցաքննեցին Մորաքույր Եգիպտացորենին: Բանտարկությունը նրան չէր վախեցրել: Հիմա, երբ նրա յոթ կատվիկները մլավելու ընդունակություն էին ձեռք բերել, ինչը հատուկ էր նրանց, ոչինչ չէր կարող Եգիպտացորենի երջանկությունը մթագնել: Դրա համար էլ նա շատ հանգիստ էր պատասխանում բոլոր հարցերին:

- Ոչ, դրանք շներ չէին, այլ կատուներ:

- Արձանագրության մեջ գրված է, որ շներ էին:

- Ո՛չ, ո՛չ... Դրանք կատուներ էին: Նրանցից, որ մկներ են բռնում:

- Բայց չէ՞ որ հենց շներն են մուկ բռնում:

- Ո՛չ, պարոն, կատուներն են մուկ բռնում: Եվ մլավում են կատուները: Իմ կատուները հաչում էին, ինչպես մեր քաղաքի բոլոր կատուները: Բայց երեկ երեկոյան, բարեբախտաբար, նրանք սկսեցին մլավել:

- Այս կինը խելագար է, - ասաց բանտապետը: - Նրա տեղը խելագարանոցն է: Կարճ ասած, տիկին, ի՞նչ է, դուք հեքիա՞թ եք պատմում մեզ:

- Ճշմարտությունն եմ ասում, միայն ճշմարտությունը:

- Դե, ուրեմն, ամեն ինչ պարզ է, - բացականչեց բանտապետը: - Սա ուղղակի կատաղի խելագար է: Ես սրան ընդունել չեմ կարող: Այս բանտը միայն կանոնավոր մարդկանց համար է: Խելագարներին պետք է խելագարանոց տանել:

Եվ, չնայած ավագ ժանդարմի բողոքներին, որը տեսնում էր, թե ինչպես է հօդս ցնդում կուշտ քնելու իր երազանքը, բանտապետը վերադարձրեց Մորաքույր Եգիպտացորենին և նրա գործը: Հետո նա սկսեց Ռոմոլեատայի հարցաքննությունը:
- Այդ դո՞ւ էիր պատերին գրում:
- Այո, միանգամայն ճիշտ է, գրել եմ:
- Լսեցի՞ր, - գոռաց բանտապետը: - Սրա խելքն էլ տեղը չէ: Ուղարկել խելագարանոց: Այս աղջկան էլ տար ու ինձ հանգիստ թող: Ես ժամանակ չունեմ խելագարներով զբաղվելու:
Կատաղությունից կանաչ կտրած, ժանդարմների պետը երկու բանտարկյալներին նորից նստեցրեց մեքենա ու տարավ խելագարանոց, որտեղ նրանց իսկույն ընդունեցին և ուղարկեցին մի մեծ սենյակ, ուր նստած էին այն բոլոր մարդիկ, որոնց ոստիկանությունը բանտարկել էր ճիշտ խոսելու համար:
Սակայն այդ գիշերվա դեպքերը դրանով չավարտվեցին: Եվ գիտե՞ք, թե ով էր սպասում ժանդարմների պետին, երբ նա վերջապես վերադարձավ իր առանձնասենյակը: Կալիմեր Մուրիակը: Նա կանգնած էր գլխարկը ձեռքին և ամենազզվելի մի ժպիտ դեմքին:
- Ձեզ ի՞նչ է պետք:
- Ձերդ գերազանցություն, - քծնանքով ու խոնարհվելով բլբլաց Կալիմերը, - ես եկել եմ իմ հարյուր հազար կեղծ թալերն ստանալու: Պարգևը ինձ հասնում է նրա համար, որ իմ ջանքերի շնորհիվ բանտարկված են մեր տեր թագավորի թշնամիները:
- Աա՛, ուրեմն այդ դո՞ւք էիք նամակներ գրել, - մտախոհ ասաց ժանդարմների պետը: - Բայց ամեն ինչ ճի՞շտ է, ինչ գրել էիք:
- Ձերդ գերազանցություն, - բացականչեց Կալիմերը, - երդվում եմ, որ ամեն ինչ մաքուր ճշմարտություն է:
- Աա՛, - իր հերթին բացականչեց ժանդարմների պետը և նրա դեմքին մի խարդախ ժպիտ հայտնվեց:
- Նա պնդում է, թե ճիշտ է ասում: Ահա թե ինչ, բարեկամս, ես առաջ էլ էի զգում, որ ձեր խելքը տեղը չէ, բայց հիմա դուք այդ հաստատեցիք: Ուղիղ խելագարանոց գնացեք:
- Ձերդ գերազանցություն, խղճացեք, - աղաղակեց Կալիմերը և, գլխարկը գցելով ցած, հուսահատ սկսեց տրորել: - Մի՞թե դուք ինձ հետ այդպես անհոգի կվարվեք: Ես ստի բարեկամ եմ, չէ՞ որ այդ մասին գրել էի իմ նամակում:
- Մի՞թե ճիշտ է, որ դուք ստի բարեկամ եք:
- Ճիշտ է, իսկական ճշմարտություն, երդվում եմ:
-. Ա՛յ, դուք նորից բռնվեցիք, - հաղթականորեն ասաց ժանդարմների պետը: - Արդեն երկու անգամ երդվեցիք, որ ճիշտ եք ասում: Հերիք է խոսեք: Խելագարանոցում դուք ժամանակ կունենաք հանգստանալու: Իսկ այժմ պարզ երևում է, որ կատաղի խելագար եք և եթե մնաք ազատության մեջ, դա սպառնալիք կլինի հասարակական կարգի համար:
- Դուք ուղղակի ուզում եք իմ պարգևը յուրացնել, - աղաղակում էր Կալիմերը, աշխատելով ժանդարմների ձեռքից ազատվել:
- Լսո՞ւմ եք: Կա-չկա սրա նոպան բռնել է: Սրան զսպաշապիկ հագցրեք և բերանին կապանք դրեք: Ինչ վերաբերում է պարգևին, ապա խոսք եմ տալիս, որ ձեզ ոչ մի գրոշ չի հասնի, քանի դեռ ես գրպաններ ունեմ, ուր կարելի է այդ գումարը հուսալիորեն պահել:
Այսպես Կալիմերը նույնպես ընկավ խելագարանոց, որտեղ նրան փակեցին թաղիքապատ առանձնախցում:
Ժանդարմների պետը, այն է, ուզում էր քնելու գնալ, երբ սկսեցին քաղաքի զանազան ծայրերից տագնապալից զանգել:
- Ալո, ոստիկանատո՞ւնն է: Մեր կողմերում ինչ-որ շուն է մլավում: Գուցե կատաղած է: Մարդ ուղարկեք, խնդրում ենք:
- Ալո, ոստիկանատո՞ւնն է: Ինչո՞վ են զբաղված շնաբույծները: Մեր տան մոտ արդեն կես ժամ է մի շուն է մլավում: Եթե նրան վաղը առավոտյան չտանեն, ապա տանից ոչ ոք դուրս չի գա, վախենում են, թե կարող է կծել:

ժանդարմների պետն անմիջապես կանչեց բոլոր շնաբույծներին, բաժանեց ջոկատների, նրանց հետ դրեց իր լավագույն ժանդարմներին և ուղարկեց քաղաքի բոլոր ծայրերը մլավող շուն որսալու: Ընթերցողն, իհարկե, արդեն հասկացավ, որ խոսքը Մորաքույր Եգիպտացորենի կատուների մասին է:

Կես ժամ չէր անցել, երբ բռնվեց ամենափոքրիկ կատուն: Նա այնպես էր տարվել մլավելով, որ չնկատեց, թե ինչպես են իրեն շրջապատում: Միանգամից իր շուրջն այդքան մարդ տեսնելով, նա որոշեց, որ մլավելու համար եկել են իրեն շնորհավորելու և ավելի եռանդով սկսեց մլավել: Շնաբույծներից մեկը բարեկամաբար ժպտալով մոտեցավ նրան, մի երկու անգամ շոյեց մեջքը, իսկ հետո վճռականորեն բռնեց ու գցեց պարկի մեջ:

Յոթ կատուներից երկրորդը բռնվեց այն ժամանակ, երբ բարձրանալով ձիու արձանի թամբին, նա մլավելով ճառ էր ասում կատուների մի փոքրիկ խմբի համար: Կատուները նրան լսում էին մռայլ քմծիծաղով, իսկ երբ տեսան, որ նա բռնվեց, մի կատաղի հաչոց գցեցին:

Երրորդ կատվին բռնեցին այն ժամանակ, երբ սա և մի շուն հասել էին իրար:

- Այդ ինչո՞ւ ես մլավում, հիմար, - հարցրեց կատուն:

- Իսկ ես, քո կարծիքով, ի՞նչ պիտի անեմ: Ես կատու եմ, ուրեմն պիտի մլավեմ, - պատասխանեց շունը:

- Տեսնում եմ, որ դու վերջնականապես հիմարացել ես: Դու ի՞նչ է, քեզ հայելու մեջ երբեք չե՞ս տեսել: Դու շուն ես և պետք է հաչես: Իսկ ես կատու եմ, իմ պարտքն է մլավել: Ա՛յ, լսիր՝ մյաու, մյաու, մյաու, մյաու:

Մի խոսքով, գործը վերջացավ կռվով, և շնաբույծները, երկար չմտածելով, երկուսին էլ բռնեցին, բայց հետո շանը բաց թողեցին, որովհետև նա մլավելու իրավունք ուներ:

Հետո բռնեցին չորրորդ, հինգերորդ և վեցերորդ կատուներին:

- Մնաց միայն մեկը, - ասում էին շնաբույծներն ու ժանդարմները և մխիթարում իրար, որպեսզի հոգնությունը հաղթահարեն:

Որքան զարմացան նրանք, երբ երկար որոնումներից հետո հանդիպեցին ոչ թե մեկ, այլ երկու մլավող կատվի:

- Շատացել են, - նկատեց պահնորդներից մեկը:

- Երևի շատ վարակիչ բան է մլավելը, - ավելացրեց շնաբույծը:

Կատուներից մեկը Մորաքույր Եգիպտացորենի յոթերորդ կատուն էր, իսկ մյուսը այն Բարբոսն էր, որին մենք հանդիպել ենք արդեն առաջին գլուխներից մեկում: Նա մտածելով եկել էր այն եզրակացության, որ Կաղլիկ-կատուն որոշ չափով իրավացի էր, երբ խորհուրդ էր տալիս մլավել: Նա մի անգամ փորձեց հետևել Կաղլիկի օրինակին և այսուհետև այլևս չէր կարողանում հաչել, նույնիսկ այն ժամանակ, երբ ուզում էր:

Բարբոսը առանց դիմադրելու թույլ տվեց, որ իրեն բռնեն, բայց յոթերորդ կատուն, ամենաավագը, այնքան ճարպիկ գտնվեց, որ մագլցեց, բարձրացավ ծառը, և, նստելով բարձր ճյուղերից մեկին, սկսեց մլավել կատուների երգացանկի ամենալավ արիաները, կատաղեցնելով իրեն հետապնդողներին:

Այդ արտակարգ ներկայացումը դիտելու համար մեծ ամբոխ հավաքվեց և, ինչպես լինում է նման դեպքերում, հանդիսականները բաժանվեցին երկու մասի: Մի մասը, այսինքն՝ ողջամիտները, հրահրում էին պահնորդներին, որ սրանք վերջ տան սկանդալին: Մյուսները՝ կատակասերները և ով գիտե, գուցե և ոչ միայն կատակասերները, «ցավակցում էին» կատվին և բարձր գոռալով խրախուսում էին նրան.

- Մյա՛ու... մյա՛ու...

Հավաքվել էին նաև բազմաթիվ կատուներ, որոնք հաչում էին իրենց ցեղակցի վրա գուցե ոմանք նախանձից դրդված, ոմանք էլ չարությունից: Նրանցից մի քանիսը, վարակվելով, նույնպես սկսեցին մլավել: Շնաբույծներն իսկույն հարձակվում էին այդ կտրիճների վրա և, բռնելով նրանց, խոթում էին իրենց պարկերը:

Ճարահատյալ հրշեջներ կանչեցին: Սրանք ծառը այրեցին, որպեսզի համառ կատվին, որը դեռ շարունակում էր մլավել, ստիպեին ցած իջնել: Այսպիսով, ամբոխը կարողացավ վայելել նաև մի փոքրիկ հրդեհի հաճույք, և բոլորը բավարարված գնացին իրենց տները:
Վերջիվերջո պարզվեց, որ մլավող կատուները քսան հատ են: Նրանց բոլորին էլ տարան խելագարանոց. չէ՞ որ նրանք, այսպես թե այնպես, յուրովի ճշմարտությունն էին ասում, հետևաբար, խելագար կատուներ էին: Խելագարանոցի դիրեկտորը չգիտեր, թե ուր տեղավորի նրանց: Երկար մտածելուց հետո նա որոշեց կատուներին ուղարկել Կալիմեր Մուրհակի սենյակը: Կարո՞ղ եք պատկերացնել, թե լրտեսը որքան գոհ պիտի լիներ այդ ընկերակցությունից, որը միշտ նրան պիտի հիշեցներ իր դժբախտության պատճառը: Երկու ժամ չանցած նա իսկապես խելագարվեց և սկսեց կատվի նման մլավել ու մռռալ: Նրան թվում էր, թե ինքն էլ կատու է և երբ մի անզգույշ մուկ փորձեց սենյակի մի անկյունից մյուսն անցնել, Կալիմերն առաջինը նետվեց նրա վրա: Բայց մուկը հասցրեց իրեն նետել անցքը և միայն պոչը թողեց Կալիմերի ատամների մեջ:
Կաղլիկ-կատուն այս բոլոր տեղեկությունները հավաքելով, արդեն վերադառնում էր տուն, որպեսզի պատմի Ջելսոմինոյին, երբ լսեց, թե ինչպես իրեն այդքան լավ ծանոթ տենորը հանկարծ սկսեց երգել: Նա երգում էր այն հայտնի երգերից մեկը, որ երգում էին նրա հայրենի գյուղում և որոնք նրան այնքան տանջանք պատճառեցին:
«Այս անգամ ես գրազ կգամ իմ չորս թաթերով, նոր թաթս էլ հետը հաշված անշուշտ, որ Ջելսոմինոն քնած է և երգում է երազում: Եթե չշտապեմ, պահնորդներն ինձանից առաջ կընկնեն»:
Տան մոտ նա ունկնդիրների մի մեծ բազմություն տեսավ; Ոչ ոք տեղից չէր շարժվում, ոչ ոք չէր խոսում: Եվ նույնիսկ, երբ մեկ-մեկ ջարդվում էին հարևան տների ապակիները, ոչ ոք չէր բողոքում: Թվում էր, թե հրաշալի երգը բոլորին կախարդել է: Կաղլիկ-կատուն բազմության մեջ երկու երիտասարդ պահնորդ նկատեց, որոնց դեմքերին էլ նույն հիացմունքն էր, ինչ որ մյուսների: Դուք արդեն գիտեք, որ պահնորդներին հրամայված էր Ջելսոմինոյին բանտարկել, բայց այս երկուսը կարծես թե այդպիսի մտադրություն չունեին: Դժբախտաբար, այդ ժամանակ պահնորդների մի ջոկատ էլ էր մոտենում տանը: Նրանց պետը մտրակով իր համար ճանապարհ էր բացում բազմության մեջ, նա երևի մի քիչ խուլ էր, դրա համար էլ Ջելսոմինոյի երգեցողությունը նրան չէր հասնում:
Կաղլիկ-կատուն աստիճաններով արագ վազեց վեր և գնդակի նման նետվեց ձեղնահարկ:
- Վեր կաց, վեր կաց, շուտ, - գոռգոռաց նա և պոչով խուտուտ տվեց Ջելսոմինոյի քիթը: - Համերգը վերջացած է, ոստիկանությունն է գալիս:
Ջելսոմինոն աչքերը բաց անելով ու տրորելով, հարցրեց.
- Որտե՞ղ եմ ես:
- Կարող եմ ասել, թե դու որտեղ կհայտնվես, եթե անմիջապես այստեղից չփախչենք, կընկնես բանտ:
- Ի՞նչ է, էլի երգո՞ւմ էի:
- Գնանք, փախչենք կտուրներով:
- Դու կատվի նման ես դատում: Ես սովոր չեմ կղմինդրների վրայով թռչկոտել:
- Կբռնես իմ պոչից:
- Իսկ ո՞ւր գնանք:
- Բոլոր դեպքերում՝ ինչքան այստեղից հեռու, այնքան լավ: Դե որևէ տեղ կհասնենք, էլի:
Կաղլիկ-կատուն առաջինը թռավ ձեղնահարկի պատուհանին և Ջելսոմինոյին ուրիշ բան չէր մնում, քան աչքերը փակել, որպեսզի գլուխը չպտտվի, և հետևել նրան:

Գլուխ տասնչորսերորդ

Խեղճ Բենվենուտոն հուզված է այնքան,
Որ իր տեղը չի նստում մի վայրկյան:

Բարեբարեբախ քաղաքի այդ մասում տներն այնքան էին կպած իրար, ինչպես տառեխները տակառի մեջ, և Ջելսոմինոն, խրախուսվելով Կաղլիկ-կատվի հորդորներից, առանց որևէ դժվարության կտուրից-կտուր էր թռչում: Իսկ Կաղլիկն, ընդհակառակը, ուզում էր կտուրների միջի տարածությունը մի փոքր լայն լինի, որպեսզի ուզածի չափ մի լավ թռչկոտի: Բայց հանկարծ Ջելսոմինոն սայթաքեց և ընկավ մի փոքրիկ պատշգամբ, ուր մի ծերուկ ծաղիկներ էր ջրում:

- Ներեցեք, խնդրեմ, - ցաված ծունկը շփելով ասաց Ջելսոմինոն: - Ես բոլորովին չէի ուզում այս ձևով ձեր տունն ընկնել:

- Խնդրում եմ ներողություն չխնդրեք, - քաղաքավարի ասաց ծերուկը: - Ես երջանիկ եմ ձեր այցելության համար: Ավելի լավ է ասեք, հո չե՞ք վնասվել: Հույս ունեմ, որ դուք ողջ-առողջ եք:

Կաղլիկ-կատուն կտուրից նայեց ցած ու մլավեց.

- Կարելի՞ է:

- Օ՛, էլի այցելու, - ուրախացած ասաց ծերուկը, - եկեք, եկեք, ես շատ ուրախ կլինեմ:

Ջելսոմինոյի ծունկը անընդհատ ուռչում էր ու ուռչում:

- Ես շատ եմ ափսոսում, որ ոչ մի աթոռ չունեմ, որպեսզի կարողանաք նստել, - շարունակեց ծերուկը:

- Պառկեցնենք մահճակալին, - առաջարկեց Կաղլիկ-կատուն, - եթե, իհարկե, չեք առարկում:

- Ցավն այն է, - վշտացած ասաց ծերուկը, - որ ես նույնիսկ մահճակալ չունեմ: Լավ, գնամ հարևանի բազկաթոռը խնդրեմ:

- Ոչ, ոչ, ես կարող եմ հատակին էլ նստել, - շտապ ասաց Ջելսոմինոն:

- Դուք մտեք սենյակ, տեղավորվեք հատակին, - առաջարկեց ծերուկը, - իսկ ես ձեզ համար համեղ սուրճ կեփեմ:

Սենյակը մեծ չէր, բայց մաքուր էր, գեղեցիկ, փայլեցրած կարասիներով: Այստեղ կար սեղան, կային պահարաններ, բայց աթոռի ու մահճակալի հետք անգամ չէր երևում:

- Մի՞թե դուք անընդհատ ոտքի վրա եք լինում, - հարցրեց Կաղլիկ-կատուն:

- Այո, ստիպված, - պատասխանեց ծերուկը:

- Եվ բոլորովին չե՞ք քնում:

- Երբեմն կանգնած եմ քնում, բայց հազվադեպ:

Ջելսոմինոն ու Կաղլիկը նայեցին իրար, իբր, ահա քեզ էլի մեկը, որ սիրում է հեքիաթներ պատմել:

- Ներեցեք հետաքրքրությանս համար, իսկ դուք քանի՞ տարեկան եք, - նորից հարցրեց Կաղլիկ-կատուն:

- Ճիշտը չեմ կարող ասել: Ես ծնվել եմ տասը տարի առաջ, բայց հիմա մոտավորապես յոթանասունհինգ-յոթանասունվեց տարեկան կլինեմ:

Երևի զրուցակիցների դեմքի արտահայտությունից ծերուկը հասկացավ, որ նրանք ոչ մի կերպ չեն հավատում իրեն: Հառաչելով նա ասաց.

- Սա սուտ չէ: Ցավոք սրտի, անհասկանալի, բայց ճշմարիտ պատմություն է: Եթե ուզում եք, քանի դեռ սուրճը չի եփել, ես ձեզ մանրամասն կպատմեմ այդ մասին: Իմ անունը Բենվենուտո է, - սկսեց նա: - Բայց սովորաբար ինձ «Տիտիկ չանող Բենվենուտո» են ասում...

Այսպես ուրեմն, Բենվենուտոն ծնվել է հնոտիավաճառի ընտանիքում: Այդքան աշխույժ երեխա ոչ ոք դեռ չէր տեսել: Եվ իրոք, դեռ հարմար անուն չէին գտել նրան, երբ բարուրից դուրս թռավ ու սկսեց վազվզել տան մեջ: Երեկոյան նրան քնեցնում էին, իսկ առավոտյան պարզվում էր, որ մահճակալը կարճ է տղայի համար ու ոտքերը դուրս են ցցվել:
- Երևում է, նա ուզում է շուտ մեծանալ, որ ինչքան կարելի է շուտ ընտանիքին օգնի, - ասում էր հայրը:
Երեկոները, երբ նրան քնեցնում էին, ամեն ինչ կարգին էր լինում, իսկ առավոտյան տեսնում էին, որ հագուստն արդեն նրա վրայով չի, կոշիկները սեղմում են ոտքերը, իսկ շապիկները բոլորովին հագնել չի կարելի:
- Ոչինչ, - ասում էր մայրը, - բարեբախտաբար հնոտիավաճառի տանը չուլ ճարելը դժվար չէ: Ես նրան նոր շապիկ կճարեմ:
Մի շաբաթում Բենվենուտոն այնքան մեծացավ, որ հարևաններն սկսեցին խոսել, թե դպրոց տանելու ժամանակն է:
Հնոտիավաճառի կինը տղային տարավ ուսուցչի մոտ, իսկ սա լուրջ զայրացավ:
- Իսկ ինչո՞ւ հարկ չհամարեցիք ուսումնական տարվա սկզբին բերել: Չէ՞ որ շուտով զատիկ կլինի, ինչպես կարող եմ ընդունել:
Երբ մայրը բացատրեց, որ Բենվենուտոն յոթ օրվա ծնված է ընդամենը, ուսուցիչն ավելի ջղայնացավ:
- Յոթ օր... Սինյորա, սա ձեզ համար մսուր չէ: Վեց տարի հետո եկեք, այն ժամանակ ձեզ հետ կխոսենք:
Սակայն նա վերջապես հայացքը դասամատյանից կտրեց և տեսավ, որ Բենվենուտոն նույնիսկ ավելի բարձրահասակ է, քան իր բոլոր աշակերտները: Նա տղային նստեցրեց ամենավերջին նստարանին և սկսեց բացատրել, որ երկու անգամ երկու հավասար է չորսի:
Կեսօրին զանգը տվեց, բոլոր աշակերտները տեղերից վեր թռան ու շարք կանգնեցին, որպեսզի դասարանից դուրս գան: Միայն Բենվենուտոն տեղից չէր շարժվում:
- Բենվենուտո, - ձայն տվեց նրան ուսուցիչը, - դու էլ շարք կանգնիր:
- Չեմ կարող, սինյոր ուսուցիչ:
Եվ իրոք, առավոտյան ժամը ութից մինչև տասներկուսը նա այնքան էր երկարել, որ նստարանից վեր կենալ չէր կարողանում: Ստիպված կանչեցին դպրոցի պահակին, որպեսզի սա օգնի Բենվենուտոյին վեր կենալ:
Մյուս օրը նրան նստեցրին ավելի մեծ նստարանի, բայց կեսօրին Բենվենուտոն նորից չկարողացավ վեր կենալ, որովհետև այդ նստարանն էլ նրա համար արդեն փոքր էր: Նա նմանվում էր թակարդի մեջ ընկած մկան: Ստիպված ատաղձագործ կանչեցին, որ նստարանը քանդի:
Ուսուցիչը ծոծրակը քորելով ասաց.
- Վաղը մենք հինգերորդ դասարանից ավելի մեծ նստարան կվերցնենք:
Եվ նա կարգադրեց դասարան բերել ամենամեծ նստարաններից մեկը:
- Իսկ հիմա ինչպե՞ս է:
- Շատ հարմար է, - ուրախ պատասխանեց Բենվենուտոն:
Եվ որպեսզի ցույց տա, թե որքան հարմար նստարան է, մի քանի անգամ տեղից վեր կացավ ու նորից նստեց:
Բայց երբ կեսօրին զանգը խփեց, այդ նստարանն էլ այնքան փոքր էր, որ նորից ատաղձագործ կանչեցին:
Դպրոցի դիրեկտորն ու քաղաքագլուխն սկսեցին բողոքել:
- Այս ի՞նչ բան է, սինյոր ուսուցիչ: Գուցե դուք դասարանում կարգապահություն պահպանելը մոռացե՞լ եք: Նստարաններն այս տարի ձեզ մոտ այնքան են կոտրվում, կարծես ծղոտից շինված լինեն: Դուք պետք է ավելի ուշադիր հետևեք ձեր թոկից փախածներին, թե չէ մենք չենք կարող ամեն օր մի նոր նստարան գնել:
Հնոտիավաճառն ստիպված տղային տարավ քաղաքի ամենալավ բժշկի մոտ և նրան ամեն ինչ պատմեց:
- Տեսնենք, տեսնենք, - ասաց բժիշկը և ակնոցը դրեց, որպեսզի ավելի լավ տեսնի:

Նա Բենվենուտոյին ոտից գլուխ չափեց ու ասաց.
- Հիմա նստիր:
Բենվենուտոն նստեց աթոռին, իսկ բժիշկը մի րոպե սպասելուց հետո հրամայեց.
- Վե՛ր կաց:
Բենվենուտոն աթոռից վեր կացավ, և բժիշկը նորից նրան չափեց:
- Հը՛մ, - ասաց նա և ակնոցի ապակիները թաշկինակով սրբեց, որպեսզի համոզվի, թե ակնոցն իրեն չի խաբում, - հապա նորից նստիր:
Նա մի քանի անգամ Բենվենուտոյին ստիպեց նստել ու վեր կենալ և վերջապես ասաց.
- Շատ հետաքրքիր երևույթ է: Այս տղան մի նոր հիվանդություն ունի որը մինչև այժմ ոչ ոքի հայտնի չէ: Հիվանդությունն արտահայտվում է հետևյալ կերպ, երբ տղան նստում է, սկսում է շատ արագ ծերանալ: Սրա համար մի րոպեն հավասար է մի ամբողջ օրվա: Ինչպե՞ս բուժել սրան: Սա պետք է պարզապես միշտ ոտքի վրա քնի, թե չէ մի քանի շաբաթում սպիտակամորուք ծերունի կդառնա:
Բժշկի եզրակացությունից հետո Բենվենուտոյի կյանքը հիմնովին փոխվեց:
Դպրոցում նրա համար հատուկ նստարան պատրաստեցին, որը նստելու տեղ չուներ: Այդպես էին արել, որպեսզի հանկարծ Բենվենուտոն չփորձի նստել: Տանը հիմա նա ստիպված էր կանգնած ուտել: Բավական է, որ փորձեր նստել վառարանի մոտ, այս ու այն կողմից ձայն էին տալիս.
- Լսիր, ի՞նչ է, ուզում ես ժամանակից շո՞ւտ ծերանալ:
- Վեր կաց, վեր կաց, ուզում ես, որ մազերդ սպիտակե՞ն:
«Բայց նա մահճակալի վրա էր քնում», - կհարցնեք դուք: Մահճակալի մասին մտածել իսկ չէր կարող, քանի որ չէր ուզում առավոտյան արթնանալ ճերմակ մորուքով: Բենվենուտոն ստիպված էր ձիու նման կանգնած քնել, ահա թե ինչու հարևաններն ու բարեկամները «Տիտիկ չանող Բենվենուտո» անունը տվեցին նրան, որը այդ օրվանից էլ պինդ կպավ Բենվենուտոյին:
Մի տխուր օր հնոտիավաճառ հայրը ծանր հիվանդացավ և մահամերձ ընկավ անկողին:
- Բենվենուտո, - ասաց նա ընդմիշտ աչքերը փակելուց առաջ, - հիմա դու պետք է մայրիկին օգնես: Նա պառավել է և չի կարող աշխատել: Որևէ ազնիվ գործով զբաղվիր: Չէ՞ որ դա քեզ համար ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Աշխատելով դու միշտ երիտասարդ կմնաս, քանի որ նստելու հնարավորություն չես ունենա:
Հաջորդ օրը, հոր թաղումից հետո, Բենվենուտոն գնաց աշխատանք փնտրելու, բայց նրա վրա սկսեցին ծիծաղել.
- Աշխատա՞նք: Որդյակս, ի՞նչ ես կարծում, մենք էստեղ տիկնի՞կ ենք խաղում, ինչ է: Դու դեռ շատ փոքր ես գործարանում աշխատելու համար:
- Ուզում ես աշխատե՞լ: Եթե մենք քեզ ընդունենք աշխատանքի, տուգանքի կենթարկվենք: Մանուկներին արգելված է աշխատել:
Բենվենուտոն նրանց հետ չէր վիճում, բայց միաժամանակ համառորեն մտածում էր, թե ինչպե՞ս դուրս գա այդ վիճակից:
Նա գնաց տուն, նստեց հայելու առաջ ու սկսեց սպասել:
- Բժիշկն ասում էր, որ եթե ես նստեմ, արագ կսկսեմ ծերանալ: Տեսնենք, ճի՞շտ էր ասում:
Մի քանի րոպեից հետո նկատեց, որ սկսում է մեծանալ, որ կոշիկներն սկսում են ոտքերը սեղմել: Կոշիկները հանեց և սկսեց նայել, թե ինչպես են ոտքերը մեծանում: Հետո նորից նայեց հայելու մեջ և սկզբում շատ զարմացավ:
- Հետաքրքիր է, ո՞վ է այս սև բեղերով պատանին, որ նայում է ինձ: Ինձ թվում է, թե ինչ-որ տեղ արդեն տեսել եմ նրան:
Վերջապես հասկացավ ու սկսեց ծիծաղել.
- Ա՛յ այդ ես եմ: Իրոք որ արագ եմ մեծանում: Դե, իսկ հիմա հարկավոր է շուտ ոտքի կանգնել, թե չէ այնքան էլ չեմ ուզում ծերանալ:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչքան զարմացավ մայրը, իր առաջ տեսնելով երկարահասակ, լայնաթիկունք ու ժանդարմի նման բեղավոր պատանուն, որի ձայնն էլ այնքան էր հաստացել, որ դարձել էր բաս:
- Բենվենուտո, որդիս, այդ ինչքա՜ն ես փոխվել:
- Ավելի լավ, մայրիկ: Ա՛յ կտեսնես, հիմա արդեն ես աշխատանք կճարեմ: Եվ այլևս աշխատանք չորոնեց, մարագից հանեց հոր սայլակն ու գնաց քաղաքի փողոցներում ման գալու:
- Հին շո՜ր, հին կոշի՜կ, - երգում էր նա:
Նրա ուժեղ ձայնը լսելով, հարևանները գլուխները դուրս էին հանում դռներից և ասում.
- Ի՜նչ սիրուն երիտասարդ է: Տեսնես որտեղից հայտնվեց, - հարցնում էին նրանք:
- Տիտիկ չանող Բենվենուտո, այդ դո՞ւ ես:
- Ես եմ, մորաքույր: Կարող եք չկասկածել: Նստած տեղս քնել էի և արթնացա բեղերով:
Այսպես Բենվենուտոն սկսեց աշխատել: Բոլորը սիրում էին նրան: Միշտ ոտքի վրա, միշտ շարժման մեջ, միշտ պատրաստ ուրիշներին օգնելու, միշտ որևէ գործով զբաղված՝ նա չէր կարող մարդկանց դուր չգալ: Մի անգամ նույնիսկ նրան ուզում էին քաղաքագլուխ դարձնել:
- Մեզ հենց այնպիսի մարդ է հարկավոր, ինչպիսին դու ես, որպեսզի բազկաթոռին շատ չնստի...
Բայց Բենվենուտոն հրաժարվեց այդ առաջարկությունից:
Մի քանի տարի հետո մեռավ նրա մայրը:
«Հիմա ես մնացի մեն-մենակ, - մտածեց Բենվենուտոն: - Միևնույն է ես պարապ նստել չեմ կարող, արագ կծերանամ: Արի գնամ աշխարհ ման գամ, տեսնեմ ինչ կա, ինչ չկա»:
Ասաց ու արավ: Վերցրեց հոր սայլակն ու գնաց աշխարհ տեսնելու: Նա օր ու գիշեր քայլում էր, դրա համար էլ շատ բան էր տեսնում և զրուցում էր տարբեր մարդկանց հետ:
- Ի՜նչ հաճելի երիտասարդ եք, - ասում էին նրան: - Նստեք մի քիչ զրույց անենք:
- Զրուցել կանգնած էլ կարելի է, - պատասխանում էր Բենվենուտոն:
Այսպես նա թափառում էր աշխարհում և բոլորովին չէր ծերանում:
Մի անգամ մի հյուղակի մոտից անցնելիս, այնպիսի տեսարան բացվեց նրա առաջ, որ խեղճի սիրտը կուչ եկավ: Անկողնում պառկած էր մի հիվանդ կին, իսկ կողքին ու հատակին նստած էին մի խումբ երեխաներ ու լալիս էին մեկը մյուսից բարձր ձայնով:
- Երիտասարդ, - դիմեց կինը, նկատելով Բենվենուտոյին, - եթե զբաղված չեք, մի րոպեով ներս եկեք, ես տեղիցս շարժվել չեմ կարողանում, որպեսզի երեխաներին հանգստացնեմ, իսկ նրանց արցունքի ամեն մի կաթիլը դանակ է սրտիս մեջ:
Բենվենուտոն մտավ սենյակ, երեխաներից մեկին վերցրեց գիրկը և, սենյակում հետ ու առաջ շարժվելով, սկսեց օրոր ասել: Այսպես նա հանգստացրեց նաև մյուսներին: Միայն ամենափոքրը ոչ մի կերպ ձայնը չէր կտրում:
- Մի րոպեով նստեք, - խնդրեց կինը: - Եթե երեխային գրկած նստեք, անմիջապես կքնի:
Բենվենուտոն մոտեցավ վառարանին, նստեց նրա մոտ եղած աթոռի վրա, և երեխան իսկույն քնեց:
- Շատ շնորհակալ եմ, որդիս, - ասաց կինը: - Եթե դու չլինեիր, ես ինձ կսպանեի, այնքան էի հուսահատվել:
- Օ՜, նույնիսկ կատակով այդպիսի բան մի ասեք, - ասաց Բենվենուտոն:
Դուրս գալիս Բենվենուտոն պատահմամբ նայեց հայելուն և նկատեց, որ մազերը սկսել են սպիտակել: «Իսկ ես բոլորովին մոռացել էի, որ երբ նստում եմ, սկսում եմ արագ ծերանալ», - մտածեց Բենվենուտոն, բայց տեղնուտեղը ուսերն ուղղեց, նայեց քնած երեխաներին, գոհ սրտով հեռացավ:
Մի ուրիշ անգամ գիշերը մի փոքրիկ գյուղի միջով անցնելիս տեսավ լուսավորված մի պատուհան: Ներսում ճախարակի առաջ նստած էր մի աղջիկ. Նա աշխատում էր ու հառաչում:
- Ի՞նչ է պատահել, - հարցրեց Բենվենուտոն:
- Արդեն երեք օր է չեմ քնում: Ես պետք է վաղը անպայման աշխատանքը վերջացնեմ: Եթե չվերջացնեմ, ինձ ոչ մի կոպեկ փող չեն տա, և մեր ընտանիքը կմնա քաղցած: Բացի այդ, կարող են

ճախարակն ինձանից վերցնել: Իսկ ես այնպես քնել եմ ուզում, որ աշխարհում ամեն ինչ կտայի, միայն թե կես ժամ քնեի:
«Կես ժամն ընդամենը երեսուն րոպե է, - մտածեց Բենվենուտոն, - Արի ես մի կես ժամ աղջկա փոխարեն աշխատեմ»:
- Լսեցեք, - ասաց նա, - պառկեք քնելու, ես ձեր փոխարեն մի քիչ կաշխատեմ, ես շատ եմ ուզում մի քիչ նստել այս ճախարակի մոտ: Այնքան սիրուն ճախարակ է և այնքան լավ է աշխատում: Մի կես ժամից ես ձեզ կարթնացնեմ:
Աղջիկը պառկեց թախտին ու կատվի նման անմիջապես քնեց: Բենվենուտոն նստեց ճախարակի մոտ ու սկսեց աշխատել, բայց այդպես էլ այլևս սիրտ չարեց, որ աղջկան արթնացնի: Ամեն անգամ, երբ նայում էր աղջկա կողմը, թվում էր, թե նա շատ գեղեցիկ երազներ է տեսնում:
Եվ ահա սկսեց լուսանալ, արևը բարձրացավ և աղջկան արթնացրեց:
- Աստված իմ, ես ամբողջ գիշեր քնել եմ, իսկ դուք աշխատել եք:
- Ոչինչ, ոչինչ, աշխատելը շատ հետաքրքիր է:
- Իսկ ձեր գլուխն ամբողջովին փոշով է ծածկվել:
«Ո՞վ գիտի թե որքան եմ ծերացել այս գիշեր», - մտածեց Բենվենուտոն, բայց բոլորովին էլ չվշտացավ: Նա հասցրել էր վերջացնել այն աշխատանքը, որ հանձնարարված էր աղջկան: Իսկ աղջկա դեմքը փայլում էր ուրախությունից:
Մի ուրիշ անգամ Բենվենուտոն հանդիպեց մի դժբախտ ծերունու, որի մեռնելու ժամը հասել էր:
- Ափսո՜ս, շա՜տ ափսոս, - ասում էր ծերունին: - Ստիպված եմ այն աշխարհ գնալ ոչ մեկի հետ թուղթ չխաղացած: Իմ բոլոր բարեկամները ինձնից շուտ մեռան:
- Եթե միայն դա է ձեր ուզածը, թուղթ խաղալ ես էլ գիտեմ:
Նրանք սկսեցին խաղալ: Բենվենուտոն ուզում էր կանգնած խաղալ, բայց ծերունին նրան հանդիմանեց:
- Դու կանգնել ու իմ թղթերս ես նայում: Անպայման ուզում ես տանել և օգտվում ես այն հանգամանքից, որ ես թշվառ ծերուկ եմ:
Բենվենուտոն նստեց աթոռին և այդպես էլ մինչև խաղի վերջը տեղից չբարձրացավ: Նա այնքան շփոթված էր, որ թղթերը խառնում էր, դրա համար էլ ծերունին տարավ: Նա ուրախ-ուրախ շփում էր ձեռքերը այն տղայի նման, որը մտել է ուրիշի այգին տանձ թռցնելու և հաջողության է հասել:
- Արի էլի խաղանք, - առաջարկեց ծերունին ուրախ:
Բենվենուտոն ուզում էր տեղից վեր կենալ, չէ որ նա իր կյանքից կորցնում էր օրեր, ամիսներ, գուցե և տարիներ: Բայց չէր ուզում խեղճ ծերունուն վիրավորել: Նա շարունակեց նստած մնալ: Խաղաց երկրորդ, հետո էլ երրորդ անգամ: Ծերունին կարծես թե ուրախությունից երիտասարդացել էր:
- Նրա տարիներն ինձ անցան, - նայելով ծերունու սենյակում կախված հայելուն, հառաչեց Բենվենուտոն:
Բենվենուտոյի մազերը սպիտակել էին այնպես, կարծես ծածկվել էին ձյունով:
Ոչինչ... Ո՞վ գիտե, թե ծերուկը քանի տարի է երազել թղթախաղում մի անգամ տանելու մասին:
Եվ այդպես, ամեն անգամ, երբ ուզում էր որևէ մեկին օգնել և ստիպված էր լինում նստել, մեր Բենվենուտոյի մազերը սպիտակում էին: Հետո մեջքն էլ սկսեց կռանալ այնպես, ինչպես ծառերն են թեքվում ուժեղ քամուց: Ասենք, աչքերն էլ այնքան պարզ չէին տեսնում, ինչպես առաջ: Տիտիկ չանող Բենվենուտոն ավելի ու ավելի էր ծերանում, և վերջապես նրա մազերը բոլորովին սպիտակեցին: Ովքեր նրան լավ ճանաչում էին, ասում էին միշտ.
- Ի՞նչ օգուտ ունեիր, որ մարդկանց լավություն էիր անում: Եթե միայն քո մասին մտածեիր, դու հիմա էլ ծտի նման կթռչկոտեիր:
Բայց Տիտիկ չանող Բենվենուտոն ուրիշ կարծիքի էր. նրա ամեն մի սպիտակ մազը հիշեցնում էր որևէ լավ արարք: Էլ ինչո՞ւ պիտի զղջար:
- Կարող էիր կյանքդ քեզ համար պահպանել, փոխանակ կամաց-կամաց ուրիշներին բաժանելու, - ասում էին հարևաններն ու քավոր-սանահերները:

Բայց Բենվենուտոն ժպտալով գլուխն օրորում էր ու մտածում, որ իր ամեն մի սպիտակ մազը մի նոր բարեկամ է իրեն նվիրել և ինքը հազարավոր բարեկամներ ունի աշխարհի բոլոր կողմերում:
- Իսկ դուք շա՞տ բարեկամներ ունեք, դուք կուզենայի՞ք այդքան շատ բարեկամներ ունենալ:
Բացի այդ, ամեն տեղ ման գալով, Բենվենուտոն երբեք չէր հոգնում, թեև հիմա ստիպված էր հենվել գավազանին և հաճախ կանգ էր առնում շունչ քաշելու համար:
Այսպես թափառելով, նա ընկավ Խաբեբաների աշխարհը, որտեղ, հոր նման, դարձավ հնոտիավաճառ և դրանով հոգում էր իր ապրուստը:
- Դուք այդքան շատ երկրներում եք եղել, - նրա պատմությունն ընդհատելով ասաց Կաղլիկ-կատուն, - մի՞թե չէիք կարող ավելի լավ տեղ ընտրել ձեզ համար:
Տիտիկ չանող Բենվենուտոն ժպտաց:
- Հենց այստեղ են մարդիկ օգնության կարիք զգում: Սա անպայման աշխարհի ամենադժբախտ երկիրն է և դրա համար էլ՝ ամենահարմար տեղը ինձ համար:
- Ահա թե որն է ճշմարիտ ուղին, - բացականչեց Ջելսոմինոն, որը ծերունուն լսում էր արցունքն աչքերին: - Հիմա ես գիտեմ, թե ինչեր կանեմ իմ ձայնով: Փոխանակ ման գամ ամբողջ աշխարհը և ամեն ինչ քարուքանդ անեմ, կաշխատեմ, որ իմ ձայնը մարդկանց ուրախություն բերի:
- Այդ քեզ համար այնքան էլ հեշտ չի լինի, - նկատեց Կաղլիկ-կատուն: - Օրինակ, եթե դու փորձես երեխաներին օրորոցային երգ երգել, ընդհակառակը, կխանգարես, որ նրանք քնեն:
- Բայց երբեմն կարելի է քնած մարդկանց արթնացնելով բարի գործ կատարել, - սիրալիր ասաց Բենվենուտոն:
- Ես այդ խնդիրը կլուծեմ, - բռունցքը հատակին խփելով, ասաց Ջելսոմինոն:
- Իսկ հիմա, - նկատեց Կաղլիկը, - նախ պետք է բուժես քո ծունկը:
Եվ իրոք, Ջելսոմինոյի ծունկը քանի գնում ավելի էր ուռչում, և նա արդեն ոչ կարողանում էր կանգնել, ոչ քայլել: Որոշվեց մինչև առողջանալը թողնել նրան Բենվենուտոյի տանը: Մանավանդ որ Տիտիկ չանող Բենվենուտոն բոլորովին չէր քնում և գիշերները կարող էր հետևել Ջելսոմինոյին, որպեսզի սա նորից երազում չերգի և ոստիկանության ուշադրությունը չգրավի:

Գլուխ տասնհինգերորդ

Այստեղ կկարդաք, թե ինչպես եղավ,
Որ Բանանիտոն հանկարծ բանտ ընկավ:

Դուք, իհարկե, հիշում եք, որ Բանանիտոն մի փոքր ճիգ գործելով, վաղ առավոտյան տանից դուրս եկավ բախտ որոնելու: Որոշակի ոչ մի նպատակ չուներ, ուղղակի ուզում էր որևէ բան անել, որպեսզի ցույց տա իր վարպետությունը:
Քաղաքը նոր արթնանում էր: Դռնապանները երկար փողրակներով փողոցներն էին լվանում և կատակում էին բանվորների հետ, որոնք հեծանիվներով գնում էին գործարան: Դա մի ուրախ, պարզ ու անամպ ժամ էր և Բանանիտոն, կանգնելով մայթի վրա, զգաց, թե ինչպես են իր գլխում ծաղիկների նման գեղեցիկ մտքեր ծաղկում: Նա նույնիսկ զգաց դրանց բուրմունքը, կարծես թե իրոք իր շուրջը, մայթերի վրա, միլիոնավոր մանուշակներ բացվեցին:
- Ա՛յ, սա հիանալի միտք է, - հանկարծ որոշեց նա:
Եվ առանց տեղից շարժվելու, ուղղակի գործարանի դարպասի մոտ, որտեղ կանգնած էր այդ րոպեին, նստեց մայթին, գրպանից հանեց գունավոր կավիճների տուփը և սկսեց նկարել: Մի քանի բանվոր իսկույն շրջապատեցին նրան:
- Գրազ կգամ, - ասաց նրանցից մեկը, - որ սա սովորականի նման առագաստանավ կամ լուսապսակով սուրբ կնկարի: Միայն թե ո՞ւր է սրա շունը, որը տիրոջ գլխարկը ատամներով բռնած պիտի ողորմություն հավաքի:
- Իսկ ես մի այսպիսի դեպքի մասին եմ լսել, - ասաց մյուսը: - Մի նկարիչ հատակին կարմիր գիծ է քաշել և բոլորը շուրջը կանգնած գլուխ են ջարդել, որ իմանան, թե դա ինչ է:
- Եվ ի՞նչ է պարզվում:
- Հարցնում են նկարչին, նա էլ պատասխանում է. «Ուզում եմ տեսնել, թե մեկնումեկը կարո՞ղ է գծի տակով անցնել, թե բոլորը կանցնեն գծով»: Հետո նա գլխարկը գլուխն է քաշում ու գնում: Երևի տախտակը պակաս է եղել:
- Չէ, սրա խելքը գլուխն է երևում, նայեցե՛ք:
Բանանիտոն, առանց գլուխը բարձրացնելու, այնքան արագ էր նկարում, որ մարդիկ չէին հասցնում հետևել նրա ձեռքերի շարժումներին:
Եվ մայթի վրա կարծես թե շունչ էր առնում նրա քիչ առաջվա երազանքը՝ գեղեցիկ մանուշակների մի ամբողջ թուփ է ծաղկում: Ճիշտ է, դա ընդամենը նկար էր, բայց այնքան գեղեցիկ, որ վերջիվերջո օդում իսկապես որ մանուշակի բուրմունք տարածվեց:
- Ինձ թվում է, - շշնջաց բանվորներից մեկը, - որ ես մանուշակի հոտ եմ առնում:
- Ավելի լավ է դդմիկ ասես, - նկատեց նրա ընկերը, - եթե չես ուզում, որ քեզ բանտ նետեն: Ասենք, դու ճիշտ ես, ես էլ եմ հոտ առնում:
Բանանիտոյի շուրջը լռություն տիրեց: Միայն կավիճն էր մայթին քսվելով կամացուկ խզխզում, և յուրաքանչյուր մանուշակագույն գծի հետ մանուշակի բուրմունքն ավելի էր ուժեղանում: Բանվորները ցնցված էին: Նրանք իրենց նախաճաշի փաթեթները մի ձեռքից մյուսն էին փոխում և ցույց էին տալիս, թե իբր ստուգում են հեծանիվների դողերը, բայց աչք չէին կտրում Բանանիտոյի շարժումներից ու հաճույքով շնչում էին մանուշակի բուրմունքը, որն ուրախացնում էր նրանց սիրտը:

Հնչեց գործարանի շչակը, բայց բանվորներից և ոչ մեկը տեղից չշարժվեց: «Այ, ապրես դու, հա», - լսվում էր այս ու այն կողմից: Բանանիտոն գլուխը բարձրացրեց, և նրա հայացքը հանդիպեց իր հանդիսականների աչքերին: Այդ աչքերում նկարիչը այնպիսի մի հիացմունք տեսավ, որից նա շփոթվեց: Արագ հավաքելով իր կավիճները՝ հեռացավ:
Բանվորներից մեկը հասավ նրա հետևից:
- Այդ ի՞նչ ես անում, - ասաց նա, - ինչո՞ւ ես փախչում, մի որպե էլ որ անցներ, մենք քեզ կտայինք մեզ մոտ եղած ամբողջ գումարը: Մենք այդքան գեղեցիկ նկար երբեք չենք տեսել:
- Շնորհակալություն... շնորհակալություն... - շշնջաց Բանանիտոն և անցավ փողոցի մյուս կողմը, որպեսզի մենակ մնա:
Նա երկար թափառեց քաղաքում, բայց սիրտ չէր անում մի նոր նկար սկսել:
Հանկարծ մի շուն տեսավ նա, և նորից նկարչին համակեց իսկական ոգևորություն: Նա տեղնուտեղը պպզեց մայթի վրա և սկսեց նկարել, ահա նորից Բանանիտոյի շուրջը հանդիսականների մի մեծ խումբ հավաքվեց:
- Նայեցեք, նայեցեք, ինչ ինքնատիպ մարդ է՝ կատու է նկարում: Եթե որևէ մեկն ուզենա կատու տեսնել, դրա նեղությունը չի քաշի, մեր քաղաքում կատու ինչքան ասես կա:
- Սա սովորական կատու չէ, - ուրախ պատասխանեց Բանանիտոն:
- Լսեցեք, նա սովորական կատու չի նկարում, այլ երևի ակնոցավոր կատու:
Բոլոր խոսակցությունները կարծես թե կախարդանքով դադարեցին, երբ Բանանիտոյի շունը թռավ ոտքի և սկսեց ուրախ հաչել: Ամբոխի մեջ զարմանքի բացականչություններ լսվեցին և պատահարի վայրում իսկույն ոստիկաններ հայտնվեցին:
- Այս ի՞նչ բան է, ի՞նչ է տեղի ունենում, ա՜, ա՜, տեսնում եմ, տեսնում, ավելի ճիշտ, լսում եմ, հաչող կատու: Կարծես թե քիչ են մլավող շները, հիմա էլ հաչող կատու: Սա ո՞ւմ կատուն է:
Ամբոխը արագ ցրվեց՝ ոչ ոք չէր ուզում այդ հարցին պատասխանել: Միայն մի խեղճ մարդ, որ կանգնած էր ոստիկանի կողքին, չհասցրեց փախչել, քանի որ վերջինս պինդ բռնել էր նրա ձեռքը:
- Կատուն սրանն է, - շշնջաց մարդը, ցույց տալով Բանանիտոյին:
Ոստիկանը թողեց նրան և բռնեց Բանանիտոյին:
- Հապա մի գնանք ինձ հետ:
Բանանիտոն թույլ չտվեց, որ իրեն երկար խնդրեն: Նա կավիճները դրեց գրպանը ու հետևեց ոստիկանին, չկորցնելով իր լավ տրամադրությունը: Իսկ շունը պոչը ցցած՝ փախավ իր գործին:
Բանանիտոյին գցեցին մի առանձին խուց, որտեղ պետք է սպասեր, մինչև ոստիկանապետը հարկ համարեր քննել նրան: Բանանիտոյի ձեռքերն ուղղակի քոր էին գալիս աշխատելու ցանկությունից: Նա մի թռչնակ նկարեց և բաց թողեց, բայց թռչնակը չուզեց նկարչից հեռանալ, նստեց Բանանիտոյի ուսին և սկսեց քնքշանքով կտցահարել նրա ականջը:
- Հասկանալի է, - ասաց Բանանիտոն, - դու քաղցած ես:
Եվ նա արագ կորեկի մի քանի հատիկ նկարեց: Դա նրան հիշեցրեց, որ ինքն էլ դեռ նախաճաշ չի արել:
- Ինձ երկու ձվից ձվածեղն էլ բավական է: Վատ չէր լինի, եթե վրան մի հատ էլ հասած ու խոշոր դեղձ ուտեի:
Ու նկարեց այն, ինչ որ սիրտն ուզում էր. շուտով ձվածեղի բուրմունքը տարածվեց սենյակով մեկ և, դռնից դուրս գալով, դիպավ պահակի քթին:
- Ի՜նչ հիանալի է, - ասաց երիտասարդ պահակը, ագահորեն հոտոտելով օդը, որպեսզի բաց չթողնի ձվածեղի բուրմունքը:
Բայց հետո նրա մեջ կասկած առաջացավ: Նա բաց արեց դռան դիտանցքը և նայեց ներս: Տեսնելով, որ բանտարկյալը մեծ հաճույքով ձվածեղ է ուտում, նա զարմանքից քար կտրեց և հենց այդ դիրքով էլ ու զարմանքի արտահայտությունը դեմքին ոստիկանապետը բռնացրեց նրան:
- Ա՜յ, սա գործ - բացականչեց նա զայրույթից կարմրելով: - Սա ուղղակի հիանալի է: Երևում է, մենք բանտարկյալներին ռեստորանից ուտելիք ենք բերում:
- Ես... ես չէ... - կմկմաց պահակը:

- Ինչ է, դու կանոնադրությունը չգիտե՞ս: Հաց և ջուր, ջուր և հաց, ուրիշ ոչինչ:
- Ես չգիտեմ, թե ինչպես ստացվեց, - վերջապես կարողացավ խոսել պահակը: - Գուցե նա ձվերը գրպանում էր եկել:
- Լավ, իսկ վառարա՞ն որտեղից: Ինչպես տեսնում եմ, իմ բացակայության ընթացքում ձեզ մոտ նորություններ են հայտնվել՝ խցերում խոհանոցներ են ավելացել:
Բայց այդ պահին ոստիկանապետը իր աչքով տեսավ, որ խցում ոչ մի օջախ էլ չկա: Իսկ Բանանիտոն, որպեսզի իզուր տեղը վնաս չտա պահակին, որոշեց խոստովանել, թե ինչպես է նախաճաշ ձեռք գցել:
- Դու ինձ հիմարի տե՞ղ ես դրել, - զայրացավ ոստիկանապետը: - Իսկ հիմա ի՞նչ կանես, եթե հրամայեմ, որ ինձ համար սպիտակ գինու մեջ եփած տափակաձուկ նկարես:
Բանանիտոն ոչ մի խոսք չասաց. վերցրեց թղթի մի կտոր և սկսեց նկարել պատվիրած ճաշը:
- Մաղադանոսո՞վ, թե՞ առանց մաղադանոսի, - նկարելով հարցրեց նա:
- Մաղադանոսով, - ծիծաղելով հրամայեց ոստիկանապետը: - Դու իրոք ինձ ապուշի տեղ ես դրել: Հենց որ վերջացնես նկարելը, քեզ կստիպեմ, որ այդ ամբողջ թուղթը կուլ տաս:
Բայց երբ Բանանիտոն աշխատանքն ավարտեց, սպիտակ գինու մեջ եփած տափակաձկան հաճելի բուրմունքը տարածվեց խցով մեկ, իսկ մի քանի վայրկյան հետո ոստիկանապետի՝ զարմանքից դուրս ցցված աչքերի առաջ սեղանի վրա հայտնվեց թեթև գոլորշի արձակող ափսեն, որը կարծես ասում էր. «Խնդրեմ, կերեք»:
- Բարի ախորժակ, - ասաց Բանանիտոն: - Ճաշը պատրաստ է:
- Ես ինչ-որ չեմ ուզում ուտել, - փնթփնթաց ոստիկանապետը ուշքի գալով, - տափակաձուկը թող պահակն ուտի, իսկ դու արի ինձ հետ:

Գլուխ տասնվեցերորդ

Բանանիտոյին առաջ քաշեցին,
Դարձավ մինիստր, բայց շուտ քշեցին:

Պահնորդների պետը հիմար մարդ չէր: Ընդհակառակը, նա շատ խորամանկ էր:

«Այս մարդը, - Բանանիտոյին թագավորի պալատ ուղեկցելով մտածում էր նա, - իր քաշով մեկ ոսկի արժի, գուցե և ավելին: Եվ քանի որ ես բավական մեծ գանձապահարան ունեմ, էլ ինչո՞ւ պիտի նրա մեջ մի քանի կիլո ոսկի չպահեմ, այնտեղ այդ ոսկիներին ոչ ոք ձեռք չի տա և մկներից էլ պաշտպանված կլինեն: Թագավորն անպայման ինձ մեծ պարգև կտա»:

Բայց նրա հույսերը չարդարացան: Իմանալով պատահածի մասին, Ջակոմոն թագավորը հրամայեց նկարչին իր մոտ բերել, ոստիկանապետին սառը հրաժեշտ տալով, թագավորն ասաց.

- Ձեր հայտնագործության համար դուք հատուկ ծառայության մեդալ կստանաք:

- Ինչի՞ս է պետք այդ մեդալը, - քթի տակ փնթփնթում էր ոստիկանապետը: - Ես արդեն քսանչորս այդպիսի մեդալ ունեմ և բոլորն էլ խաղաքարտից են: Եթե իմ սեղանների ոտները ծուռտիկ լինեին, ես այդ մեդալները կդնեի դրանց տակ, որպեսզի չշարժվեին:

Նկարիչը ամենակարող թագավորին ներկայացավ առանց հուզմունքի: Աչքը գցած թագավորի նարնջագույն կեղծամին, որն այնպես էր շողշողում թագավորի գլխին, կարծես շուկայում ցուցադրված նարնջով լի զամբյուղ լիներ, նա հանգիստ պատասխանում էր Ջակոմոնի հարցերին:

- Ինչո՞ւ եք այդպես նայում, - հարցրեց թագավորը:

- Ես հիանում եմ ձեր մազերով, ձերդ մեծություն:

- Իսկ դուք կարո՞ղ եք այսպիսի մազեր նկարել:

Ջակոմոնը հոգու խորքում հույս ուներ, որ Բանանիտոն ուղղակի իր ճաղատի վրա գեղեցիկ մազեր կնկարի, և ինքն այլևս ստիպված չի լինի ամեն անգամ քնելուց առաջ մազերը հանել ու դնել պահարանի վրա:

- Այդքան գեղեցիկ, իհարկե, չեմ կարող, - պատասխանեց Բանանիտոն, կարծելով, թե այդ պատասխանով թագավորին հաճույք կպատճառի:

Հոգու խորքում նա խղճում էր թագավորին, որին սեփական ճաղատն այդքան վշտացնում էր: Ախր, շատերը բոլորովին մազերը խուզում են, որպեսզի չսանրվեն: Բացի այդ, մարդկանց, միևնույն է, մազերի գույնով չեն դատում: Ջակոմոնը թեկուզ ունենար սեփական գեղեցիկ մազեր, սև ու գանգուր, միևնույն է, էլի նույն սրիկան ու ծովահենը կլիներ, ինչպես որ նրան մարդիկ գիտեին:

Հառաչելով, Ջակոմոնը որոշեց իր ճաղատը մազերով զարդարելու միտքը միառժամանակ հետաձգել: Բայց դրա փոխարեն նա որոշեց Բանանիտոյի տաղանդն օգտագործել այնպես, որպեսզի ինքը պատմության մեջ մնա որպես մեծ թագավոր:

- Ես քեզ կենդանաբանական այգու մինիստր կդարձնեմ, - ասաց նա նկարչին: - Կենդանաբանական այգի ունենք, բայց արի տես, որ մեջը գազաններ չկան, դու ինքդ պետք է գազաններ նկարես: Եվ, խնդրում եմ, որ գազանների բոլոր տեսակներից լինեն:

«Ավելի լավ է մինիստր լինել, քան բանտ նստել», - մտածեց Բանանիտոն: Եվ մինչև երեկո, բազմաթիվ հանդիսականների աչքի առաջ, նա հազարավոր տեսակի գազաններ և կենդանիներ նկարեց ու կենդանացրեց: Առյուծներ, վագրեր, կոկորդիլոսներ, փղեր, թութակներ, կրիաներ, պելիկաններ: Շներ էլ նկարեց: Պատկերացրեք, նույնիսկ շներ բակապահ, բարակ, շպից, տաքսա, որոնք սկսեցին բարձր-բարձր հաչել, տհաճություն պատճառելով պալատականներին:
- Ի՞նչ կլինի մեր օրը, եթե նորին մեծությունը թույլ տա, որ շները հաչեն, - մռթմռթում էին նրանք: - Դա ախր օրենքին հակառակ է: Նման վատ օրինակ աչքի առաջ ունենալով, մարդկանց գլխում վտանգավոր մտքեր կառաջանան:
Բայց Ջակոմոնը հրամայեց Բանանիտոյին չխանգարել և թույլ տալ, որ նա իր ուզածն անի: Այսպիսով, պալատականներն ստիպված էին իրենց զայրույթը խեղդել և հաշտվել:
Մինչ Բանանիտոն նկարում էր, գազաններն իրենց տեղերն էին գրավում վանդակներում: Այսպես, ավազանի մեջ հայտնվեցին սպիտակ արջեր, ծովառյուծներ, պինգվիններ, իսկ կենդանաբանական այգու ծառուղիներում երեխաներին ման ածելու համար երևացին սայլակներին լծած իշուկներ:
Այդ երեկո Բանանիտոն չկարողացավ վերադառնալ իր ձեղնահարկը գիշերելու: Թագավորը նրան պալատում առանձին սենյակ հատկացրեց և դռների վրա տասը պահակ նշանակեց, որպեսզի նկարիչը հանկարծ չփախչի:
Հաջորդ օրը կենդանաբանական այգում այլևս անելիք չկար, և Բանանիտոյին դարձրին սննդամթերքի մինիստր կամ, ինչպես ասում էին, պետության առաջին թղթագործը: Նրա համար սեղան պատրաստեցին և անհրաժեշտ ամեն բան տվեցին, որպեսզի պալատի մուտքի մոտ նկարի: Մարդիկ կարող էին դիմել նրան ուտելու համար ամեն բան ստանալու խնդրանքով:
Սկզբում ոմանք հիսաթափվեցին: Եթե Բանանիտոյից թանաք էին ուզում, որը խաբեբաների լեզվով նշանակում էր հաց, նա իսկույն մի սրվակ թանաք էր նկարում և ասում.
- Հետևյալը.
- Իսկ ինչի՞ս է պետք թանաքը, - փնթփնթում էր ձախորդը, - ոչ ուտել կարող եմ, ոչ խմել:
Բայց շուտով մարդիկ հասկացան, որ եթե ուզում են Բանանիտոյից որևէ բան ստանալ, պետք է առարկաներին տան իրենց իսկական արգելված անունները:
Պալատականների զայրույթը հասավ գագաթնակետին:
- Գործերը քանի գնում՝ վատանում են, - կատաղությունից կանաչելով ծղրտում էին նրանք: - Սրանից լավ բան դուրս չի գա: Այսուհետև ոչ ոք չի ստի: Ի՞նչ է պատահել թագավորին:
Իսկ Ջակոմոն թագավորը դեռ սպասում էր հարմար պահի, որպեսզի Բանանիտոյին ասի իսկական մազերի մասին: Նա անհամբեր սպասում էր այն օրվան, երբ առանց քամուց վախենալու կկարողանա բաց գլխով ման գալ: Իսկ առայժմ նա նկարչին թույլ էր տալիս, որ ինչ ուզենա անի, և այստեղ նա ոչ մի առարկություն չէր հանդուրժի: Պալատականներն այդ դառը հաբերն ընդունելով, դարձյալ դժգոհ էին մնում, չնայած փորները լիքն էր այդ հաբերով:
Գեներալները նույնպես դժգոհ էին:
- Տեսեք, թե ինչ է ստացվում, - ասում էին նրանք: - Վերջապես մեր ձեռքն է ընկել այդ նկարիչը, և մենք թողնում ենք, որ նա ի՞նչ անի. ձվածեղ, խորոված հավ, տապակած կարտոֆիլ ու շոկոլադ պատրաստի: Պետք էր թնդանոթներ սարքել, թնդանոթներ: Մենք կարող էինք անպարտելի բանակ ունենալ և թագավորության տերությունը լայնացնել:
Ամենառազմաշունչ գեներալը գնաց ու այդ մասին ասաց Ջակոմոն թագավորին:
Հին ծովահենն զգաց, թե ինչպես արյունն սկսեց եռալ իր երակներում:
- Թնդանոթներ, - բացականչեց նա: - Հոյակապ է, թնդանոթներ: Իհարկե, նաև նավեր, օդանավեր, դիրիժաբլներ: Անմիջապես ինձ մոտ կանչեք այդ սատանայի տարած Բանանիտոյին:
Վաղուց էր, ինչ թագավորի մերձավորները նրա բերանից սատանա բառը չէին լսել: Իսկ դա նրա ամենասիրած հայհոյանքն էր այն ժամանակ, երբ նավի հրամանատարական կամրջակին կանգնած ծովահեններին նավաճանկման ուղարկելուց առաջ ճառեր էր ասում:



Իսկույնևեթ դադարեցվեց մթերքի բաժանումը, և Բանանիտոն կանգնեց թագավորի ու նրա գլխավոր շտաբի առաջ: Պատերին աշխարհագրական մեծ քարտեզներ էին կախված, իսկ ծառաներն արդեն բերել էին դրոշակիկների տուփը, որպեսզի նրանցով նշեին գալիք հաղթանակների վայրերը:

Բանանիտոն շատ հանգիստ, ոչ ոքի չընդհատելով, լսեց նրանց բոցավառ ճառերը: Բայց երբ նրան թուղթ ու մատիտ տվեցին, որպեսզի սկսի թնդանոթներ ստեղծել, նա թղթի մեջտեղում խոշոր

տառերով գրեց. «Ոչ», և թուղթը ձեռքին անցավ ամբողջ դահլիճով մեկ, որպեսզի համոզվի, որ բոլորը կարդացել են իր գրածը:
- Սինյորներ, - ասաց նա, - եթե դուք կամենաք լավ սուրճ, որպեսզի ուղեղներդ մաքրեք, ես կարող եմ մի րոպեից էլ պակաս ժամանակում պատրաստել: Եթե ձեզանից յուրաքանչյուրն ուզենա աղվեսներ որսալու համար ձի ունենալ, ես ամենազտարյուն նժույգը կարող եմ նկարել: Բայց թնդանոթների մասին պետք է մոռանաք: Երբեք ինձանից թնդանոթ չեք ստանա:
Այստեղ մի իսկական իրարանցում սկսվեց: Բոլորն սկսեցին գոռգոռալ և բռունցքները խփել սեղանին:
- Գլուխը, գլուխը կտրել, - լսվեցին ձայներ:
- Այդպես էլ կանենք, - արտասանեց վերջապես Ջակոմոնը, - միայն թե գլուխը կտրելու փոխարեն մենք նրան առայժմ մտածելու ժամանակ կտանք: Ինձ թվում է, քանի որ այս նկարիչը հանճարեղ է, ուրեմն այնքան էլ նորմալ չէ: Մի քանի օրով նրան ուղարկեք խելագարանոց:
Պալատականներին վճիռը շատ մեղմ թվաց: Նրանք սկսեցին տրտնջալ, բայց գիտենալով Ջակոմոնի բնավորությունը, լեզուները շուտ իրենց քաշեցին:
- Առայժմ, - շարունակեց Ջակոմոնը, - թույլ չտալ նկարել ոչ մատիտով, ոչ էլ ներկերով:
Եվ ահա Բանանիտոյին նետեցին խելագարանոցի մի առանձին խուց: Նրան թույլ չտվեցին վերցնել ոչ թուղթ, ոչ մատիտ, ոչ վրձին և ոչ էլ ներկեր: Խցում կավիճի կամ աղյուսի կտորտանք էլ չկային: Թերևս կարելի էր թաղիքով պատած պատերին արյունով նկարել: Բանանիտոն ստիպված էր հաշտվել այն մտքի հետ, որ նոր գլուխգործոցներ չի կարողանա ստեղծել:
Նա մեկնվեց խշտյակի վրա, ձեռքերը դրեց գլխի տակ և հայացքը գցեց նոր սպիտակեցրած առաստաղին: Նրա աչքերի առջևից հերթով գեղեցիկ տեսիլներ էին գալիս ու գնում: Դրանք այն նկարներն էին, որոնց նա կյանք կտար այստեղից դուրս գալուց հետո: Իսկ որ այստեղից դուրս կպրծներ, բոլորովին չէր կասկածում:
Եվ նա իրավացի էր, որովհետև մեկը կար, որ արդեն աշխատում էր Բանանիտոյին փրկել: Այդ փրկարարի անունը երևի արդեն ձեր լեզվի վրա է: Դե, իհարկե, դուք չեք սխալվում, դա Կաղլիկ-կատուն է:

Գլուխ տասնյոթերորդ

Կաղլիկ-կատուն իր թաթիկը կորցրեց,
Բայց նկարչին պատուհանից փախցրեց:

Երբ Տիտիկ չանող Բենվենուտոյի տանը բուժում էին Ջելսոմինոյի կոտրված ծունկը և հայտնի դարձավ, որ նկարիչը մինիստր է դարձել, Կաղլիկ-կատուն որոշեց գնալ Բանանիտոյի մոտ և Մորաքույր Եգիպտացորենին ու Ռոմոլետային ազատելու մասին խնդրագիր տալ: Դժբախտաբար, նա պալատ հասավ այն ժամանակ, երբ Բանանիտոյի երջանիկ աստղը մարել էր արդեն:

- Եթե ուզում ես նկարչին տեսնել, պիտի գժանոց գնաս, - ասացին նրան ոստիկանները, - բայց քեզ ո՞վ կթողնի նրա մոտ. այ եթե դու էլ գիժ լինեիր...

Կաղլիկ-կատուն երկար մտածեց՝ արդյոք խելագա՞ր ձևանա, թե մի ուրիշ ճանապարհով գժանոց մտնի:

- Թաթիկներս, օգնության հասեք, - որոշեց նա վերջապես: - Չէ՞ որ դուք հիմա չորս հատ եք և ձեզ համար ավելի հեշտ կլինի մագլցել պատերով:

Խելագարանոցը գտնվում էր մի հսկայական, մռայլ շենքում, որն ավելի շուտ բերդի էր նման: Նրա շուրջը պարսպի երկարությամբ ջրով լի փոս կար: Կաղլիկ-կատուն ստիպված էր լողանալ: Նա սուզվեց ջրի մեջ և լողալով անցավ փոսը: Հետո մագլցեց պատով ու իրեն ներս գցեց առաջին բաց պատուհանից, որը, պարզվեց, խոհանոցի պատուհանն էր: Խոհարարներն ու ծառաները քնելու էին գնացել, բացի մի տղայից, որը հատակն էր լվանում... Կատվին տեսնելով, նա ձայնը գլուխը գցեց.

- Կորիր այստեղից, զզվելի կատու: Չգիտե՞ս, որ այստեղ թերմացք չի լինում:

Եվ իրոք, խեղճ տղան միշտ այնքան քաղցած էր մնում, որ ուտում էր խոհանոցի բոլոր մնացորդները, անգամ ձկան ոսկորները: Կատվին քշելով, որպեսզի սա չխլի իր վերջին պատառը, նա շտապելուց բաց արեց դուռը, որը տանում էր դեպի մի երկար միջանցք: Միջանցքի երկու կողմերում ձգվում էին խելագարների, ավելի ճիշտ բանտարկյալների հիվանդասենյակները: Նրանք խելագար չէին, նրանց մեղքն այն էր, որ մի անգամ փորձել էին ճշմարտությունն ասել և, իրենց բախտից, այդ ճշմարտությունը լսել էին Ջակոմոն թագավորի պահնորդները: Մի քանի սենյակներ միջանցքից բաժանվում էին միայն ամուր վանդակներով, մի քանիսն էլ փակված էին հսկայական երկաթե դռներով, որոնց վրա ուտելիքը տալու համար փոքրիկ պատուհաններ էին բացված:

Մի այդպիսի սենյակում Կաղլիկ-կատուն տեսավ Մորաքույր Եգիպտացորենի կատուներին, և ի մեծ զարմանս իր՝ բարի Բարբոսին: Նրանք գլուխները մեկը մյուսի պոչին դրած քնել էին և ով գիտի, թե ինչ գեղեցիկ երազներ էին տեսնում: Կաղլիկ-կատուն սիրտ չարեց նրանց արթնացնել, չէ՞ որ ոչնչով չէր կարող խեղճերին օգնել: Այդ նույն սենյակում, ինչպես գիտեք, տեղավորել էին Կալիմեր Մուրհակին, որը քնած չէր ու հենց որ տեսավ Կաղլիկին, սկսեց խնդրել.

- Քույրիկ, մի հատ մուկ բեր ինձ համար, չէ՞ որ դու ազատ ես: Միայն մի մուկ... Արդեն ինչքան ժամանակ է, որ իմ ճանկը ոչ մի մուկ չի ընկնում:

«Այ, սա իսկական գիժ է», - մտածեց Կաղլիկ-կատուն, որը Կալիմերին չէր ճանաչում:

Միջանցքի վերջում գտնվում էր ընդհանուր սենյակը, ուր առնվազն հարյուր մարդ էր քնած: Նրանց մեջ էին Մորաքույր Եգիպտացորենն ու Ռոմոլետան: Եթե լույսը վառ լիներ, Կաղլիկ-կատուն երևի նրանց տեսներ ու ճանաչեր: Իսկ եթե Մորաքույր Եգիպտացորենը քնած չլիներ, իր սովորության համաձայն, երևի բռներ Կաղլիկ-կատվի պոչը: Բայց լույսը հանգցրած էր, և բոլոր բանտարկյալները,

նրանց թվում նաև Ռոմոլետան, խորը քնած էին: Կաղլիկ-կատուն թաթերի ծայրերի վրա անցավ այդ սենյակով և հայտնվեց վերին հարկը տանող աստիճանների վրա: Երկար որոնումներից հետո վերջապես գտավ այն խուցը, որտեղ բանտարկված էր Բանանիտոն:
Նկարիչը, գլուխը դրած ձեռքերին, հանգիստ քնած էր և երազում տեսնում էր այն սքանչելի կտավները, որ ապագայում պետք է նկարեր: Հանկարծ այդ նկարներից մեկի վրա մի դատարկություն հայտնվեց և գեղեցիկ ծաղկեփնջի միջից երևաց մի կատվի գլուխ, որը մլավում էր իսկ և իսկ Կաղլիկ-կատվի նման: Բանանիտոն արթնացավ և, մի հայացք գցելով դռան կողմը, հասկացավ, որ դեռ գտնվում է խելագարանոցում: Բայց դռան վրայի փոքրիկ պատուհանը բաց էր, որտեղից երևում էր Կաղլիկ-կատվի գլուխը:
- Բանանիտո, Բանանիտո, այ թե պինդ ես քնում, հա՛...
- Գրազ կգամ, որ ես տեսնում եմ Կաղլիկ-կատվի բեղերը, - ասաց Բանանիտոն:
- Արթնացիր, քեզ ասում եմ: Այդ ես եմ, Կաղլիկ-կատուն, քո նկարած թաթով, որն իմիջիայլոց հիանալի է գործում:
Այս ասելով Կաղլիկ-կատուն ամբողջովին կուչ եկավ, որպեսզի անցքից կարողանա ներս մտնել և, երբ այդ նրան հաջողվեց, նա մոտեցավ Բանանիտոյին ու լիզեց նրա ձեռքը:
- Եկել եմ, որ քեզ օգնեմ, - ասաց նա:
- Շնորհակալ եմ, բայց ինչպե՞ս:
- Ես դեռ չգիտեմ, բայց չէ՞ որ կարելի է պահակից բանալիները թռցնել:
- Նա կարող է արթնանալ:
- Այդ դեպքում ես դուռը կկրծեմ ու կօգնեմ, որ այստեղից դուրս գաս:
- Այո, եթե քո տրամադրության տակ տասը տարի ժամանակ լիներ, գուցե և երկաթե դռան վրա մի փոքրիկ անցք կարողանայիր բացել: Բայց ես գիտեմ, թե ինչ է մեզ հիմա պետք:
- Ի՞նչ:
- Մեզ սղոց է պետք, երկաթե սղոց: Դու մի սղոց ճարիր, իսկ մնացածը ես ինքս կանեմ:
- Որ այդպես է, գնամ սղոց ճարելու:
- Շատ ավելի հեշտ կլինի, - ասաց Բանանիտոն, - եթե կարողանայի սղոցը նկարել, բայց այդ ավազակները ինձ մոտ մի քոսոտ մատիտ էլ չթողեցին:
- Եթե գործը այդտեղ է հասել, - բացականչեց Կաղլիկ-կատուն, - ահա քեզ իմ թաթերը: Մի մոռացիր, որ իմ թաթերից երեքը կավիճով են նկարված, իսկ չորրորդը յուղաներկով:
- Բայց ախր թաթերդ կմաշվեն:
Կաղլիկ-կատուն ոչ մի հակաճառություն չէր ուզում լսել:
- Սպասիր, չէ՞ որ դու միշտ էլ կարող ես ինձ համար նոր թաթ նկարել:
- Իսկ ինչպե՞ս իջնենք պատուհանից:
- Պարաշյուտ կնկարես:
- Իսկ ջրով լի փոսն ինչպե՞ս կանցնենք:
- Նավակ կնկարես:
Երբ Բանանիտոն փախուստի համար անհրաժեշտ ամեն բան նկարեց, Կաղլիկ-կատվի թաթից համարյա ոչինչ չմնաց, կարծես թե նրա թաթը կտրել էին:
- Տեսնում ես, - ծիծաղեց Կաղլիկ-կատուն, - ինչ լավ է, որ ես իմ անունը չփոխեցի. Կաղլիկ էի, Կաղլիկ էլ կմնամ միշտ:
- Ես քեզ համար հենց հիմա նոր թաթ կնկարեմ, - առաջարկեց Բանանիտոն:
- Մենք հիմա ժամանակ չունենք: Գնանք, քանի դեռ պահակները չեն արթնացել:
Բանանիտոն սկսեց սղոցել: Բարեբախտաբար, նա այնպիսի մի սղոց էր նկարել, որը կարող էր երկաթը կտրել ձմերուկի նման: Մի քանի րոպեից հետո դռան վրա մի մեծ անցք գոյացավ, և մեր բարեկամները հեշտությամբ դուրս եկան միջանցք:
- Արի գնանք Մորաքույր Եգիպտացորենին ու Ռոմոլետային էլ վերցնենք, իսկ նրանց հետ ազատենք նաև կատուներին:

Բայց աղմուկը արթնացրել էր պահակներին, որոնք մի միջանցքից մյուսն էին անցնում:
- Աշխատենք հասնել խոհանոց, - շշնջաց Կաղլիկ-կատուն: - Եթե հնարավոր չէ, որ բոլորս փախչենք, գոնե երկուսով ազատվենք: Ազատության մեջ ավելի շատ օգուտ կտանք, քան բանտում:
Բայց երբ նրանք նորից հայտնվեցին խոհանոցում, այն նույն տղան սկսեց գոռգոռալ Կաղլիկ-կատվի վրա.
- Չէ՞ որ ես քեզ հենց նոր քշեցի, շատակեր: Դու ինչ է, ուզում ես իմ հացը թռցնե՞ս: Կորիր այստեղից: Ահա լուսամուտը, դուրս կորիր: Եթե խեղդվես, քեզ այդպես էլ պետք է:
Նա այնքան էր ջղայնացել, որ Բանանիտոյի վրա ուշադրություն չդարձրեց: Նա միայն կատվին էր տեսնում և նրա մրցակցությունից էր վախենում: Բանանիտոն կապեց պարաշյուտը, կարգի գցեց նավակը և Կաղլիկ-կատվին ձեռքն առավ:
- Գնա՛նք:
- Հա, հա, կորեք այստեղից, - փնթփնթաց տղան, - որպեսզի ձեր ոտքն այստեղ չլինի:
Միայն այն ժամանակ, երբ Բանանիտոն ցած թռավ, տղան սկսեց կասկածել.
«Սա՞ ով էր», - գլուխը քորելով մտածեց նա: Եվ որպեսզի փորձանքի մեջ չընկնի, որոշեց լռել, իբր թե ոչ ոքի չի տեսել, ոչինչ չի լսել: Եվ աղբի միջից կաղամբի կոթ գտնելով, հաճույքից մռռալով, ատամները խրեց նրա մեջ:
Բանանիտոյի փախուստը շուտով հայտնի դարձավ: Խելագարանոցի պատուհանից պահակները գոռում էին.
- Օգնեցե՛ք, տագնա՛պ, փախել է մի վտանգավոր խելագար...
Բանանիտոն ու Կաղլիկ-կատուն կուչ էին եկել նավակի մեջ, որպեսզի աննկատելի անցնեն փոսը: Բայց նրանք չէին կարողանա շատ հեռու փախչել, եթե նրանց չսպասեր Տիտիկ չանող Բենվենուտոն, որը հասկացել էր Կաղլիկ-կատվի մտադրությունը և իր սայլակով եկել էր նրան օգնության:
- Շուտ, թաքնվեք այստեղ, - շշնջաց ծերունին: Եվ տեղավորելով նրանց սայլակի մեջ, ծածկեց քուրջերով: Մոտեցող պահակներին նա ցույց տվեց հակառակ կողմը և ասաց. - Նայեցեք այնտեղ: Նրանք փախան այդ կողմը:
- Իսկ դու ո՞վ ես:
- Ես աղքատ հնոտիավաճառ եմ, կանգնել եմ հանգստանալու:
Որպեսզի ցույց տա որ իրոք հոգնել է, հնոտիավաճառը նստեց սայլակի բռնակին և սկսեց ծխամորճ ծխել: Խեղճ Բենվենուտոն շատ լավ գիտեր, որ եթե նստի, կավելանան իր սպիտակ մազերը և, ով գիտե, այդ մի քանի րոպեի ընթացքում քանի՞ տարով կծերանա: Բայց դե Բենվենուտոն այդպիսին էր:
«Այն տարիները, որ ես կորցնում եմ, - մտածում էր նա, - մի ուրիշի կյանքը կերկարացնեն: Այդպես իմ կյանքը փաստորեն ես տալիս եմ ուրիշներին»:
Եվ նա ծխամորճի ծուխը փչեց ուղիղ պահակների երեսին:
Դժբախտաբար, հենց այդ ժամանակ Կաղլիկ-կատվի քիթը քոր եկավ: Բանն այն է, որ քուրջերը շատ էին փոշոտ: Եվ միայն ռնգեղջյուրը կարող էր այդ փոշին բուրումնավետ համարել: Կաղլիկ-կատուն փորձեց քիթը սեղմել թաթով, որպեսզի չփռշտա, բայց բավական ուշ հիշեց, որ առջևում նա միայն մի թաթ ունի: Նա փռշտաց և այնքան ուժեղ, որ փոշու ամպեր բարձրացան սայլակից:
Կաղլիկ-կատուն գերադասեց սայլակից դուրս թռչել ու փախչել, որպեսզի նկարչին չհայտնաբերեն:
- Այդ ո՞վ էր, - հարցրին պահակները:
- Ինչ-որ շուն էր, - պատասխանեց Բենվենուտոն, - սկզբում թաքնվեց քուրջերի մեջ, իսկ հիմա, տեսեք, փախչում է:
- Եթե փախչում է, - ասացին պահակները, - կնշանակի խիղճը մաքուր չէ, եկեք հասնենք դրան:
Կաղլիկ-կատուն իր հետևում ծանր ոտնաձայն և «բռնեցեք» կանչեր էր լսում:
- Թող ընկնեն իմ հետևից, - ուրախացավ Կաղլիկ-կատուն, - գոնե հանգիստ կթողնեն Բենվենուտոյին ու նկարչին:

Նա սլանում էր քաղաքի փողոցներով, իսկ պահակները հևասպառ հետևում էին նրան: Ահա նրանք հասան թագավորական պալատի հրապարակը, ուր երկինք էր խոյանում մի հսկայական սյուն:
- Մի թռիչք էլ, և մենք փրկված ենք, - աղաչում էր նա իր թաթերին:
Իսկ թաթերը լավ էին լսում նրան և նույնիսկ ավելորդ եռանդ ցուցաբերեցին՝ փոխանակ միայն կախվելու սյունից և բարձրանալու նրա կատարը, Կաղլիկ-կատուն ուղղակի ծեփվեց սյանը: Նա նորից դարձավ մի երեքթաթանի կատու պատկերող նկար: Այդ վայրկյանին նա նույնիսկ ուրախ էր դրա համար, որովհետև պահակները, ինչպես այդ մասին իրենք էին գրել իրենց զեկուցագրում, մնացին ձեռնունայն:
- Ո՞ւր կորավ կատուն, - հարցնում էին նրանք:
- Ես տեսա, թե ինչպես թռավ այս սյան վրա:
- Սյան վրա ոչինչ չի երևում:
- Երևում են միայն ինչ-որ խզբզոցներ: Նայեցեք, այստեղ ինչ-որ մի երեխա դպրոցից թռցրած կավիճով կատու է նկարել:
- Դե գնանք, նկարի հետ գործ չունենք:
Իսկ Բենվենուտոն այդ ժամանակ սայլակը քշում էր դեպի տուն, մեկմեկ էլ կանգ էր առնում, որպեսզի շունչ քաշի: Նա ստիպված մի երկու անգամ էլ նստեց սայլակի բռնակին, քանի որ հոգնությունից այլևս չէր կարողանում առաջ գնալ: Մի խոսքով, երբ նա տանից դուրս եկավ, ընդամենը ութսուն տարեկան էր: Իսկ հիմա, երբ նորից տեսավ իր տան շեմքը, կլիներ ամենաքիչը հինսուն տարեկան: Նրա կզակը համարյա դիպչում էր կրծքին, աչքերը կորել էին խոր կնճիռների մեջ, իսկ ձայնը խլացել էր, կարծես գետնի տակից էր գալիս:
- Բանանիտո, վեր կաց, հասանք, - ձայն տվեց նա:
Բայց Բանանիտոն նրան չէր լսում, քուրջերի տակ տաքանալով, նա խորը քուն էր մտել:

Գլուխ տասնութերորդ

Այժմ կպատմենք, թե Բենվենուտոն խեղճ
Ինչպես էր տանջվում հոգեվարքի մեջ:

Այն ժամանակ, երբ Բենվենուտոն աշխատում էր նկարչին արթնացնել, նրա թիկունքում հայտնվեց պահակը:
Դու այդ ի՞նչ ես անում այստեղ, չլինի՞ թե քուրջերիդ հետ ես խոսում:
- Ո՞ր քուրջերի հետ, - ժամանակ շահելու համար հարցրեց Բենվենուտոն:
- Ես հո պարզ լսեցի, թե դու ինչպես էիր խոսում՝ քո այդ ծակծկված գուլպաների կույտին դիմելով: Երևի անցքերն էիր հաշվում:
- Գուցե և խոսում էի, ի՞նչ կա որ, բայց ես այդ չեմ զգացել, - քթի տակ փնթփնթաց Բենվենուտոն: - Գիտե՞ք, շատ եմ հոգնել: Ամբողջ օրը սայլակը հրելով թափառում եմ փողոցներում, իսկ իմ տարիքում դա բավական ծանր գործ է:
- Դե որ հոգնել եք, հանգստացեք, - կարեկցանքով ասաց պահակը:
- Ես հիմա կնստեմ, - ասաց Բենվենուտոն և նորից տեղավորվեց սայլակի բռնակին:
- Եթե թույլ տայիք, ես էլ մի փոքր կնստեի, - ասաց պահակը:
- Խնդրեմ, տեղավորվեք, մի բռնակ ևս կա:
- Շնորհակալություն: Գիտե՞ք, գիշերապահներն էլ են հոգնում: Եվ պատկերացնո՞ւմ եք, ես երազում էի դաշնակահար դառնալ: Կնվագեի միշտ նստած, կապրեի լավ երաժշտության մեջ: Ես նույնիսկ դպրոցական շարադրության մեջ գրել եմ այդ մասին: Շարադրության թեման էր՝ «Երբ մեծանաք, ի՞նչ եք դառնալու»: Ես էլ գրեցի. «Երբ մեծանամ, կդառնամ դաշնակահար. կլինեմ բոլոր երկրներում և համերգներ կտամ, ինձ շատ կծափահարեն, և ես նշանավոր մարդ կդառնամ»: Բայց ես նույնիսկ գող բռնելու մեջ փառքի չարժանացա: Ինձ դեռ չի հաջողվել ոչ մի գող բռնել: Ի միջի այլոց դուք պատահմամբ գող չե՞ք:
Բենվենուտոն հանգստացրեց նրան, գլուխը բացասաբար շարժելով: Ծեր հնոտիավաճառը շատ էր ուզում այդ դժբախտ գիշերապահին որևէ մխիթարական բան ասել, բայց այլևս ուժ չուներ: Բենվենուտոն զգում էր, թե ինչպես է յուրաքանչյուր րոպեի հետ կյանքը հեռանում իրենից, բայց նրան ոչինչ չէր մնում անելու, քան լուռ ականջ դնել:
Իսկ գիշերապահը հառաչելով, դեռ երկար պատմում էր իր աշխատանքի մասին, դաշնամուրի մասին, որ երբեք չէր ունեցել, պատմում էր իր երեխաների մասին:
- Ամենամեծը տասը տարեկան է, - ասում էր նա: - Երեկ նա էլ դպրոցում մի լավ շարադրություն գրեց: Ուսուցիչները միշտ էլ միևնույն թեմայով են շարադրություն հանձնարարում. «Ի՞նչ ես դառնալու, երբ մեծանաս»: Իմ տղան գրել էր. «Ես կդառնամ օդաչու և արբանյակով կթռչեմ դեպի Լուսին»: Ես սրտանց ցանկանում եմ, որ տղայիս երազանքն իրականանա, բայց մի երկու տարուց հետո ստիպված կլինեմ նրան ուղարկել աշխատանքի: Չէ՞ որ իմ ռոճիկը չի բավարարում, որ ընտանիքս կերակրեմ: Դժվար է, չէ՞, հավատալ, թե նա տիեզերագնաց կդառնա:
Բենվենուտոն նորից գլուխը բացասաբար շարժեց: Նա դրանով ուզում էր ասել , որ պետք է հավատալ, որ աշխարհում անհնար ոչինչ չկա և երբեք չպետք է հուսահատվել: Բայց պահակը չնկատեց նրա գլխի շարժումը: Նա նայեց Բենվենուտոյի կողմը և նրան թվաց, թե ծերուկը քնած է:
- Խեղճ ծերուկ, - շշնջաց նա, - իսկապես որ հոգնել է: Ինչ արած, շարունակենք մեր շրջագայությունը:



Պահակը հեռացավ ոտքերի թաթերի վրա, որպեսզի աղմուկ չհանի, իսկ Բենվենուտոն շարունակում էր մնալ նստած՝ առանց շարժվելու:

- Այսպես կսպասեմ, - մեղմ հառաչեց նա, - կնստեմ մի քիչ: Ինչ որ կարող էի, արեցի: Բանանիտոն հիմա հեռու է վտանգից, իսկ խեղճ գիշերապահին հնարավորություն տվեցի մի լավ սիրտը դատարկելու:
Նրա մտքերը խառնվում էին, դառնում ավելի շփոթ: Նրան թվում էր, թե հեռվից երգի ձայն է գալիս, կարծես օրորոցային էին երգում: Բայց շուտով նա այդ էլ չէր լսում այլևս:
Այդ օրորոցային երգը, բարեկամներս, Բենվենուտոն երազում չէր լսում: Այնպես պատահեց, որ Ջելսոմինոն, իր սովորության համաձայն, քնի մեջ սկսեց երգել: Նրա ձայնը աստիճաններով գլորվեց ցած, հասավ նրբանցք և Բանանիտոյին արթնացրեց:
- Բենվենուտո, - քուրջերի միջից քիթը դուրս հանելով, ձայն տվեց նա: - Բենվենուտո, որտե՞ղ ենք: Ի՞նչ է պատահել:
Բայց Բենվենուտոն չէր կարող պատասխանել:
Նկարիչը սայլակից ցած թռավ և մի երկու անգամ ցնցեց ծերուկին: Խեղճի ձեռքը սառույցի նման պաղ էր: Իսկ տնից շարունակում էր լսվել Ջելսոմինոյի հմայիչ ձայնը: Քնքուշ օրորոցայինը ճախրում էր օդում և լցնում ամբողջ նրբանցքը:
Բանանիտոն աստիճաններով սլացավ վեր, արթնացրեց Ջելսոմինոյին, և սրանք երկուսով վերադարձան նրբանցք:
- Նա մահացել է, - բացականչեց Ջելսոմինոն:
- Մահացել է մեր մեղքով, իր վերջին ուժերը ծախսելով մեզ համար, մինչդեռ մենք հանգիստ, ոչ մի բանի մասին չմտածելով, քնել էինք:
Նրբանցքի ծայրում երևաց նույն գիշերապահը:
- Արի ներս տանենք, - շշնջաց Ջելսոմինոն:
Բայց նկարչի օգնության կարիքը չկար. Բենվենուտոն երեխայի նման թեթևացել էր, այնպես որ Ջելսոմինոն հեշտությամբ նրան ներս տարավ:
Գիշերապահը մի քանի րոպե կանգնեց դատարկ սայլակի մոտ:
- Ծեր հնոտիավաճառը, երևի, այստեղ է ապրում, - ասաց նա: - Հարկավոր է նրան տուգանել սայլակը ճանապարհի մեջտեղում թողնելու համար: Բայց նա լավ ծերուկ էր: Կձևացնեմ, թե այս նրբանցքով չեմ անցել:
Խեղճ Բենվենուտո: Նրա տանը նույնիսկ աթոռ չկար, որպեսզի մեռածը նստելու տեղ ունենար: Ստիպված էին գլխի տակ բարձ դնելով, հանգուցյալին պառկեցնել հատակին:
Բենվենուտոյին թաղեցին երկու օր հետո այն իրադարձություններից, որոնց մասին դուք կընթերցեք հետևյալ գլուխներում:
Եվ հենց այդ թաղման ժամանակ էլ, իր կյանքում առաջին անգամ, Ջելսոմինոն երգեց առանց որևէ բան ջարդելու: Նրա ձայնը առաջվա նման նորից ուժեղ էր, բայց հնչում էր ավելի քնքուշ, և բոլորը, ովքեր լսում էին նրան, զգում էին, որ ավելի բարի են դառնում:
Բայց մինչ այդ, ինչպես արդեն ասացի ձեզ, շատ դեպքեր եղան: Նախ և առաջ Ջելսոմինոն ու նկարիչը նկատեցին Կաղլիկ-կատվի բացակայությունը: Այդ տխուր օրերի իրարանցման մեջ նրանք ուշադրություն չէին դարձրել դրա վրա:
- Նա ինձ հետ սայլակի մեջ էր, - ասաց Բանանիտոն: - Իհարկե, քուրջերի կույտի մեջ ես չէի կարող նրան նկատել: Բայց, երևակայիր, ես լսեցի, թե նա ինչպես փռշտաց:
- Երևի նա դժբախտության մեջ է ընկել, - ասաց Ջելսոմինոն:
- Իսկ գուցե նա վերադարձել է խելագարանոց՝ Մորաքույր Եգիպտացորենին և Ռոմոլետային ազատելո՞ւ:
- Բոլորը ինչ-որ մի բան անում են, մենակ ես եմ պարապ մնացել: Ես հազիվ կարողանամ ջահերը ջարդել և մարդկանց վախեցնել, - ամաչելով ասաց Ջելսոմինոն:
Ոչ ոք դեռ նրան այդքան հուսահատ վիճակում չէր տեսել: Սակայն հենց այդ րոպեին նրա գլխում մի փայլուն, առաջին կարգի աստղի նման փայլուն միտք ծագեց:
- Չէ, դեռ կտեսնեք, թե ես ինչի եմ ընդունակ. - հանկարծ բացականչեց նա:

- Այդ ո՞ւր, - հարցրեց Բանանիտոն, նկատելով, թե ինչպես նա վեր կացավ ու հագավ բաճկոնը:
- Հիմա իմ հերթն է, - պատասխանեց Ջելսոմինոն: - Տանից դուրս չգաս, քեզ փնտրում է ոստիկանությունը: Դու դեռ իմ մասին կլսես: Օ՜, արտասովոր նորություններ կլսես դու:

Գլուխ տասնիններորդ

Ստելու վարակն է չքանում կարծես,
Գնալով ճշմարտությունը դուր է գալիս մեզ:

Բանանիտոյի փախուստի պատճառով առաջացած իրարանցումից հետո խելագարանոցում նորից հանգստություն տիրեց: Հիվանդասենյակներում, խցերում և միջանցքներում բոլորը քնած էին: Արթուն էր միայն խոհանոցի դժբախտ տղան: Նրան գրեթե երբեք չէր հաջողվում քնել, որովհետև միշտ քաղցած էր լինում և գիշերները մինչև լույս քրքրում էր թափոնը՝ ուտելու որևէ բան գտնելու հույսով: Բանանիտոն և նրանք, ովքեր ընկել էին նկարչի հետևից, տղային քիչ էին հետաքրքրում: Նա միայն հետաքրքրվեց այն տարօրինակ տղայով, որը, ճիշտն ասած, բարձրահասակ չէր, այլ ընդհակառակը, նույնիսկ կարճահասակ էր և որը կանգնել էր հրապարակի կենտրոնում, ուղիղ խելագարանոցի դիմաց ու կլկլացնելով երգում էր:

Խոհանոցի տղան կարտոֆիլի կճեպներ էր ուտում և նայելով երգողին, գլուխն օրորում:

- Սա, երևում է, իսկականից խելքը թռցրել է: Ո՞վ է լսել, որ սերենադներ երգեն ոչ թե գեղեցիկ աղջիկների, այլ խելագարանոցի պատուհանների տակ: Ասենք, դա իր գործն է: Բայց այս ի՞նչ ուժեղ ձայն է: Գրազ կգամ, որ հիմա նրան պահակները կբռնեն:

Բայց պահակները Կաղլիկ-կատվին ապարդյուն հետապնդելուց հետո մեռելի նման քնած էին:

Ջելսոմինոն, որը ձայնալարերը փորձելու համար սկսեց երգել կիսաձայն, այժմ ձայնն ավելի բարձրացրեց: Խոհանոցի տղան մոռացավ կարտոֆիլի կճեպները և այդպես էլ մնաց բերանը բաց:

- Ահա, խնդրեմ, նրան լսելով՝ մարդ քաղցը բոլորովին մոռանում է:

Այդ րոպեին պատուհանի ապակիները ջարդուփշուր եղան և կտորներից մեկը քիչ մնաց կպչեր տղայի քթին:

- Է՛յ, այդ ո՞վ է քար գցում:

Եվ անմիջապես խելագարանոցի հսկայական ու մռայլ շենքի տարբեր մասերում և տարբեր հարկերում սկսեցին պատուհանների ապակիները դուրս թռչել: Պահակներն սկսեցին վազվզել բոլոր միջանցքներով ու մտնել հիվանդասենյակներ՝ կարծելով, թե բանտարկյալներն են ապստամբել: Բայց նրանք ստիպված էին շուտով կարծիքները փոխել: Իսկապես, բանտարկյալներն արթնացել էին, բայց նրանք շատ հանգիստ էին և վայելում էին Ջելսոմինոյի երգեցողությունը:

- Այդ ո՞վ է այստեղ պատուհանները ջարդում, - գոռում էին պահակները:

- Է՛յ, սուս մնացեք, - պատասխանի փոխարեն սաստեցին այս ու այն կողմից: - Թողեք երգը լսենք: Մե՞զ ինչ, թե ապակիները ջարդվում են: Հո մեր ապակիները չե՞ն:

Հետո սկսեցին կտոր-կտոր լինել նաև պատուհանների վանդակները: Երկաթե ձողերը ջարդվում էին լուցկու նման և լուսամուտի շրջանակներից պոկվելով, ընկնում ջրով լի փոսի մեջ ու սուզվում հատակը:

Երբ խելագարանոցի դիրեկտորն այդ իմացավ, սկսեց դողալ:

- Ցրտից է երևի, - ասաց նա իր քարտուղարներին, բայց մտքում ասաց. «Երևի երկրաշարժ է սկսվել»:

Նա կանչեց իր մեքենան և բոլորին ասաց, որ գնում է ամեն ինչի մասին մինիստրին զեկուցելու և փախավ իր քաղաքամերձ ամառանոցը՝ խելագարանոցը թողնելով բախտի քմահաճույքին:

«Ի՜նչ մինիստր, ի՜նչ բան, - չարությունից իրենց կորցրած մտածում էին քարտուղարները, - նա ուղղակի ճղեց, մինիստրը պատրվակ էր միայն: Իսկ մենք, ի՞նչ է, պիտի զոհվենք ինչպես մկները թակարդո՞ւմ: Այդ էր պակաս»:

Նրանք իրար հետևից, մեկը մեքենայով, մյուսը ոտքով, այնքան արագ ճղեցին կախյալ կամուրջի վրայով, որ դարպասի մոտ կանգնած պահակները նույնիսկ չնկատեցին էլ, թե ինչպես չքացան:

Լույսը բացվում էր, և տների կտուրներին արդեն սահում էին լույսի գունատ շողերը: Ջելսոմինոյի համար սա մի ազդանշան եղավ, որը կարծես ասաց նրան. «Բարձր երգիր»:

Մի լսեի՜ք նրան այն ժամանակ: Նրա ձայնը դուրս պոռթկաց այնպիսի ուժով, ինչպես հրաբխի խառնարանից լավան է ժայթքում: Խելագարանոցի բոլոր փայտե դռները տաշեղ դարձած թռան, իսկ երկաթե դռներն այնպես ծռմռվեցին, որ այլևս դռան չէին նմանվում, և ովքեր փակված էին այդ դռների հետևում, ուրախությունից թռչկոտելով դուրս եկան միջանցք:

Պահակները, հսկիչները, սանիտարները մեկը մյուսի հետևից վազեցին դեպի ելքը և կախյալ կամուրջով դուրս թռան հրապարակ: Բոլորը հանկարծ հիշեցին, որ քաղաքում կարևոր գործ ունեն:

- Ես պետք է շանս լողացնեմ, - ասում էր մեկը:

- Ինձ մի քանի օրով հրավիրել են ծովափ, - ասում էր մյուսը:

- Ես մոռացել եմ իմ կարմիր ձկների ջուրը փոխել: Վախենում եմ սատկեն:

Նրանք այնպես էին սովորել ստել, որ չէին կարող ուղղակի խոստովանել, թե վախենում են:

Մի խոսքով, մի քանի րոպեում խելագարանոցի անձնակազմից ոչ ոք չմնաց, բացի խոհանոցի դժբախտ տղայից: Կաղամբի կոթը ձեռքին, նա մնացել էր զարմանքից բերանը բաց, որովհետև բոլորովին ուտել չէր ուզում և կյանքում առաջին անգամ զգաց, թե ինչպես թարմ հոսանքի նման գայթակղիչ մտքեր են անցնում իր գլխով:

Պալատում Ռոմոլետան առաջինը նկատեց, որ բոլոր հսկիչները փախել են:

- Ինչի՞ ենք սպասում, մենք էլ փախչենք, - ասաց նա Մորաքույր Եգիպտացորենին:

- Դա օրենքին հակառակ է, - պատասխանեց Մորաքույր Եգիպտացորենը: - Բայց մյուս կողմից էլ՝ օրենքներն են մեզ հակառակ: Ի՞նչ արած, գնանք:

Ձեռք-ձեռքի տված՝ նրանք գնացին դեպի ելքի աստիճանները, որով արդեն խմբերով գլխապատառ ցած էին վազում մարդիկ: Սարսափելի իրարանցում էր, բայց Մորաքույր Եգիպտացորենը հազարավոր ուրիշ ձայների մեջ Էլ ճանաչեց իր կատուների ձայնը: Ասենք, նրանք էլ՝ Կաղլիկ-կատվի յոթ աշակերտները, բազմաթիվ մարդկանց մեջ անմիջապես ճանաչեցին իրենց հովանավորի բարձր պահած գլուխը և խիստ դեմքը: Անմիջապես մլավելով կախվեցին Եգիպտացորենի վզից և բոլոր կողմերից կպան նրան:

- Դե հիմա բոլորս վերադառնանք տուն, - ասում էր Մորաքույր Եգիպտացորենը արցունքն աչքերին:

- Մեկ, երկու, երեք, չորս... Բոլորն այստեղ են... յոթ, ութ... մեկը նույնիսկ ավելի է:

Դե, իհարկե, դա բարի Բարբոսն էր:

Մորաքույր Եգիպտացորենի գրկում նրա համար էլ տեղ կար:

Ջելսոմինոն թողեց իր երգը և բոլորից հարցնում էր, թե չե՞ն տեսել Կաղլիկ-կատվին: Բայց ոչ ոք նրան չէր կարողանում մի խելքը գլխին պատասխան տալ: Վերջապես նրա համբերությունը հատավ:

- Ներսում որևէ մեկը մնացե՞լ է, - ձայն տվեց նա:

- Ոչ մի շունչ, - լսվեց պատասխանը:

- Դե որ այդպես է, նայեցեք:

Նա ամբողջ կրծքով մեկ օդ ներշնչեց, ինչպես անում են սուզակները սուզվելուց առաջ, ձեռքերին խողովակի ձև տվեց, մոտեցրեց շրթունքներին, որպեսզի ձայնը մի ուղղությամբ գնա, և ճչաց: Եթե Մարսի կամ Վեներայի վրա բնակիչներ լինեին և ունենային լսողություն, նրանք էլ երևի կլսեին Ջելսոմինոյի ձայնը: Բավական է ասել, որ շենքն այնպես ճոճվեց, կարծես ցիկլոն էր անցնում: Ծխնելույզներն ու կղմինդրները կտուրից թռան, ասես փոշի լինեին: Հետո, սկսած վերևի հարկից, պատերը ծռվեցին, դողդողացին և սարսափելի դղրդյունով փուլ եկան՝ լցնելով ջրափոսը և ջուրը այս ու այն կողմ ցփնելով:

Այս բոլորը տևեց մի րոպե: Խոհանոցի տղան, որ մնացել էր ներսում նույնիսկ բանտարկյալների փախուստից հետո, հազիվ հասցրեց դուրս գալ իր պատուհանից և մի երկու թևալողով անցավ ջրափոսն ու հայտնվեց հրապարակում: Նրա հետևից փուլ եկավ խելագարանոցի ամբողջ շենքը:
Ամբողջ հրապարակով մեկ հնչեց «ուռան», և հենց այդ վայրկյանին դուրս եկավ արևը, թեև ոչ ոք գլխի չէր ընկել գնալ նրա հետևից ու կանչել «Շտապի՛ր, թե չէ չես հասնի այդ հիանալի տեսարանին»:
Հրապարակի մարդիկ Ջելսոմինոյին ձեռքերի վրա առան և հաղթականորեն առաջ տարան, իսկ թղթակիցները չկարողացան մոտենալ նրան, որ գոնե հարցնեին, թե ինչ տպավորություն ունի նա:
Ստիպված էին բավարարվել Կալիմեր Մուրհակի հետ զրուցելով, որը մռայլ տեսքով մի կողմ էր քաշվել:
- Դուք ոչինչ չէի՞ք հաղորդի «Օրինակելի ստախոս» թերթին, - հարցրին նրան:
- Մյաու, - պատասխանեց Կալիմերը, թիկունքը նրանց կողմը դարձնելով:
- Հիանալի է, - ասացին լրագրողները: - Դուք ականատեսներից մեկն եք: Չէի՞ք կարող մեզ ասել, թե ինչու ոչինչ չպատահեց:
- Մյաու, - մի անգամ էլ մլավեց Կալիմերը:
- Սքանչելի է: Մենք ամենավճռական ձևով կհերքենք, թե իբր խելագարանոցը փուլ է եկել, և խելագարները ցրվել են ամբողջ քաղաքով մեկ:
- Հասկացեք, - հանկարծ դուրս թռավ Կալիմերի բերանից, - հասկացեք վերջապես, որ ես կատու եմ:
- Դուք ուզում եք ասել, թե շո՞ւն եք, քանի որ մլավում եք:
- Ոչ, ոչ, ոչ, կատու եմ: Ես կատու եմ և մուկ եմ բռնում: Լավ, լավ, հիմա ես ձեզ ինչպես հարկն է տեսա: Դուք կարող եք թաքնվել, ինչքան սրտներդ ուզի, բայց ինձանից չեք փախչի: Դուք մուկ եք և հիմա կընկնեք իմ ճանկը... Մյաու, մյաու...
Այստեղ Կալիմերը ցատկեց: Լրագրողները հազիվ հասցրին ինքնահոսները դնել գրպաններն ու նետվել դեպի իրենց ավտոմեքենաները: Կալիմերն ընկավ գետին և հուսակտուր մլավելով մնաց այդպես ամբողջ օրը, մինչև որ մի խղճով անցորդ նրան բարձրացրեց ու տարավ հիվանդանոց:
Մի ժամ հետո դուրս եկավ «Օրինակելի ստախոս» թերթի արտակարգ համարը: Ամբողջ առաջին էջում հսկայական տառերով գրված էր մի այսպիսի վերնագիր.

ՏԵՆՈՐ ՋԵԼՍՈՄԻՆՈՅԻ ՆՈՐ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐ ԵՐԳՈՎ ՆՐԱՆ ՉՀԱՋՈՂՎԵՑ ԽԵԼԱԳԱՐԱՆՈՑԸ ՔԱՆԴԵԼ:

Թերթի խմբագիրը, հաճույքից ձեռքերը շփելով, ասում էր.
- Հիանալի հերքում ստացվեց: Այսօր ես ամենաքիչը հարյուր հազար օրինակ թերթ կծախեմ:
Բայց շուտով «Օրինակելի ստախոս» թերթի ցրիչները վերադարձան՝ չվաճառված թերթերի կապոցները ձեռքներին: Ոչ ոք չուզեց գոնե մի համար գնել:
- Ինչպե՞ս, - գոռաց խմբագիրը: - Ոչ մի թե՞րթ: Մարդիկ օրացո՞ւյց են կարդում, ինչ է:
- Ոչ, սինյոր խմբագիր, - պատասխանեց ամենահամարձակ ցրիչը: - Օրացույց էլ այլևս ոչ ոք չի կարդում: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող են օրացույցը կարդալ, եթե նրա մեջ դեկտեմբերը օգոստոս է կոչվում: Մի՞թե մարդիկ կտաքանան միայն նրանից, որ ամսի անունը փոխվել է: Մեծ բաներ են տեղի ունենում, սինյոր խմբագիր: Մարդիկ ծիծաղում են մեր երեսին և խորհուրդ են տալիս մեր թերթից թղթե նավակներ շինել:
Այդ ժամանակ խմբագրի առանձնասենյակը մտավ նրա շունը, որն ինքնուրույն կերպով քաղաք էր գնացել:
- Փիսի, փիսի, - մեքենայորեն կանչեց նրա տերը:
- Հա՛ֆ, հա՛ֆ, - պատասխանեց շունը:
- Այդ ի՞նչ է, դու հաչո՞ւմ ես:
Պատասխանի փոխարեն շունը պոչն ուրախությունից շարժելով՝ սկսեց ուժգին հաչել:
- Սա հո աշխարհի վերջն է, - բացականչեց խմբագիրը, ճակատի քրտինքը սրբելով, - իսկական աշխարհի վերջը:

Բայց դա միայն ամեն տեսակ ստի վերջն էր: Խելագարանոցի ավերումից հետո միանգամից ազատություն ստացան հարյուրավոր մարդիկ, որոնք ճշմարտությունն էին ասում, չհաշված շներին, որոնք հաչում էին, կատուներին, որոնք մլավում էին, ձիերին, որոնք խրխնջում էին, ինչպես պահանջում էին կենդանաբանության և քերականության օրենքները: Ճշմարտությունը համաճարակի նման տարածվում էր, և արդեն բնակչության մեծ մասը վարակված էր նրանով: Խանութպաններն արդեն սկսեցին իրենց ապրանքների անունները փոխել ու նոր քարտեր կպցնել:
Մի հացավաճառ պոկեց իր խանութի ճակատին կախված «Գրասենյակային պիտույքներ» ցուցանակը, շուռ տվեց և ածուխի կտորով վրան գրեց, «Հաց»: Իսկույն նրա խանութի առաջ մեծ բազմություն հավաքվեց ու սկսեցին ծափահարել:
Բայց ավելի շատ մարդ հավաքվեց թագավորական պալատի առջևի մեծ հրապարակում: Այդ բազմությունը գլխավորում էր Ջելսոմինոն: Նա երգում էր, և նրա ձայնի վրա հավաքվել էին մարդիկ քաղաքի բոլոր թաղամասերից, նույնիսկ մոտակա գյուղերից:
Իր սենյակի պատուհանից Ջակոմոնը տեսավ այդ բազմությունը և ուրախությունից ծափ տվեց.
- Շուտ, այստեղ եկեք, - գոռաց նա, կանչելով իր պալատականներին: - Իմ ժողովուրդը ուզում է, որ ես ճառ ասեմ: Տեսեք, հրեն հավաքվել են, որ շնորհավորեն իմ տոնը:
- Մի՞թե այսօր տոն է, - հարցնում էին իրար պալատականները: Ձեզ տարօրինակ կթվա, բայց նրանք դեռ չգիտեին, թե ինչ է տեղի ունեցել: Լրտեսները փոխանակ իրենց գցեին պալատ և ամեն ինչի մասին պատմեին, նետվել էին ամեն մեկն իր համար ապահով տեղ որոնելու:
Ջակոմոն թագավորի պալատում կատուները շարունակում էին հաչել: Դրանք ամենավերջին դժբախտ կատուներն էին ամբողջ թագավորության մեջ:

Գլուխ քսաներորդ

Էլ ինչ Ջակոմոն, ինչ հարստություն,
Մնաց հիշատակ մարմարե մի սյուն:

Ինչպես ձեզ հայտնի է, աշխարհում ճակատագրի գիրք գոյություն չունի: Այնպիսի գիրք չկա, ուր գրված լինեն գալիք բոլոր իրադարձությունները: Նման մի գիրք գրելու համար ամենաքիչը պետք էր լինել «Օրինակելի ստախոս» թերթի գլխավոր խմբագիրը: Մի խոսքով, այդպիսի գիրք չկա և չկար նույնիսկ Ջակոմոն թագավորի օրոք:
Եվ ափսոս որ չկար: Եթե այդպիսի գիրք լիներ, խեղճ կեղծամավոր թագավորը կարող էր այն օրը բացել ու կարդալ. «Այսօր Ջակոմոն թագավորը ճառ չի ասի»: Եվ իրոք, մինչ նա սպասում էր, որ ծառաները կբացեն ապակե դռները ու ինքը կհայտնվի պատշգամբում, Ջելսոմինոյի ձայնն սկսեց իր գործը տեսնել՝ ջարդուփշուր եղան ապակե դռներն ու ապակու մանր կտորների անձրև տեղաց հատակին:
- Ձգույշ եղեք, - դիմեց իր ծառաներին Ջակոմոնը, բայց այդ ժամանակ նրա սենյակից ևս ջարդվող ապակու ձայն լսվեց:
- Դա հայելին է, - գոռաց Ջակոմոնը: - Ո՞վ ջարդեց իմ հայելին:
Նորին մեծությունը զարմացած նայեց շուրջը այդ ինչու իրեն չեն պատասխանում: Բայց ավաղ: Նրա թիկունքում ոչ ոք չկար: Նախարարները, ծովակալները, սենեկապետները և բոլոր պալատականները առաջին ազդանշանը, այսինքն՝ Ջելսոմինոյի վերցրած առաջին բարձր ձայնանիշը լսելով, նետվեցին իրենց սենյակները՝ հագուստները փոխելու: Նրանք, առանց ավելորդ խոսքերի, ուղղակի հատակին էին նետում շքեղ հագուստները, որ այդքան տարի կրել էին և մահճակալների տակից հանում հին ճամպրուկները, ուր պահում էին ծովահենի իրենց շորերը:
- Եթե աչքիս սև ժապավեն չկապեմ, ինձ դռնապանի տեղ կդնեն:
- Եթե թևքիս վրայի խարիսխը հանեմ, ոչ ոք ինձ չի ճանաչի, - փնթփնթում էին նրանք:
Ջակոմոնի մոտ մնացել էին միայն նրա այն երկու ծառաները, որոնք պարտավոր էին բաց անել պատշգամբ տանող ապակե դռները: Նույնիսկ հիմա, երբ դռները ջարդվել էին, նրանք հարգանքով բռնել էին դռան բռնակները և մերթընդմերթ փայլեցնում էին դրանք իրենց նախշուն բազկակալներով:
- Դուք էլ գնացեք, - հառաչեց Ջակոմոնը: - Միևնույն է, շուրջս ամեն բան փուլ է գալիս:
Եվ իսկապես, հենց այդ պահին փշրվեցին հսկայական ջահի հազարավոր լամպերը: Երևում էր, որ Ջելսոմինոն այդ օրը կատակ չի անում:
Ծառաները երկար սպասել չտվին: Ետ-ետ գնալով և ամեն երեք քայլից հետո խոնարհվելով՝ նրանք հասան մինչև սանդուղքի վրա բացվող դուռը և, կարծես թե խոսքերը մեկ արած, բազրիքով ցած սլացան, որպեսզի շուտ հայտնվեն ներքևում:
Ջակոմոնը գնաց իր սենյակը, հանեց թագավորական շորերն ու հագավ հասարակ քաղաքացու հագուստ, որը նա գնել էր քաղաքում ծպտյալ շրջելու համար (ասենք, նա երբեք այդ հագուստից չօգտվեց, գերադասում էր քաղաք ուղարկել իր լրտեսներին): Դա մի շագանակագույն կոստյում էր, որը կսազեր բանկային գանձապահի կամ փիլիսոփայության դոկտորի: Իսկ ինչքան էր այդ կոստյումին սազում նարնջագույն կեղծամը... Դժբախտաբար, ստիպված էր հանել նաև կեղծամը, քանի որ ամենուր կեղծամն ավելի էր հայտնի, քան արքայական թագը:
- Ախ իմ սքանչելի կեղծամ, - հառաչեց Ջակոմոնը: - Ավելի ճիշտ՝ իմ սքանչելի կեղծամներ...



Նա բաց արեց իր նշանավոր պահարանը, ուր, ինչպես ներկայացումից առաջ շարված են լինում տիկնիկների գլուխները, շարված էին նրա կեղծամները: Ջակոմոնը չկարողացավ հաղթահարել գայթակղությունը: Նա մի դյուժին կեղծամ հավաքեց ու խոթեց ճամպրուկի մեջ:

- Ես սրանք կտանեմ ինձ հետ... - օտարության մեջ ինձ կօգնեն, որպեսզի հիշեմ երջանիկ օրերի մասին:
Նա աստիճաններով իջավ ցած, բայց ոչ նկուղը, ինչպես արեցին նրա պալատականները, որոնք մկների նման ճղեցին կոյուղու խողովակներով: Ջակոմոնը գերադասեց դուրս գալ դեպի իր հիասքանչ այգին: Ավելի ճիշտ, իր նախկին այգին, որը առաջվա նման հոյակապ էր՝ կանաչ ու բուրումնավետ:
Ջակոմոնը մի անգամ էլ շնչեց թագավորական այգու օդը, հետո բաց արեց մի փոքրիկ դռնակ, որը տանում էր դեպի նրբանցք և համոզվելով, որ իրեն ոչ ոք չնկատեց, մի հարյուր քայլ գնաց ու հայտնվեց հրապարակում, ուր խառնվեց Ջելսոմինոյին կատաղորեն ծափահարող ամբոխին:
Ճաղատ գլուխն ու շագանակագույն կոստյումը լրիվ կերպարանափոխել էին Ջակոմոնին, բացի այդ, ձեռքին ճամպրուկ կար, որը նրան շրջիկ գործակալի տեսք էր տալիս:
- Դուք երևի եկվոր եք, - անսպասելիորեն նրա ուսին բարեկամաբար խփելով հարցրեց մեկը: - Եկեք մեզ հետ տեսնոր Ջելսոմինոյին լսելու: Ահա նա, նայեցեք, այն տղան, որ նման է հեծանվորդի: Տեսքով նա կոպեկ չարժե, բայց լսո՞ւմ եք, թե ինչ ձայն ունի:
- Լսում եմ, լսում, - փնթփնթաց Ջակոմոնը: Եվ մեկուսի ավելացրեց. - և տեսնում եմ:
Այո, նա տեսավ, թե իր սիրած պատշգամբն ինչպես, է կտոր-կտոր լինում, տեսավ, (ինքներդ եք պատկերացնում երևի), թե ինչպես է թղթե տնակի նման փուլ գալիս իր պալատը փոշու հսկայական ամպեր երկինք հանելով: Ջելսոմինոն էլի մի բարձր նոտա վերցրեց, որպեսզի փոշին ցրի, և բոլորը պալատի տեղում միայն ավերակների մի կույտ տեսան:
- Իմիջիայլոց, - նորից Ջակոմոնին դիմեց հարևանը, - դուք գիտե՞ք, որ հոյակապ ճաղատ ունեք: խնդրում եմ չնեղանաք, որ այդպես եմ ասում, կարող եք իմն էլ տեսնել:
Ջակոմոնը ձեռքով գլուխը շփեց, հետո ինչպես որ առաջարկել էին իրեն, նայեց իր հարևանի ճաղատ գլխին, որը պինգ-պոնգի գնդակի նման կլոր էր ու ողորկ:
- Դուք իսկապես որ գեղեցիկ ճաղատ ունեք, - ասաց Ջակոմոնը:
- Ի՞նչ եք ասում, շատ սովորական ճաղատ է. այ ձերն ուղղակի հրաշք է: Բացի այդ, հիմա երբ արևն այնքան լավ է լուսավորում, ձեր ճաղատն այնպես է փայլում, որ մարդու աչք է ցավում նայելիս:
- Ախ, թողեք, դուք պարզապես շատ լավ եք տրամադրված իմ նկատմամբ, - շշնջաց Ջակոմոնը:
- Հավատացնում եմ, որ չեմ չափազանցում: Գիտե՞ք թե ինչ կասեմ ձեզ: Եթե դուք մեր ճաղատների ակումբի անդամը լինեիք, ձեզ անմիջապես պրեզիդենտ կընտրեին:
- Պրեզիդե՞նտ...
- Այո... և միաձայն:
- Իսկ դուք ճաղատների ակո՞ւմբ ունեք:
- Հասկանալի է, որ ունենք: Մինչև երեկ մեր ակումբը գաղտնի էր, բայց այսուհետև կլինի բացահայտ: Ակումբի անդամները մեր քաղաքի մարդիկ են: Եվ գիտե՞ք, բավական դժվար է մեր ակումբի անդամ դառնալը: Պահանջվում է ապացուցել, որ ձեր գլխին ոչ մի մազ չի մնացել: Ոմանք, որպեսզի մեր ակումբի անդամ դառնան, ստիպված են լինում իրենց մազերը փետել:
- Եվ դուք ասում եք, որ ես...
- Կարող եմ գրազ գալ, որ կարող էիք լինել մեր պրեզիդենտը:
Ջակոմոնն զգաց, որ եթե մի րոպե էլ անցնի, կսկսի լալ:
«Ինչպես սխալվեցի, - մտածում էր նա: - Սխալվեցի կյանքիս ուղին ընտրելիս: Բայց հիմա շատ ուշ է արդեն նորից սկսելու համար»:
Օգտվելով այն բանից, որ ամբոխը անընդհատ շարժման մեջ է, նա իր խոսակցին թողեց, դուրս եկավ հրապարակից և անցավ դատարկ փողոցներով: Նրա ճամպրուկում տխուր խշխշում էին տասներկու կեղծամները: Մի քանի անգամ նա նկատեց, թե ինչպես են կոյուղու անցքերից դուրս ցցվում գլուխներ, որոնց ինչ-որ տեղ կարծես տեսել էր առաջ: Չլինի՞ թե իր ծովահեններն են: Բայց գլուխներն անմիջապես անհայտանում էին, հենց որ տեսնում էին այդ ճաղատ գլխով, շագանակագույն կոստյումով լրջադեմ մարդուն:

Որոշելով ինքնասպանություն գործել, Ջակոմոնը ուղիղ գնաց դեպի գետը: Բայց հասնելով ափ, նա միտքը փոխեց: Ճամպրուկը բաց արեց, հանեց կեղծամները և մեկը մյուսի հետևից նետեց ջուրը:
- Գնաք բարով, - շշնջում էր Ջակոմոնը: - Գնաք բարով, փոքրիկ ստախոսներ:
Բայց կեղծամները չկորան: Նույն օրը երեխաները, որոնք գետում կոկորդիլոսներից ավելի էին ավազակություն անում, բռնեցին բոլոր կեղծամները և դուրս հանեցին ջրից: Տղաները այդ կեղծամները չորացրին արևի տակ, դրեցին գլուխները և ուրախ երթ կազմակերպեցին: Նրանք երգում ու ծիծաղում էին և չէին էլ մտածում, որ դրանով Ջակոմոն արքային են թաղում:
Հիմա, երբ Ջակոմոն թագավորը ընդմիշտ հեռանում է և պետք է ասել, որ նրա բախտը լավ բանեց, քանի որ կարող է ինչ-որ տեղ դառնալ ճաղատների պատվավոր ակումբի պրեզիդենտ կամ, ծայրահեղ դեպքում, քարտուղար, եկեք մի անգամ էլ մտնենք հրապարակ:
Ջելսոմինոն իր ահեղ երգն ավարտելով՝ դեմքից սրբեց քրտինքը:
- Ահա և այս գործն ավարտված է:
Բայց, այնուամենայնիվ, նրա սիրտը կսկծում էր Կաղլիկ-կատուն այդպես էլ չգտնվեց:
- Ո՞ւր կարող էր կորչել նա, - ինքն իրեն հարցնում էր մեր հերոսը: - Չլինի՞ թե մնաց խելագարանոցի ավերակների տակ: Չէ՞ որ ես կարգին քարուքանդ անել գիտեմ:
Սակայն ամբոխը չթողեց, որ երկար դարդ անի:
- Սյունը, - ճչում էին նրանք: - Հարկավոր է շուռ տալ սյունը:
- Իսկ ինչո՞ւ:
- Չէ՞ որ այդ սյան վրա Ջակոմոն թագավորի արշավանքների ու սխրագործությունների մասին է փորագրված: Չէ՞ որ դա էլ բացարձակ սուտ է: Ջակոմոնը երբեք իր պալատից քիթը դուրս չի հանել:
- Լավ, - ասաց Ջելսոմինոն, - ես այդ սյանն այնպիսի մի գիշերերգ երգեմ, որ քեֆը գա: Մենակ թե հեռու կանգնեք, թե չէ բոլորիդ կճզմի:
Սյան մոտ կանգնած մարդիկ շտապ հեռացան: Հրապարակի ամբոխը մեկեն այնպես ծփաց, ինչպես ծովը՝ ուժեղ քամուց: Եվ այստեղ վերջապես Ջելսոմինոն սյան վրա, գետնից մի երկու մետր բարձր, տեսավ կատվի իրեն այնքան ծանոթ երեք ոտնանի պատկերը:
- Կաղլիկ, - բացականչեց նա, և նրա սիրտն անմիջապես թեթևացավ:
Նկարը ցնցվեց, նրա գծերը ծռմռվեցին, բայց էլի ամեն ինչ մնաց անշարժ:
- Կաղլի՜կ, - ավելի բարձր կանչեց Ջելսոմինոն: Այս անգամ ձայնը թափանցեց մարմարի մեջ, հաղթահարելով նրա դիմադրությունը:
Կաղլիկ-կատուն սյունից պոկվեց և կաղալով ցած թռավ:
- Ինչքա՜ն ուրախ եմ, ինչքա՜ն ուրախ եմ, - մլավեց նա Ջելսոմինոյի այտը համբուրելով: - Եթե դու չլինեիր, ես այդպես էլ կմնայի այս սյան վրա և վերջիվերջո անձրևները կջնջեին ինձ: Բոլորը գիտեն, որ ես մաքրություն սիրում եմ, բայց չէի ուզենա շատ լվացվելուց մեռնել:
- Իսկ ես ինչի՞ համար եմ, - լսվեց Բանանիտոյի ձայնը: Բանանիտոն արմունկները գործի դնելով, սրան-նրան քացի տալով, վերջապես հասավ մեր ընդհանուր բարեկամներին: - Եթե այդպիսի դժբախտություն պատահի, ես նորից կնկարեմ քեզ, և դու առաջվանից ավելի գեղեցիկ ու ավելի լավը կլինես:
Մեր երեք բարեկամները, որ հենց նոր հանդիպեցին, այնքան բան ունեն իրար պատմելու, որ ավելի լավ է հանգիստ թողնենք նրանց:
Իսկ սյո՞ւնը:
Դե ո՞ւմ կարող է խանգարել սյունը: Նրա վրայի սուտը մարդկանց կհիշեցնի այն ժամանակները, երբ երկիրը ղեկավարում էր անամոթ մի խաբեբա, և բավական էր մի լավ երգված երգ, որպեսզի նրա թագավորությունը հօդս ցնդեր:

Գլուխ քսանմեկերորդ

Միտքս, կարծեմ, կռահեցիք մինչև վերջ,
Չի կարելի կռվով լուծել ոչ մի վեճ:

Մեր պատմությունը լրիվ կավարտվի, եթե իմանաք այն երեք թերթիկների բովանդակությունը, որ ես մոռացել էի գրպանումս, երբ շտապում էի վերջացնել քսաներորդ գլուխը: Դրանք իմ նշումների վերջին թերթիկներն էին, այն նշումների, որ կատարում էի, երբ Ջելսոմինոն պատմում էր խաբեբաների աշխարհում ունեցած իր արկածները: Ահա տեսնում եմ, որ այդ թերթիկներից մեկի վրա գրված է, թե Ջակոմոնի հետագա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ: Դրա համար էլ ես ձեզ չեմ կարող ասել՝ նա կարգին մարդ դարձա՞վ, թե՞ ծովահենի ոտքերը նորից իրենց տիրոջը դուրս բերեցին վատ ճանապարհ:
Մյուս թերթիկի վրա գրված է, որ թեև Ջելսոմինոն ընդհանուր առմամբ շատ գոհ էր այն բանից, ինչ որ արել էր, սակայն ամեն անգամ հրապարակով անցնելիս իրեն անհարմար էր զգում այն մարդու նման, որի կոշիկի մեջ քարի կտոր է ընկել:
- Արժե՞ր թագավորական պալատը փուլ տալ և ավերակի կույտ դարձնել, - ինքն իրեն հանդիմանում էր նա: - Միևնույն է, Ջակոմոնը կփախչեր, եթե ես սահմանափակվեի միայն պատուհանների ապակիները ջարդելով: Եթե այդպես անեի, հետագայում բավական էր միայն ապակեգործ կանչել, և ամեն ինչ նորից կարգի կընկներ:
Որպեսզի Ջելսոմինոն ազատվեր իրեն տանջող «քարի կտորից», օգնության հասավ Բանանիտոն: Նա վերականգնեց պալատը յուրովի՝ մի քանի թերթ թղթի և մի տուփ ներկի միջոցով: Ընդամենը կես օր ծախսեց դրա վրա և նույնիսկ մոռացավ վերին հարկում պատշգամբ նկարել: Երբ վերին հարկում վերջապես պատշգամբ հայտնվեց, քաղաքի բնակիչները Բանանիտոյին խնդրեցին բարձրանալ ու ճառ ասել:
- Լսեցեք իմ խորհուրդը, - պատասխանեց Բանանիտոն, - ավելի լավ կլինի օրենք ընդունեք, որ այս պատշգամբից ճառ ասելը արգելվի: Բացի այդ, ես նկարիչ եմ: Եթե դուք այդքան ուզում եք ճառ լսել, դիմեք Ջելսոմինոյին:
Այդ ժամանակ պատշգամբում հայտնվեց Կաղլիկ-կատուն և մլավեց.
- Մյա՛ու:
Ներքևում սկսեցին ծափահարել և այլևս ոչ ոք չխնդրեց, որ ճառ ասեին:
Ահա ես տեսնում եմ, որ ուրիշ թերթիկի վրա գրված է, որ Մորաքույր Եգիպտացորենին նշանակեցին անտուն կատուների ինստիտուտի դիրեկտոր: Ի՞նչ կա որ, որոշումն արդարացի է: Նման մի դիրեկտոր լինելու դեպքում ոչ ոք չի կարողանա ստիպել, որ կատուները շան նման հաչեն: Ռոմոլետան նորից սկսեց դպրոց հաճախել, և այսօր նա, երևի, նստած է ոչ թե աշակերտական նստարանին, այլ ուսուցչի սեղանի մոտ: Այս ընթացքում նա անպայման մի լուրջ ուսուցչուհի դարձած կլինի:
Եվ ահա, վերջապես, ամենափոքրիկ թերթիկի վրա ես տեսնում եմ, որ գրված է. «Պատերազմը վերջացավ 1:1 հաշվով»:
Պատկերացնո՞ւմ եք, քիչ էր մնում մոռանայի պատերազմի մասին ձեզ պատմել:
Դա պատահեց Ջակոմոնի փախուստից մի քանի օր հետո: Իր հպատակներից թաքուն, հույս դնելով այն թնդանոթների վրա, որ իր կարծիքով պետք է նկարեր Բանանիտոն, նա պատերազմ էր

հայտարարել հարևան պետություններից մեկին: Բայց այդ պետության ժողովրդի հետ կատակ անել չէր կարելի: Նրանց բանակն իսկույն արշավանքի դուրս եկավ, որպեսզի պաշտպանի իր հայրենիքը:
Բայց մենք բոլորովին էլ պատերազմ չենք ուզում, - ասում էին նոր մինիստրները: - Մենք Ջակոմոնի նման չենք:
Մի լրագրող այդ կապակցությամբ որոշեց հարցազրույց ունենալ Ջելսոմինոյի հետ, որը երաժշտությամբ էր զբաղված և որոշել էր վերջապես հանդես գալ իսկական համերգով:
- Պատերա՞զմ, - հարցրեց Ջելսոմինոն: - Առաջարկեք հակառակորդին դադարեցնել պատերազմը և դրա փոխարեն ֆուտբոլի մրցում կազմակերպել: Գուցե արդյունքը լինի այն, որ մի քանի հոգի կցավեցնեն ծնկները, բայց, բոլոր դեպքերում, հարցը կլուծվի առանց արյունահեղության:
Բարեբախտաբար, այդ գաղափարը հակառակորդին դուր եկավ, որը վերջին հաշվով նույնպես կռվելու ցանկություն չուներ: Ֆուտբոլի հանդիպումը տեղի ունեցավ առաջիկա կիրակի օրը:
Ջելսոմինոն, հասկանալի է, իր թիմի համար էր «ցավում» և այնպես տարվեց, որ գոռաց «Տուր, տուր», որից գնդակն անմիջապես թռավ դեպի հակառակորդի դարպասը, ինչպես այդ եղավ, եթե հիշում եք, նրա հայրենի գյուղում:
«Ոչ մի կերպ չի կարելի թույլ տալ, որ այս պատերազմը վերջանա խարդախ հաղթանակով, - անմիջապես իր համար որոշեց Ջելսոմինոն: - Այստեղ ֆուտբոլ են խաղում և ամեն տեսակի մեքենայությունները խաղի կանոններով արգելված են»:
Եվ նա անմիջապես մի գոլ էլ մյուս դարպասը խփեց: Նրա փոխարեն դուք էլ երևի նույն ձևով վարվեիք: